



021-0007

Parsons

1979-12  
A.R.A.R.@

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Վ. ՕՇԱԿԱՆ . . . . . Ցանկապատ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ . . . . . Կնագողը
- Է.Գ. ՄԵԺԵԼԱՅՏԻՍ . . . . . Հայաստանի քաղաք
- Ն. ՎԻՐԱՊԵԱՆ . . . . . Երեկ տեղի էլայ...
- Կ. ՇԱՀԻՆԵԱՆ . . . . . Համայնագում
- » » . . . . . Տապանագիր երիտասարդ ու տարագիր  
հերոսի մը
- Կ. ԱՐՄԵՆԵԱՆ . . . . . Անապահովութեան հանգրուաններ
- Ա. ՃԻԻՂԵԱՆ . . . . . Ծերութեան դէպք
- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ . . . . . Հերոսան Հէս
- \* \* \* . . . . . «Ռանչպարհեր»-ու ծննդոցը
- \* \* \* . . . . . Ռ. Գրիգորեանի յորիւնանը
- «Ռանչպարհեր» 1979ի բովանդակութիւնը



Հունիս 2010

67-2002

20554-114

# Բազին

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ և ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԸ. ՅԱՐԻ. ԲԻՒ 13 ԴԵԼԵՆՄԻՍԻ 1979 ԳԷՆԵՐԱԻՐ

Վ. ՕՇԱԿԱՆ

### Ց Ա Ն Կ Ա Պ Ա Տ

*Վահե Օշական, որ ներկայիս Ամերիկա էր գտնուի եւ կը դասախոսէ փենսիլվանիա համալսարանին մէջ, ամբողջացուցած ու հրատարակած թեան յանձնած է բանաստեղծութիւններու իր չորրորդ հատորը՝ «Անագանգ»:*

*Այս նոր գործին մէջ տեղ գտած որոշ բանաստեղծութիւններ կը զարնուին սփիւռքայայտ մեր կեանքի կարգ մը երեւներուն, իսկ մեծ մասը կը շուրթի գուտ մարդկային հարցեր:*

*«Անագանգ»ը հրատարակ է՛կէ 1980ի գարնան:*

Աղամ դժոխքի խենթանոցը կը ծնէր Շարաք գիշեր արձակուրդին  
սամանայքը շոթայակապ դաստակին՝ ու փնտուրով բանալին  
վրան հակող դոմապանի աչքի սղտար ցոլին մէջ  
:Քարելունի ցփուսիի մը հոլանի, անել փառաց միճշու սեր:

«Կեանքը ո՞ր ծայրէն կը սկսի՝ որ պարսպ տեղը պոչ չընձնէ այս ցարտին»,  
«Ձեմ գիտեր», ըսաւ հայրս՝ բայց արդէն ուշ էր,  
բառի արմատ գիս կը եզմնի, Լսուքնի օճերով արձանացիր՝ նախագաւիթ  
կը սպասեմ,  
թէ՞ սլացիկ փարտաղար՝ արգանդ չունէր սկիզբէն, այ ո՞ւր ծամադրուէի՞նք:

Պարոյկի կեռ ազի քիմէն կը քփրտանք,  
ծարաւի ծով մեզ կը սպասէր՝ փախուստ չկայ,  
պիտի կախուիմք շուարումի պարտակապէն, մի՛ կտրէք,  
մենք ենք մերին ժամանակը, ժամագործը ու բայը:

Բայց  
կլոր-կլոր գնա կը դառնայ ամպնովանին՝ քոնցէ՛ք,  
ամէն կողմ սեւ՝ քայլ մը միայն պիտի մնայ մինչեւ վերջ.  
մահէն առաջ շշուկներու ցաւին մէջէն քափօրները քայնցին  
ու չհասանք դեռ առաջին իսկ հարցումին

շրթունքներու հանդիպումին՝ նստարանին վրայ ինկանք,  
դուռներ վեցին կը գոցուին՝ վրան խաչուիմք, որ արգիլենք  
հեռուներէ խավազները. կը լսուի ծերպի կառչքը, գլխու պտոյտ  
բսն մը սնդուլ կը հեռանայ կը մօտենայ՝ բայց չի սպասեր

երկաթ դուռը մի՛ կզպէք, դաշտերու մէջ բանտարկուած խրտուիլազը  
պարիսպ պատի չուսնէ կախ՝ ոտքեր գետին չեն դպիր,  
միայն քէ պարագիծը երկվայրկեան մը յստակ ըլլայ, մի՛ գորնէք,  
կարելի է գրաշարը կ'արթննայ կը հասկնայ կը պատմէ

ինչպէս  
յարճանուտի եզերքին պիտի շշմինք մինչեւ վերջին երեկոյ  
ցիցեր, նստեր գիւ կը հիւսեն միսքի՛ք ձեռքեր խենթերէն  
մշուշի մէջ սոյլը կ'երգէ. հորիզոնը պիտի շրջինք միս-միմակ  
երկիր՝ երկինք, երկու կողեր իրար յեներ կոյր ու խուլ

ու այլանդակ՝ քաշկատուող սեւ պարագիծ  
լոյսի շեղքի կռնակէն արինւլուայ կը գայթի ոտքի կ'ելլէ կը փլի  
ազրերգութեան ծաղրանկար խամանիկի կը խնդամ  
բառեր քառեր չոր գնտանի լուսամուտին  
Տան Գիշորը կը հեզմեն ու կը կանչեն կը փախին

բակէն տղեկ պզտիկ կլոր հայելիով  
արեւու բիր այգի պատին կը խաղայ,  
փռչի փշրանք արցունքին մէջ գիւ կը խեղդէ  
քարիսքներու օքոքարը գետին տակէն կ'երեւի  
կը տարտայ կը պղտորի պատուած պատտառ մէջէն կ'անցնիւ

և ու առաջ կը կարկտեն ձգախճճե՛տ ապօրիններ  
 երկու կողմէն ջղուտ հիւսներ՝ անցքը տակաւ կը գոցեն,  
 մութին մէջէն ձեռք կ'երկարեն, «ես դեռ ողջ եմ» կը կանչեն,  
 պէտք է վառենք գիշեր-ցերեկ բոլոր, բոլոր լոյսերը,  
 կարելի է չենք ծերամար մեր շուքերը հաւաքելէն

ամէն գիշեր մեզմէ գաղտնի սեւ արեւ մը կը ծագի  
 ու կը կարծանք մինչեւ առտու՝ սուտ լոյսերու շողումէն,  
 հոգեվարքի վտիտ ծիլեր մուշլ մամուռ ժայռերու տակ  
 յիմար յոյսեր, նիւար կոյսեր կը պառաւնան մինչեւ գիշեր,  
 քալէ, քալէ՛ յաւարկաւոր՝ անտէր սոված փիններու բերանները կը հատին

ազիւն-անդին անքիւ սարդի ցանցի ծայրին պրկուի  
 պէտք է գոցել դուռ-պատուհան, որ չվախին վայրկեաններու անհուններ  
 խորթափելով հանած-վարած քիթին տակէն հեզանելով  
 կերպարանքին ինքնիր հոտին վտիտ շաւիկն ոտքի հետքին եզերքին  
 գանձան բերել պաղատագին առաջ նետեր

մինչ կը հառնիմ գիտակցութիւն ինքզինքիս վիճի շաւիկին հազիւ կտուր  
 շաւիկ ինկեր կը կարուի հորիզոնի կտոր կարկտէ քզիկ-քզիկ  
 ցանկասպտոսին վրայ դրուած:

ՎԱԿԻ ՕՇԱԿԱՆ

15 Յուլիս, 1979 Ռէտոնըր

Ս. Ս Ա Ն Ի Ն Ե Ա Ն

**Կ Ն Ա Գ Ո Ղ Ը**

Քաղաքային այգում ես երկու անծանօթների հետ նստել էի մի նստարանի վրայ եւ հանգստանում: Նստարանակիցներին նա ով ինձ մօտ էր նըստել՝ մի շատ հաստ մարդ էր: Նա մի մեծ թաշկինակով իր լայն դէմքն էր սրբում ու հառաչում: Ես կարծում էի, որ նա տաքից շատ էր նեղւում: Երկրորդ նստարանակիցս նստել էր հաստ մարդու կողքին եւ թերթ էր կարդում: Երեքս էլ լուռ էինք: Մենք իրար չէինք ճանաչում:

Ես պատրաստում էի ելնել տեղիցս եւ դնալ, երբ կոկոզավիղ մէկը եահաւ, կանկնեց հաստ մարդու առջև, եւ առանց բարեւ-բարի լոյսի նրան առաց.

— Դու մի ստոր արարած ես...

Հաստ մարդը, որ այդ ժամանակ նորից երեսն էր սրբում, հ'լ չըարու-նակեց, հենց այդպէս էլ թաշկինակը երեսին կպցրած սկսեց կոկոզավիղն նայել:

Կոկոզավիղը մի բարձրահասակ ու բարակ-բարակ մարդ էր եւ այնքան Քոչլ էր երեւում, որ թւում էր, եթէ քամին մի քիչ ուժեղ փչէր, թղթի մի կտորի պէս նրան վեր կը բարձրացնէր եւ կը տանէր փողոցների որեւէ մի անկիւնում եւ դիպչելով դիմացի պատին՝ վար կը նետէր:

— Ես ասացի, որ դու մի ստոր արարած ես, լսեցի՞ր, — նորից խօսեց կռուազան կոկոզավիղը:

Հաստ մարդը նորից ձայն չհանեց, այլ՝ կոկոզավիղն էր նայում լը-փոթուած:

— Now, waite a minute! ,— չղիմացայ եւ ասացի կոկոզավիղին.— դու այս մարդուն վիրաւորում ես, անպատում, երբ այս խեղճ մարդը քեզ չի պատասխանում:

Հաստ մարդն իմ նստարանակիցն էր, եւ ես պէտք էր որ նրան պաշտպանէի:

— Խեղճ մա՛րդ, — գայրոյթով հաստ մարդուն նայեց կոկոզավիղը,— լու խեղճ մարդ ես ճարել... Դու դիտե՞ս, թէ նա ինչ է արել...

— Ես չգիտեմ, թէ նա ինչ է արել, — ասացի:

— Անշուշտ չես իմանայ: Որտեղի՞ց իմանաս: Նա մի այնպիսի son-of-a-bitch է, որ երբեք իր կատարած աղտոտ գործերի մասին ոչ ոքի ոչինչ չի ասում:

— Բայց դու ասա, թէ ի՞նչ է արել նա, — հարցրի:

— Նա իմ կնոջը խել է իմ ձեռքից: Եւ ո՛չ միայն իմը, այլեւ՝ ուրիշ-  
ներինը: Ելել է ու բաց թողել:

— Բա՛հ, — գարմացայ էս, — այս հաստ մա՞րդը:

— Այո: Նա մի աղտոտ կնապող է: Պիղծ: Զիգօյօ...

— Ես չեմ հասկանում, թէ ինչպէս այս հաստ մարդը կարողացել է  
քեզ պէտ մի գեղեցիկ տղամարդից խել քո կնոջը, — ասացի:

— Զգիտե՛ս, — հարցրեց կոկողավիզը:

— Ո՛չ:

— Նա շողոմ լեղու ունի: Կանայք էլ...

— Այդ օգնօ՛ւմ է, — հարցրի:

Կոկողավիզը մի արհամարհական հայեացք նետեց վրաս, կարծես ցան-  
կանալով ասել, թէ զայդ ինչ աղուչ մարդ էս եղել դու, որ մինչեւ հիմա  
այդ բանը չես հասկացել:

Ես չըջուեցի դէպի հաստ մարդը ևւ նրան նայելի յանդիմանական:

Հաստ մարդը, դեռ թաշկինակը ձեռքին, թեւեւը բացեց խելճ-խելճ  
ևւ, առաջին անգամ լինելով՝ խօսեց.

— Այդպիսի բաներ պատահում են...

— Բայց նորից, — մի բողոքական պատուելիի բարոյապահանջ խթ-  
տութեամբ ասացի ևս:

Հաստ մարդն իր կոշիկի ծայրով օկեց գետինը փոքրիկ: Բայց, երբ  
նկատեց, որ ես բարոյազէտի յամառ յանդիմանութեամբ դեռ իրեն եմ դի-  
տում, կմկմաց.

— Անտէր մնա՛ սէրը... Մէրը որ կայ՝ մի ուրիշ բան է...: Երբ այն  
մարդու փորն է մտնում, էլ ինչ անում ես դուքս չի գալիս...

— Ուրեմն դու սիրոյ զրգումով ես այս մարդու կինը ձեռքից խել,  
այլ ոչ, տանք, կրթի կամ այլ պատճառներով, — իմ անողոք հարցաքն-  
նութիւնը մի քիչ մեղմացրի ևս:

— Այո: Միայն ու միայն սիրոյ, — ասաց հաստ սիրահարը, բայց  
թուաց վարանստ:

— Մո՛ւտ է: Միայն կրթի, — բղաւեց կոկողավիզը, — իմ կինը շատ  
գեղեցիկ է: Մի հրապուրիչ կահ...

Ես նրան նայելի հարցական:

— Ամբողջ Ամերիկայում ոչ մի կին չունի նրա մարմնական գեղեց-  
կութիւնը: Նրա լուցկու կոթի պէս բարակ սրունքները, անդոյ կոնքը, նրա  
տափակ կուրծքերը, նրա գեղին մազերը...

— Քուրբա, — յանկարծ խօսեց թերթ կարդացող մարդը, որ մինչ այդ  
իր լրագրի էջերն էր յետ-առաջ դարձնում բռնիկային:

Մենք չհասկացանք, թէ լրագիր կարդացող մարդը այդ շարքաստիկ  
բառը թերթում կարդաց, թէ այն վերաբերում էր կոկողավիզի նախկին գե-  
ղեցկուհի կնոջը:

Ես հազիւ ծիծաղս զսպելի: Եթէ ծիծաղէի՝ կորցրած կը լինէի անկոչ  
գաւառորի հեղինակութիւնը: Ի վերջոյ, խնդրոյ առարկայ չքուրբա գեղեց-  
կուհին առաջներում պատկանել էր աղերսարկու կոկողավիզին, հիմա էլ  
պատկանում է ամբաստանեալ հաստ մարդուն: Ու թէև կոկողավիզը զրծ-

կամութեամբ էր ընդունում, որ ես միջամտել էի իր անձնական գործին, այդուհանդերձ, ես դարձայ ղէպի հաստ մարդը եւ ասացի՝

— Ինչքան էլ այդ կինը գեղեցիկ լինէր, ինչքան էլ դու սիրահարուած լինէիր նրա վրայ, նորից դու նրան չպիտի խլէիր այս ցեճքլմէճի ձեռքից: Թու՛հ, թո՛ւհ, թո՛ւհ...:

Հաստ մարդը նորից ձեռքերը րացեց մեղաւոր:

— Ընդունել, որ դու մեղանշել ես, այդ բաւական չէ, — ասացի հաստ մարդուն:

— Էլ ի՞նչ կարող եմ անել, — հարցրեց նա:

Ես ցուցամտաւ գրեցի քունքիս եւ մտածեցի՝

— Դու պէտք է այս ջենթլմէնին վերադարձնես իր կնոջը, — ասացի:

— Ո՛ւհ, այդ գժուար մի բան է, — ասաց հաստ մարդը, — բոլոր ղէպերում, ո՛չ հիմա: Ժամանակ է պէտք...:

Ես դարձայ ղէպի կոկոզավիղը՝

— Էլ ի՞նչ կարող եմ անել:

Կոկոզավիղը շատ խիստ բարկացաւ.

— Ա՛յն՝ որ էլ չխառնուես իմ անձնական գործին:

Թերթ կարգացող մարդը թեթեւօրէն հազաց: Կարծում եմ, որ համաձայն գտնուեց կոկոզավիղին:

Դէժքիս վրայ այնպիսի՛ արտայայտութիւն իջաւ, որ ունենում են նըրանք, որոնց վատտակը ո՛չ միայն չի գնահատւում, այլեւ ոչնչացւում է:

— Մի՞թէ այդ է քո շնորհակալութեան խօսքը, — ասացի կոկոզավիղին:

Սակայն կոկոզավիղը ոչ մի ուշադրութիւն չդարձրեց իմ ասածին, այլ դարձաւ հաստ մարդուն եւ ասաց.

— Դու մի creep ես: Ո՛ւհ, դու մեծ ես մի սողուն լինելու համար: Դու գովէ՛լ ես: Զրային դժմէ՛լ: Դու ճահճախտեր ես ճարակում եւ ազատուում ետեւի ստեղծող...:

Հաստ մարդը ձայն չհանեց:

Կոկոզավիղը ծիծաղեց չարախինդ: Մտածեց եւ, իր աննշան ձեռնաթաթերը բռունցք դարձրած՝ մի կոփամարտիկի պէս սկսեց իր բարակ ստեղծի վրայ վեր-վեր ցատկոտել եւ հաստ մարդուն մարտի հրաւիրել:

— Արի՛: Արի՛, որ մի քանի հաս հասցնեմ քո հաստ փորին:

— Վա՛յ, — աղաղակեց հաստ մարդը եւ երկու ձեռքով փորը բռնեց:

Տպաւորութիւնն այն եղաւ, որ կոկոզավիղը արդէն հարուածեց հաստ մարդու փորին, հենց նրա նստած տեղում: Ես այդ շտեռայ: Սակայն ես ուղիւստ էի, որ կոկոզավիղը մի քանի անգամ հասցնէր հաստ մարդու փորին, որպէսզի նա հասկանար, թէ ինչ է նշանակում ուրիշի կնոջը նրա ձեռքից խլել: Բաներ կան, որուն համար լաւ է, որ մարդիկ իրենք իրենց ձեռքով դատ ու դատաստան տեսնեն, քան ցամքած ուղեղով դատաւորներին դիմեն: Սակայն հաստ մարդը վախեցաւ եւ տեղից չելաւ:

Կոկոզավիղը դադարեց ցատկոտելուց: Դառնօրէն ծիծաղեց, նայեց հաստ մարդուն, ձեռն արհամարհական շարժեց նրա վրայ եւ թողեց-գնաց:



Բայց երկու քայլ շարած՝ շրջուեց եւ ասաց այն զգուելի բառը, որ այնքան վիրաւորական է մի տղամարդու համար:

— One day I'll...

Եւ ասեցի կոկոզավզին:

Հաստ մարդն արագորէն սկսեց թարթել աչքերը: Ես նրան էի նայում եւ, ոչ մի կերպ չէի կարողանում պատկերացնել դորձողութեան այն տեսարանը, որ կոկոզավզին առաջարկեց այդ մարդուն: Նա ամաչեց եւ դէմքը շրջեց ինձից: Ես էլ դէմքս շրջեցի:

Երբ կոկոզավզը դնաց վերջապէս, հաստ մարդը դիմեց թերթ կարգացող մարդուն եւ ասաց.

— Տեսա՞ր, թէ այդ ստահական ինչպիսի լուտանքներ թափեց դիմեա:

— Այո, — ասաց լրագիր կարդացող մարդը, շարունակելով չըջնել թերթի էջերը:

— Կեանքը դառնացել է...

— Դու ես մեղաւոր, — ասաց թերթ կարդացողը:

— Ե՞ս: Ինչո՞ւ:

— Դու պէտք է ելնէիր տեղիցդ եւ մէկ հատ հասցնէիր նրա ոսկրացած ծնօտին...

— Մի՞թէ, — վախեցաւ հաստ մարդը:

— Այո: Եթէ դու ուրիշ կնոջը փախցնել դիտես, այս նուէ պիտի կարողանաս պաշտպանել ալիքիսի մի գտնած յափշտակութեան քո արտաքը: Թերթ կարդացող մարդը զգանձ» բառը հեղանջով արտասանեց:

Հաստ մարդը մտածեց եւ ասաց թոյլ-թոյլ.

— Ես չեի կարող այդ ստահակին հարուածել:

— Ինչո՞ւ:

— Նա կարող էր ոտքը բարձրացնել եւ մի աքացի հասցնել իմ փորին: Արտաջին անգամ լինելով՝ թերթ կարդացող մարդը նայեց հաստ մարդու կողմը եւ քմծիծաղ սոււեց.

— Ինչ կայ որ, թող հոսցնէր: Ես չեմ կարծում, որ նրա բարակ ոտքի աքացին կարող էր մի որեւէ վնաս հասցնել քո այդ հաստ փորին:

— Այդ մի ասէք, իմ փորը շատ զգայուն է:

— Փորձ ունէ՞ք:

— Այո: Մի օր կինս մի աքացի հասցրեց փորիս եւ ես երեք օր հիւանդ պառկեցի:

— Այն կի՞նը, որ դու խել էս այդ սինլթորի ձեռքից:

— Այո:

— Քեզ այդպէս էլ պէտք է:

— Բոլորն այդպէս են ասում: Ոչ ոք ինձ չի համակրում, խղճում, —<sup>11</sup> տնքաց հաստ մարդը եւ սկսեց դիտին օրօրել վշտահար:

Ես ոտքի ելայ, որ գնամ: Լրագիր կարդացող մարդը թերթը ուրեց, գրեց անութիւն եւ նոյնպէս ոտքի ելնելով ասաց հաստ մարդուն.

— Հոգ տարէք ձեր այդ ազնուաշուք փորին: Յարգանքներս ձեր աքացի տուած կնոջը...

Թերթ կարգացող մարդը ոչորած լքողի ծայրը կպցրեց իր դիտարկի՝ եղբին՝ որպէս մնաք բարովի նսանն.

— Ո՞ղջ լեռուք...:

Երբ Թերթ կարգացող մարդը հեռացաւ, հաստ մարդն ինձ պահեց եւ դանդաղաց.

— Ամէն մարդ ինձ վերաւորում է, արդարւո՞ւմ, սպառնում եւ աքացի տալիս իմ շատ դժայտն փորին: Ի՞նչ եմ արել ես:

— Դու ուրիշների կանանց եւ խելջահան անում եւ յետոյ բաց թողնում: Այդ լաւ չէ:

— Նրանք են ինձ խելջահան անում...:

— Այդ կոկոզավոր կնոջը պահելո՞ւ ես, թէ բաց թողնելու:

— Կարծում եմ ժամանակն է, որ բաց թողնեմ, — ասաց նա այնպիսի անտարբերութեամբ, որ կարծես շապիկը փոխելու մասին էր խօսում:

— Ինչո՞ւ ես ուզում բաց թողնել:

— Նա գեղեցիկ է, խօսք չունեմ, բայց աքացի տալու պակասութիւն ունի:

— Դու ի՞նչ պակասութիւններ ունես:

— Ո՞չ մի: Ես պակասութիւններ չունեմ:

— Բայց դու հրապուրում ես, փախցնում ուրիշների կանանց:

Հաստ մարդը շարունակելով թաշկինակով որբել իր իւղոտ աչքերը, մեծ դժժքը, հաստ վիզն, ասաց հաստատօրէն.

— Ես դուր եմ գալիս կանանց եւ այդ հանդամանքը երջանկութիւն է բերում նրանց...:

— Բայց ընտանիքներ եւ զայգայում, — նրան ընդհատեցի ես:

— Այդ ընտանիքները նախապէս են զայգայում եղել... զժբախտներ են այդ կտեսաք: Նրանք ինձ մօտ երջանկանում են...:

— Բայց ժամանակաւորապէս: Ինչո՞ւ տեւական չես դարձնում այդ երջանկութիւնը:

— Ձի կարելի: Պէտք է շատերին բաժին հանել այդ երջանկութիւնից:

— Ինչո՞ւ են կանայք քեզ սիրում: Դու մի գեղեցիկ տղամարդ չես, — հարցրի:

— Այլանդակ էլ չեմ: Գեղեցկութիւնը կարեւոր էլ չէ: Կարեւորը մարդու հոգու գեղեցկութիւնն է եւ...:

Ես նրան չէի հաւատում: Ես կարծում էի, որ նա, ինչպէս ամերիկացիներն են ասում, մի dirty old dog էր, դրա համար էլ ընդհատեցի.

— Լաւ չէ, որ ուրիշների մեռելից խլում ես նրանց կանանց:

— Ես չեմ խլում: Այդ կանայք իրե՛նք են վազում իմ հոտից: ...Յետոյ էլ... յետոյ էլ, ես մեծ բաւականութիւն եմ զգում դրանից...: Այդ ես զարկութիւն եմ համարում...:

— Ես չստեայ զո զարկութիւնը: Կոկոզավոր քիչ առաջ հազարումի հայհոյանք թափեց քո դիմին, իսկ դու նոյնիսկ մայն չհանեցիր:

— Այդ կոկոզավորն իմ նախկին բարեկամն է: Ես լաւ եմ ճանաչում նրան...: Նա մի անուշիկ մարդ է...:

— Կոկոզավիզն ասաց, որ դու շողոմ լեզու ունես եւ ազոտու կնազոզ ես...

Նա արագ-արագ թարթեց քրտինքից պղտոր աչքերը:

— Ասացի, որ կանայքն են մազում իմ ետեւից...: Ամուսնացած կանայք...: Նրանք ինձ համեմատում են իրենց ամուսիններին հետ եւ տեսնում են, որ ես լաւ մարդ եմ, իսկ իրենց ամուսինները՝ հրէշներ: Այդ կոկոզավիզն շատ դէշ էր մարում իր նախկին կնոջ հետ: Ես այդպէս չեմ...: Ես քաղցրալեզու եմ: Մարդիկ դրան շողոմ լեզու են ասում...: Ի՛նչ ուզում են թող ասեն...: Կանայք քաղցրալեզու տղամարդկանց են սիրում...: Մեղրածուկ բառեր...: Ես դիտեմ այդ զաղտնիքը...: Ուրիշներն աջացի են տալիս այդ զաղտնիքին եւ փախչել տալիս իրենց կանանց...: Ես այդ կանանց տուն եմ տալիս...: Ուրիշները ցնցում են խնձորենիները, իսկ ես այդ ցնցումից թափուած խնձորներն եմ հաւաքում...:

— Ինչո՞ւ ես նստել այստեղ: Ինչո՞ւ տուն չես գնում, — հարցրի:

— Իսկ դուք ինչո՞ւ էք հարցնում այդ մասին, — իր հերթին հարցրեց նա:

— Որովհետեւ չեմ ուզում, որ այդ կոկոզավիզը յետ գայ եւ ձեզ նեղութիւն պատճառի, — ասացի:

— Այսօր նա է՛լ ետ չի գայ: Նա գնաց կոնծելու: Ասեմ նաեւ, եւ թող խօսքը մէջերնիս մնայ, վճռել եմ կոկոզավիզի կնոջը թողնել: Արացի է տալիս: Հիմա մի նոր կնոջ պատրաստութիւն եմ տեսնում: Ո՛ւր որ է այս նրատարանին կը գայ նստելու մի զոյգ: Մարդ ու կին: Կինը լաւն է: Նրանք հաշտ չեն իրար հետ: Կուռում են: Ես կնոջ կողմն եմ բռնում եւ սիրահարեցնում եմ ինձ վրայ: Կարծում եմ շուտով կը սիրահարեցնեմ: Երբ սիրահարեցնեմ, կոկոզավիզի կնոջը կը թողնեմ...:

— Դու մի ահալիք տիպար ես, — ասացի:

Նա ժամանակ չունեցաւ պատասխանելու, որովհետեւ շտապեց ոտքի կանգնել: Նրա նստարանին էին մօտենում միջին տարիքի մի այր եւ մի կին: Կնոջ աչքերում տէր կար դէպի հաստ մարդը:

— Տիկին, ձեզ որ տեսայ, թուաց, թէ ամպերի ետեւից արեւը դուրս եկաւ, — իր իւզոտ բերանից մեղր ծորացրեց հաստ մարդը:

— Նմանապէս... Նմանապէ՛ս... — զուարեացաւ տիկինը եւ նստեց հաստ մարդու կողքին, ծունկ-ծնկան:

— Oh, boy, — հառաչեց տիկնոջ ամուսինը:

Ես ծիծաղեցի եւ հեռացայ:

ՍՈՒՐԷՆ ՍԱՆՆԵԱՆ



Հայաստանի բարեկամ սօսար ղեկավարը անող թիւին մէջ, արուեստագէտի իր շնորհքով ու թափանցածուրեմամբ անպայման առանձին տեղ մը կը զբաղէ լիտվացի բանաստեղծ Էդուարդաս Մեթեկայտի: Հայաստանը եւ մշակութային մեր բարձրագոյն արտայայտութիւնները ըստ հուրթեան ընկալելու Մեթեկայտի շնորհները բացառիկ ըտուելու չափ ուժգին են:

Ստորեւ, ուշագրութեան կը յանձնենք «Հայրենիքի մայն»-ին մէջ իրեն հետ եղած կարճ հարցազրոյցը եւ «Հայաստանի քարեր» բանաստեղծութիւնը, որոնք շաղափար մը կու տան մեր մեծերով ու մտանաւարարը նարեկացիով յափշտակուած այս օտտեային ներքին բարեմարտութեանց մասին:

Ուրիշ առիթով մը պիտի տանք նարեկացիի մասին Մեթեկայտի հատարած խոր ընդհանրացումներէն քանի մը յատկանշական նատուածներ:

### «ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԵՐԿԻՐ Է...»

— Էդուարդ Բեմիամիսնովիչ, Դուք արդէն երկրորդ անգամ էք յիմում Հայաստանում: Հետաքրքիր է իմանալ, ո՞վ է Ձեր մէջ առաջինը սեր արթնացրել զեւրպի Հայաստանը եւ երբ:

— Տակաւին Երիտասարդ, ես արդէն ընթերցել էի հայ ժողովրդի, նրա գրականութեան ու պատմութեան մասին բազմաթիւ գրքեր, ուղեւորուել Իսահակեանի հայրենասիրական ու համամարդկային խոր պոեզիայով: Տաննամեակներ առաջ Մոսկուայում ծանօթացայ ճանաչուած գրականագէտ Էդուարդ Քոֆչեանի հետ, որով սկսուեց իմ կենդանի կապը Հայաստանի հետ: Նա ինձ աւելի մօտիկից ծանօթացրեց Հայ Հնագոյն գրականութեան նմուշներին եւ ձեր ժողովրդի ծանր ու հերոսական պատմութեանը: Առաջին անգամ Հայաստանն ուղիղի ժամեր ու հերոսական պատմութեանը: Առաջին անգամ Հայաստանն ուղիղի ժամեր ու հերոսական պատմութեանը: 1969ին՝ Քուստանեանի ծննդեան 100ամեակի օրերին, որն ինձ վրայ ցնցող տրպաւորութիւն թողեց: Բայց այդ օրերին ամենամեծ յայտնութիւնը նարեկացին էր, Աբարատի չափ մեծ ու անընդհանրիկ նարեկացին: Ետդարձի ճանապարհին սկսեցի թարգմանել (առայժմ ըսյա է տեսել մի հատուած): Զարմանալի դիրք է «Մատենաձ»-ը, ինչքան խորանում եւ բրնազրի մէջ, այնքան աւելի ես զգում անհրաժեշտ տողացու պահար: Նա Դան-

թէին, Շէյքսպիրին, Գէօթէին հաւասար մտածող բանաստեղծ է: Բայց նրան այլ չեղունեքով թարգմանուած տեսնելուց առաջ հայ գիտնականներն ու բանաստեղծները, որպէս օրուայ ինդիք պէտք է տիրանական ջանքեր թափեն «Մատենա»-ի ընդգրկն համարժէք չիտական տողացի թարգմանութիւն ստեղծելու ուղղութեամբ: Միայն զրա շնորհիւ նա կարող է գտնուել նաեւ այլ ժողովուրդների սեփականութիւնը այն բարձրութեամբ, ինչպիսին նարեկացին կայ:

— Ի՞նչ է Ձեր երկրորդ այցելութեան նպատակը:

— Այս այցելութիւնը կրում էր աւելի շատ ստեղծագործական բնոյթ: Առաջին անգամ եղայ Մատենադարանում: Հայաստանը զրքի ու զպրութեան պաշտամունքի երկիր է: Ես խոնարհուեցի Մաշտոցի գերեզմանի եւ Մատենադարանի դէմ գրուած նրա արձանի առջեւ: Ի դէպ, այստեղ ծնունդ էր ստացել «Բարեմարտութեան» բանաստեղծութիւնը:

... Ես կապուած եմ ամբողջ եղով Գիրք սրբոցին, այս լուսաւոր

մագաղաթին,  
Ինչպէս նեման՝ իմ մայր հողին,  
Ինչպէս յայրը՝ Արարատին:

Ինձ վրայ անընդէլի տպաւորութիւն

Քողեցին Հաղրատը, Մանակինը, Սարդարապատը: Իսկ Գեղարդը... Եթէ աշխարհը ժամանակին իմանար, նրան ոչ թէ ութերորդ, այլ Եօթ հրաշալիքներից մէկը կը համարէր: Հաղրատի վանքը, ինձ, որպէս բանաստեղծի, պարտադրեց կապ որոնել ժողովրդի հոգեբանութեան եւ նրա ստեղծած ճարտարապետութեան միջև: Դա ինձ համար նոր, հետաքրքիր ու երակէտային խնդիր է:

— Դուք Ձեր այցելութիւնից յետոյ գրել էիք Հայաստանին նուիրուած բանաստեղծութիւնների մի մեծ շարք: այս անգամ գրեցի՞ք արդեօք նոր բանաստեղծութիւններ եւ ի՞նչ քեմայով:

— Այո, գրեցի բանաստեղծութիւնների նոր, հետաքրքիր շարք, բայց մտայնացումներն աւելի շատ են: Յուսով եմ, երբ վերադառնամ տուն, այդ բոլորը կ'աւարտեմ եւ կը հրատարակեմ իմ նոր «Այստեղ Հայաստանն է» ժողովածուում:

— Ի՞նչ կ'աւելիք ժամանակակից հայ պոեզիայի եւ ընդհանրապէս Ձեր յիշդարձեանք մէջ մեացող ամենավառ տպւորութիւնների մասին:

— Ես աւելի շուտ ծանօթ եմ հայ դասական պոեզիային (Բրիտոպեան «Անթուրդիային», Նարեկացուն, Սայաթ-Նոպային, Քուչակին...): Նորերից ինձ առանձնապէս մօտ է Պարոյր Մեակը: Մեծ հետաքրքրութեամբ եմ ընթերցում Սիլվա Կասյուտիկեանին, Վահագն Դաւթեանին: Ինձ համար մեծ անակնկալ էր Եուրի Երզնկեանի «Ազատը միւրը» Փիլմը: Դա մեծ կիներում քննութիւն բռնող, իրական, ժամանակակից արուեստագէտի ստեղծած գործ է: Մեծ բաւականութիւն պատճառեցին Հայ ճարտարապետութիւնը, Սարդարապատի, Թումանեանի, Հայկ Նահապետի, Գայի արձանները եւ Երիտասարդական պայտալը, որ առաջին հետազոտման պէս ասեաւ օւղենշում է Հայ ճարտարապետութեան վաղը: Երեւանը զեղեցիկ, իր դէմքն ունեցող քաղաք է, իսկ Հայաստանը՝ բանաստեղծների ու բանաստեղծական երկիր: Ես հե-

ռանում եմ, բայց հողով միշտ շարունակում եմ մնալ հայ ժողովրդի հետ: Իմ երազանքն է նորից անդրադառնալ Նարեկացուն, Թարգմանեւ Թումանեանին, Չարենցին, Մեակին, Կասյուտիկեանին ու Դաւթեանին:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐԵՐ**

Քարեր ու քարեր, քարեր ու քարեր, իմալէ երկինք՝ եւ կապոյտ, եւ իրն, Հնագոյն առէր, ձրգ ու լեցնողներ եւ հանգիստ չկայ այսանգ հնարին: Կախ է հնարն իմ ճանճի մէջ, Որսեղի՞ց նրան հանգիստ ու դադար, Մի քայլ եւ անուս դեպի սարերը՝ Վնարի լարերը սկսում են լալ: Երբում է այստեղ պոեզիան մաքուր, ինչպէս արիւնքն իրնց սարերում, Մասան պարզում է ինչ ճեղքեր իր եւ քանակն է քա քալի մէջ փայլում: Ցանում է քեքեւ բանած քա ճեղքից Տրամպարութեան այս պոետական եւ այն երկնային երգում կայայտ: Հարմարացի պէս բացում է ճայթան: Օ, ինչքան է խոր այդ արեւմտական Կասյուտն այս բարձր լիբանց վերելում, Նոյնիսկ կէտն այս մարտնամակեան (Այն, դեպի քրտեղ որ եւ կ'գնում), Այսանգ քեւտար է, ինչպէս քազն: Այստեղ ստույցի լոյս կայ այնքան շատ, Որ խարխուլիով գնում է կոյրի պէս եւ մրտիքան մէջ դափում անբնդհատ: Եւ նայնիսկ գիծը երկրայնական Այսանգ բնկում է կործան կայծակով: Նոյնիսկ երկինքի յատուկ այստեղ Անաստուածօրէն եւ բարձր է, եւ խոր: Այստեղ ինչքան խոր ներգաղթապիւն, Երբեք զրոյնից չի՞մ տեսի այլ տեղ Ու եւ չգիտեմ, արդեօք մի այլ բան Հոգիս աւելի վեր կը բարձրացնէ՞ր: Ասպիքն հիւքայի խաղողների պէս Գիպան ճնարիս լարերին սննդ է տարիտական կեանքն այս մէկէն Հոգուս սղը ուժը եւ վերադարձից: Շնորհակալ եմ, քեզի՞ց, Հայաստան, Քա սար ու լեռներն ինչի՞ր տունն ինձ եւ գաղափարը անսահմանութեան վերադարձին՝ եւ ինձ քա երկնէից: Եւ հարկազոյն քարերը չիկան, եւ էմար քա կասոյս երկնէի, եւ ինձ առեմքն ու առեղծերը քա Սիրուս ու ճնարն սփռնէ՞մ պիտի:

Քարք. Կ. ՄԵԼԻՔԱՆԻՍ

Ն. Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

Ե Ր Ե Կ Տ Ե Յ Թ Ի Ե Լ Ա Յ ...

Այս տարի, այն ալ տարեկիցրին, չեմ գիտեր ինչպէս, բախտս ճերմակ դուրս ելաւ: Թէ ոչ՝ ե՛ս ով, ՎԵՅԻԻ ԵԼ՝ լողը ո՛վ: Մինչ այդ, Ուրբաթ օրերը, երբ բոլոր երիտասարդները տէյթի կ'ելլէին, ես առնը մաքրութիւն կ'ընէի:

Իմ շրջապատիս աղջիկները բարձր ուսումով ազաքը կը փնտռէին, իսկ իմ առաջարկներս կը մերժէին քաղաքավարօրէն...: Այս աղջկան ճետ ալ անանկ պտտահեցաւ, բայց առիկա երեք տարի առաջ էր: Երիտասարդներով տեղ մը Հաւաքուած էինք եւ ինք կ'աւսուցնէր: Երբ խօսակցութեան ընթացքին առտողմագործ ըլլալս հասկցաւ, իսկոյն տեղը փոխեց: Տխրութեամբ նայեցայ հետեւէն: Ասոնք գուցե՛սկան կ'ուզեն, ըսի ինքն իրենս:

Հայ սքուլի վկայականը ասնելէս ետք, արձանադրուեցայ զոլէն: Կ'երեւոյ գուլճը օգտակար եղաւ:

Ինծի առաջին մօտեցողը՝ աստղծագործ ըլլալուս համար քովէս հեռացողն էր, Ենիկէն: Առաջին անգամ սկսաւ միջնորդական խօսիլ, օղէն, տաքէն, պաղէն: Կլիմայական պայմանները երբեք չեն հետաքրքրած դիս, բայց իր ամէն մէկ բառին ճետ սկսայ երկինքին նայիլ:

— Հա, — կ'ըսէի, — հա, այսօր օդը պայծառ է:

Կամ՝ Հակառակը:

Ես բնաւ չէի հետաքրքրուած իր գործով: Անշուշտ տեղ մը կ'աշխատէր: Կարեւոր չէր: Իրեն համար կարեւոր կը

թուէր սակայն իմ գործս: Միշտ այդ մասին հարցումներ կ'ուղղէր:

Օր մը, երբ հղբօրորգիին ձեռքէն բոնած պտոյտի ելած էինք՝ ճամբան հանդիպեցանք իրարու:

— Ի՞նչ գեղեցիկ տղայ է, — ըսաւ ու ծոկով շաքար տուաւ անոր: Վախտանդ Անանեանի «Ուշացած Խոստովանութիւն»-ը կ'աւսուցնէր:

Այլեւս իմաստ չունէր անտնայլը: Հեռաձայնեցի: «Միբող», ըսաւ: Այդ զսիրովնէն ետք, ես կարծես հալեցայ: Այս անգամ բախտս ճիշդ մէջտեղէն ճերմակ զարկած էր: Բախտս ճերմակ: Հաւատալս չէր դար:

— Հիմա ի՞նչ կ'ընես, — հարցուց:

— Հիմա ամաններս կը լուամ, — ըսի:

Ձայնէն պէտրութիցի կը նմանէր, բայց երբ դէմքը վերջիւնէն՝ դարձեալ հալեպցիի նմանցուցի զինք:

— Հալեպցի՞ էք, — հարցուցի:

— Ինչէ՞ն գիտցաք:

— Ձեր դէմքէն:

— Դէմքէն ինչպէ՞ս յայտնի կ'ըլլայ:

Համեստացայ: Ըսի, երբեմն կը պատահի, որ գուշակութիւնս ճիշդ դուրս կու գայ:

Որոշեցինք Ուրբաթ առտու, ո՛չ, Ուրբաթ իրիկուն, ճիշդ ժամը եօթին իր տունը հանդիպիլ: Նախապէս առաջարկած էի ճաշարան երթալ, բայց ինք նախընտրած էր տունը ճաշիլ:

— Ճաշը ես կը պատրաստեմ, — ը-

առւ ան, — յետոյ հարցուց, թէ ի՞նչ կը փափաքէի ուտել:

Տուի սիրած կերակուրներուս անունները:

— Միրով կը պարաստեմ:

Ամբողջ շաբաթ մը միակ նիւթս Ուրբաթ օրուայ մեր պատմական ըսուելու լափ կարեւոր հանգիպումն էր, մա՛նաւանդ՝ որ աղջիկը առանձին կ'ապրէր ու ատկիւմ մեծ առաւելութիւն էր նոյնիսկ բարխաւոր տղու մը հոմար, ո՛ւր մնաց ինծի պէս մէկու մը:

Եկաւ սպասուած Ուրբաթը: Ելայ ճամբայ: Որքան ուրախ էի: Պիտի ուտէի սիրած կերակուրներս, չէ՛յ քէօֆթէ, հետը՝ քսուս, էտքն ալ, կուշտ փորով շարժարարակերի պիտի երթայի, բարեկամուհիի՛ մը հետ...

Վերջին ծայր շտկուած, մաքրուած, յարգարուած էի, բիծ չկար վրաս: Վերջին անգամ ալ, երբ հայեցիին նայեցայ, չեմ դիտեր բժիշկի՛ մը, թէ պատուելիի մը նմանցուցի ինքզինքս:

Ճիշդ մեր որոշած վայրկեանին դարկի դուր: Անպայման ինծի կը սպասէր, քանի որ շատ շուտ բացաւ գուռը: Յարկայիք ժպիտով դիմադրեց զիս եւ առաջարկեց, որ նստիմ ձկնորոյ բազկաթոռին վրայ:

Կր սիրեմ Ամերիկայի այդ «Միրոյ աթոռները»: Երկու հոգինոց, լաւ, յարմարաւէտ աթոռներ են, որոնք կ'ընդունին բախտաւորները:

Ինչ դիմացո նստաւ, ձեռքերը ծունկերուն մէջ զետեղած: Կուզէի, որ մօտս նստի, բայց առաջին առիթով քաշուեցայ անանկ առաջարկ մը ընելու: Կը վախճայի բախտէս: «Ահա, թող այս խօսքն այլ վերջանայ՝ ապա կ'առաջարկեմ», կ'ըսէի մտքէս: Վերջին անգամ, երբ պատրաստուեցայ, հրաւէրս ուղղել՝ տանձայն մը առի՞նք: Մէկը աստիճաններէն վեր կ'ելլէր: Կանչ առաւ ճիշդ մեր դրան առջեւ ու հնչեցուց զանգը: Վարձակալներէն մէկն էր: Ամսալմարը տուաւ զնաց: Ուրախացայ, որ շուտ զնաց: Բայց երկու

վայրկեան հաղիւ անցած, ուրիշ մէկը եկաւ, յետոյ՝ երբորդ մը: Վերջիններուն ստացադիրները յանձնուած պահուն, ուրիշ մը անկուեցաւ դրան առջեւ: Այդ իբարանպումին հասկցայ, որ քան յարկաբաժինոց երկու շէնքերու պատասխանատու է բարեկամուհիս: Միրոս սկսաւ թիրտայ: Ուրիշ չորս անձեր ալ երեւցան: Զղայնութենէս լացս կու գար:

Բարեկամուհիս շատ քաղաքավարութեն կը վարուէր ամէնուն հետ, երբեմն խօսքի ալ կը բռնուէր անոնց հետ, մինչ ես ինքզինքս կ'ուտէի: Ձիւք, բախտս, յաջող օրը չէ՛ին կրնար բերել իրենց վարձքը: Ես ամսալուրին կը ներկայացնէի դրամատոմս տանտիրոջ, իսկ ասոնք դեռ ամսալուրի չեղած իբար անցած էին:

— Մեր վարձակալները այսօր կը վըճարեն, — ըսաւ Եւնիկէ:

Ամէն մեղքիս վրայ՝ փորս ալ իր անօթութիւնը կը դրացնէր, բայց տակաւին մէկը միւսին հտեւէն կու դային: Անցօր դուրբեան մէջ ինկած՝ եկող-դացողներուն հաշիւը կ'ընէի, մասնորոզ, մըտքով հանումը կը կատարէի: Վճարուաննէն այսքանը մնաց: Ակամ էի մտքով հայհոյել:

Դադար եղաւ: Տասը վայրկեանի շտի մարդ յերեւցաւ:

— Հիմա ի՞նչ պիտի ուտենք, — հարցուց յանկարծ:

Չարմացած՝ երեսը նայեցայ: Ըսաւ.

— Օղբ անձրեւոտ ըլլալուն՝ շուկայ չգացի: Պատկերասփիւռի յայտագրերնորու դրքոյի մէջ ծանուցում կայ, թէ մէկ փիմա առնողին հատ մըն ալ ձրի պիտի տան: Հոն երթանք:

Ի՞նչ, ի՞նչ, չկրցայ ըմբռնել ըսածը: Ուրեմն բան մը չէ՞ր պատրաստած: Ի՞նչ էր պիտու թափուածը, տա՞ք ըտեք, պա՞ղ ջուր, բոունցքի հարուստ՞:

— Օ քէյ, երթանք:

— Անձրեւոտ օրերուն դուրս ելլել շատ չեմ սիրեր. բարեբախտաբար այս

պահուն քիչ մը բացուեցաւ օդը:

— Ատիկա դալէս ետքը պատահած պէտք է ըլլայ, — ըսի:

— Շուտ երթանք, անօթի եմ:

Որպէսզի մեզ խնդարող չըլլայ, արագ-արագ իջանք վար: Արագ քշեցի ինքնաշարժը. հասանք: Երեւի ձայնափուռը գեղեցիկ եղանակ մը կը հազորդէր, քանի որ երբ իջանք՝ բացադանչեց:

— Ի՞նչ գեղեցիկ նուազ էր:

— Աստուած իմ...

Գոնէ մէկ կէտի մէջ համաձայն էինք իրարու հետ, անօթութեան: Անսպարանքով մտանք ներս: Նստեցանք սեղանի մը շուրջ, իրարու աւելի մօտիկ:

Ես քիչ մը հօրս բնաւորութենէն ունիմ, շուտով կը հաշտուիմ կացութեան հետ: Ամէն ինչ մոռցած՝ սկսայ փիճային սպասել, նոյն ատեն խօսքի թել մը փնտռելով: Միտքս կը շարձարուէր հարցումի մը համար: Յայտնի էր, որ քիչ առաջուան յուզումս մոռցնել տուած էր ամէն ինչ:

Հոգին ողջ մնայ այդ օղանալին. արդեօք ո՞ր ընկերութեան կը պատկանէր. անոր ձայնը բացաւ լեզուս:

— Օղանալով ճամբորդել կը սիրէ՞ք:

— Անշուշտ կը սիրեմ, — ըսաւ ու մեր մօտէն անցնող սպասեակէն պահանջեց արագ շարժիլ, քանի որ շատ անօթի էր:

Այդ պահուն միտքս եկաւ դիտ շարձարող հարցումը.

— Ձեյ քէօֆթէն ի՞նչ միտով պիտի շինէիր:

— Կովու:

— Օ՞, — ըսի, — լաւ որ չես շինած, ես միայն ոչխարի միտով շինուած չի՛յ քէօֆթէ կ'ուտեմ:

— Ուրեմն Աստուծոյ կամքով չեմ շինած:

Ի միջի այլոց, ըսի.

— Յունուարէն ի վեր քու մասիդ կը մտածեմ:

— Ես ալ հեռաձայն ընկէ՞դ ետքը սկսայ քու մասիդ մտածել:

Յայտնապէս կը սխալէր: Սկսած էր իմ մասին մտածել Օգոստոսէն ի վեր, երբ իմացաւ գոլէնի համար տեսած պատրաստութիւններս: Բայց եկուր տես, որ ամէն ճշմարտութիւն ամէն տեղ չ'ըսէր: Այս խօսքը մեծ հայրս ալ ըսած է, հայրս ալ, եւ ես փորձառութեամբ հաստատած եմ զայն: Որքա՞ն բարեկամութիւններ կ'որոնցուցած եմ՝ ճշմարտութիւնը ըսած ըլլալու պատճառով. շուրջեցի այս մէկն ալ կորսնցնել յանուն ճշմարտութեան: Պիտի նախընտրէի փողկապս կրծել, քան ճշմարտութիւնը ըսել:

Փիճան եկած էր: Գացի ձեռքս լուսու: Վերադարձիս տեսայ, որ ինքը սկըսած է: Շատ անօթի ըլլալու էր:

Ընթրիքէն ետք, անսպարեցի՞նք դէպի շարժապատկերի սրահը: Պիտի դիտէինք «Լնվում հետ անցում» ժապաւէնը: «Սիրոյ թիկնաթոռին» կապուած յոյսիս իրականացումը վերապահած էի վերադարձին, մ'անաւանդ՝ որ այլեւս խանգարող ալ պիտի չըլլար:

Կը կարծէի, թէ «Լնվում հետ անցում»-ը միւս ժապաւէններուն պէս երկու ժամ պիտի տեւէ: Տեւեց չո՞րս ժամ:

— Եթէ գիտնայի, որ այսքան երկար պիտի տեւէ՞ չէի առաջարկեր:

— Հոգ չէ, — ըսի, — ինծի համար հանրէք է մօտը նստիլը:

Ժամը մէկ էր, երբ սրահէն դուրս ելանք:

— Քունս կու դայ, — ըսաւ:

— Օ քէյ, տուն հասցնեմ:

~

Սարսափելի կացութեան մը մատնուած էի:

Ատիկա տէյթի ելլե՞լ էր:

Անփո՞րձ, անճարակ:



Ձկրցայ քնոնայ: Կը տասպտկէի ան-  
կողմնիս մէջ:

Առաւօտուն քուն անցեր է աչքս:  
Ժամը հօթը չեղած՝ հեռաձայնին զանգը  
արթնցուց զիս:

Քոյրս էր:

— Ո՞ւր ես, — ըսաւ, — երէկ գիշեր  
մինչեւ ժամը տասը անընդհատ հեռա-  
ձայնեցի, չգտայ:

— Աճապարանքդ ի՞նչ էր, որ այս-  
քան կանուխ հնչեցուցիր զանգը, — ըսի  
ջղանայացած, — ժամը չորսին քնացայ:

— Ի՞նչ ըրիր որ:

— Երէկ տէյթի ելայ:

— Օ՛ր, կը նշանակէ՞ փառաւոր կեանք  
մը սպրեցար, մինչդեռ ես ալ քեզի հա-  
ժար տաղնասպեցայ, քիչ մնաց օտարկա-  
նատուն...:

— Սեփքը դըմմէ՛ք, — պոսպի ջը-  
զային ու գոցեցի հեռաձայնը:

Քրոջս սիրտը նեղուեր է, եղբօրս

հեռաձայն բացեր է, ըսեր է՝ Միհրանը  
ինծի հայհոյեց:

Քիչ ետք հզրայրս հեռաձայնեց.

— Ի՞նչ է ձեր կրկնքը. քրոջդ հայ-  
հոյեր ես:

— Ես միայն սեքքըր դըմմէք ըսի:

— Ի՞նչ կը նշանակէ ատիկա:

— Արարերէն է. «բերանդ գոցէ» ը-  
սել է:

Յետոյ, անոր յայտնեցի, որ գիշերը  
ուշ քնացայ:

— Ի՞նչ ըրիր, որ այդքան ուշացար:

— Տէյթի ելայ:

— Հա՞յ էր, թէ ամերիկացի:

— Հայ:

— Լաւ ժամանակ անցուցիր:

— Եա՛տ, շա՛տ լաւ ժամանակ ան-  
ցուցի: Երեւակայէ, ժամը հօթէն մինչեւ  
առտուան ժամը երկու միտին էինք:

— Օ՛ր, չըսե՛ք...:

— Սեքքըր դըմմէ՛ք, — գոչեցի ու  
գոցեցի հեռաձայնը...:

ՆԵՐՍԷՍ ԳԻՐԱՊԵԱՆ

## Հ Ա Մ Ա Յ Ն Ա Ց ՈՒ Մ

Շէնքի ճեղքերէն երգը կը ծնի,  
ինչպէս իր շիրմէն յառնող Քրիստոս,  
եւ տառապանքի շոգին բարբարոս  
իմ մէջ կը սառի իբրեւ ձոյլ ջսկի:

Ես պիտի արեւ ամփոփած խաղող  
քանդակեմ շէնքի պոբսիւն, կողերուն,  
յետոյ այդ շէնքի միսերէն հասուն  
փողեմ հեշտամքի հագար փուշ ու դոդ:

Ես պիտի պասկիմ մոյթերու վրայ,  
ամուց անկանոն երգիւն կողակից,  
որպէսզի մտողաշ միսս հասուննայ,

զգայ ասփայթի վիշտերը վարար,  
եւ տնջնցներուն ամոր ձայնակից,  
հոսի ու երգէ իր երգը մարմար:

## Տ Ա Պ Ա Ն Ա Գ Ի Ր

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ՈՒ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒ ՄԸ

Երբ հողին տակ մատաղ միսերդ կը բայջայուին  
ու գանկիդ մէջ որդերը կոյր կը կենակցին,  
ինչպէ՞ս ըսել, թէ մահը քեզ գեղեցկացուց.  
պարգապէս դո՛ւն գայն գեղեցիկ ընծայեցիր:

Մահը միակ իրաւ պահն էր, գոր ապրեցար  
եւ ապա գայն չմտերեցի՛ր անիծելով  
կամ օրհնելով: Մահը միակ իրաւունքդ էր,  
գոր խլեցիր ամբողջութեա՛մը, եւ որուն մէջ

ամբողջացար տիեզերքին միանալով,  
տիեզերքէն անջատուելով, տիեզերք մը  
նոր կերտելով: Մահը միակ իրաւ պահն էր,  
որուն ո՛չ թէ ամայութեան, այլ լիութեա՛ն մէջ խեղդուեցար:

Երբ հողին տակ մատաղ միսերդ կը բայջայուին  
ու գանկիդ մէջ որդերը կոյր կը կենակցին,  
ինչպէ՞ս ըսել, թէ մահը քեզ գեղեցկացուց.  
պարգապէս դո՛ւն գայն գեղեցիկ ընծայեցիր:

Կ. ՇԱՀԻՆԵԱՆ

4. Ա Ր Մ Ե Ն Ե Ա Ն

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆՆԵՐ

Այժմ արդէն կամաց-կամաց սկսելու եմ լուրջի առնել Սէյնթ Քլէրը: Սկսելու եմ զինք տեսնել իբրև ուշիմ ու գործունեայ մարդ մը, որ զիտէ ին- կոյն ճանչնալ իր Հնարաւորութիւնները, երբ ես կը շարժարուիմ օրն ի բուն եւ դժուարաւ կը զտնեմ իմ ճամբս: Ան մօտէն ծանօթ է այս աւանին տն- ցուդարձերուն, երբ ես կը մանձրանամ ու նոյնիսկ կը զգուիմ այդ բոլորը կրկին ու կրկին լսելէ: Ան հեշտութեամբ կը զտնէ կապը այդ մանր-մունդ պատահարներուն եւ իր միջեւ, մինչ ես կը ջանամ այդ բոլորը կտայել իրա- բու եւ բան դուրս չի գար:

— Բայց, պարոն Սէյնթ Քլէր, — կ'ըսեմ անճամբեր, — վերջը ի՞նչ եղաւ:

Ան չի պատասխաներ. կեցեր է իր ապակիներուն ետեւ եւ ուշի-ուշով կը զննէ գերդաստանին աղմուկարար եռուզեռը: Կը զննէ ու կը փորձէ հասկը- նալ. կը փորձէ արագ հաշիւներով գտնել իր եւ անոնց հանդիպման եզրը եւ ահա կարծես գտնելու վրայ է, երբ անոնցմէ մէկը ուժուր-ամուր կը բախէ դուռը: Դժուար է ճէ՛ր մեր Յիսուս Քրիստոս: Սէյնթ Քլէրը բնազգօրէն զիջք կը փոխէ, մեքը հասեր է թիթեռնիկ փողկապին, որ յանկարծ բռներ է վի- զը՝ անկորնչելի պատեհութեան մը պէս. այդ նեղ պահուն վիզին վրայ ըզ- զացուող անպատեհութիւնը փողկապն է, որուն հանգոյցը կը փնտռէ ինք, երբ այսպէս զէպրէրը մէկէն ի մէկ զինք կը կանխեն: Ի վերջոյ վիզն ու փողկապը իրար կը սեղմեն առանց վէճի ու թէն. տարեց մարդը կը զգայ անհեթեթ արարքը, զոր իր մատները կը զործեն, բայց, յամենայնդէպս, կը հազայ ու կը բանայ դուռը:

ԲՈՐԻՍ ԿՆՅԱՆ

Դրան մէջ կը յայնուի միւս Սէյնթ Քլէրը. հսկայ ու բարենամքո՛յր մարդեր արծաթագոյն են արդէն. ժպիտը՝ կիթի ու շորտափի. բառերը կը հոսին ողորկ ու անսխալ յաջորդականութեամբ: Ձէ՞ ամուսնացած, թէ՞ վա- ռուց կորսնցուցած է կինը: Կամ ալ վերամուսնացած է շատ ուշ: Շատ, շատ ուշ: Քանի որ տարեց ամուրիի մը կոկիկութիւնը կայ վրան. ասիկա նշա- րողը Ջաւէնն է, որ այժմ կեցեր է գրան դուրսի կողմը եւ փողոցին ազմու-



կին մէջ կը ջանայ բռնաբերել: Ըսելիքը դիւրաւ չէ, որ կը քակուի. թաթերն են, որ համբար շարժումներ կ'ընեն մայրին վրայ. կ'ուզեն խօսիլ, բայց ի վերջոյ կ'անճարկին. ասոր բուն բանը կայ... պիտի ըսէ Ջուէն միտքէն ու պահ մը խորհի: Քամ ին, քամ ին... պիտի հնչեն Սէյնթ Քլէրին զըւարթ ու մեղծ վանկերը եւ ներս կտնչեն այս շուարած թաղեցին: Սիրալիր մա'րդ. համբերատար մա'րդ. լաւ որ աս մարդը զէմերնիս ելաւ, կ'ըսենք էս ու Ջուէնը եւ մեր պատմութիւնը այստեղ է, որ կը սկսի:

Շուտով յայտնի պիտի ըլլար, որ ատրօբինակ ու մէկը միւսէն անկող բաներ կրնար բնել Սէյնթ Քլէրը: Ջուէնը զորձածուած «ճորտ» մը գտաւ ուժան դինով. երեք եղբայր վաղեցին դրացիին. ան նոտար էր եւ կրնար քանչընքա ժամէն վերջացնել փոխանցման արձանագրութիւնները. վերջացրոցնոյն օրն օրն իսկ աղանջովակցին Ջուէնին ինքնաշարժը:

— Ի՞մ սիրելի բորեկո՛ւմս, — Դարձաւ Սէյնթ Քլէրը Ջուէնին, — Էրբ ժամանակ ունենաք, բարի եղէք աչք մը նետել այս թուղթերուն. հոն պիտի գտնէք ձեզի համար հաղուագիւտ արժէք ներկայացնող քանի մը փաստեր:

Ու ինչպէս կարճ, խոհուն եւ քաղաքավոր:

Թուղթերու տրցակ մըն էր. Ջուէնին արհեստաւորի թաթերուն մէջ անոնք քիչ մը անտեղիօրէն պաշտօնական Լրեւոյան: Պաշտօնական թուղթերը երբ առն բերուին կը նետուին ախոսին վրայ. հոն կը մնան քանի մը օր. յետոյ՝ Սիրականը ձեռք կ'առնէ զանոնք, բան չի հասկնար, կը ղնէ մէկպիւ: Հիմա տիկին Մարիին կարգն է. ամուսինը հաղիւ մտեր է ներս ու կը դոսայ. ձեզի հազա՛ր անգամ բսինք, որ սա բաները հոս մի զնէք. սա թուղթերը ի՞նչ են, որ հոս դրեի էք...:

— Բան մը չեն. բան մը չկայ, — կ'ըսէ տիկին Մարին ու կը խլէ թուղթերը մարդուն ձեռքէն: «Աստուած պելա՛ն ասայ թուղթերուն», պիտի ըսէ միտքէն ու լուէ:

Յաջորդ ներս մտնողը Պետրոսը պիտի ըլլայ եւ տիկին Մարին գտած պիտի ըլլայ իր գոհը:

— Սըւոնց ինչ ըլլալը զխան՝ ու մը, ծօ՛:

Պետրոս պիտի չլսէ իր ժօրը հարցումը. մտած դուռնէն դուրս Էլած ու անյայտացած պիտի ըլլայ: Պարտականութիւնը կրկին պիտի վիճակուի Սրբուհիին: Ան պիտի վերցնէ թուղթերը ժօրը ձեռքէն, պիտի թաղուի աբուանին մէջ եւ լուռ ու գանգաղ թղթատէ զանոնք: Մօրը սիրտը կը հալի, քանի որ նստեր է քիչ անգին ու կը սպասէ խօսքի:

Ընտանիք չէ՛. դերդաստան է գրեթէ: Սկիզբը հաստատուած էին Նիւ ձըրզի, իսկ հիմա Ջուէնը բացած էր աշխատանոց մը, ուր բուրբով ինքնա-

լարժ կը նորոգէին. վարպետը Զաւէնն էր. Մերականը ծուռ մասերը կը շքահէր մէկայն. Պետրոսին ըսին՝ եկուր դուն ալ ա՛ք ըրէ: Զայն չհանկց, բայց խելքին պտակեցաւ: Կ'աղբէին մէկ տան մէջ, կ'ուտէին նոյն կերակուրը, բայց ամէն մէկը՝ մէկ բնասորութիւն. եւ Ուրբաթ իրիկուն ըլլալու էր սա պահը, քանի որ հայրերնին վերէն հաւար կը փրցնէր:

— Այ ժողովորդ, ասոր վերջը ո՞ր պիտի երթայ:  
Տիկին Մարին ահուզողի մէջ վեր վաղց նորէն:

Մէյք Քլէրին գրազու՛մք միշտ ալ անհասփայլի մնաց տիկին Մարին: Քանի մը անգամ հասկնալու փորձեր ըրաւ. կողմնակի հարցումներ ուղղեց. ջանաց հետեւութիւններ հանել: Ամէնէն շօշափելին Զաւէնին բերած տեղեկութիւններն էին: Երբ Մէյք Քլէրը արտադ կարգադրութիւններ ըրաւ՝ Զունէնին ինքնաշարժի թուղթերը վերջացնելու համար, տիկին Մարին պահ մը լուսաբանուած զգաց:

— Ուրեմն մարդը թողին մոխրութարն է եղեր, — ըսաւ:

— Ի՞նչ մոխրութար, մայրի՛կ, — վրայ տուին երեքը մէկ, — աս երկիրք մոխրութար չկայ:

— Փէ՛ք աղէկ, չկայ՝ չկայ՝ ուրեմն ի՞նչ է մարդուն գործը:

Զաւէն, ինքն ալ, ամբողջովին չկրցաւ բացատրել, բայց յետոյ դուռ բառ մը, որուն ինչ ըլլալը ինքն ալ դեռ ստուգապէս չէր դիտեր, բայց ան, յամենայնդէպս, ճիշդ կը հնչէր:

— Պրո՛քր է, — ըսաւ:

Կիրակնօրեայ մեծ նաչէն ետք բազմեր էին բոլորը մէկ. պահը պարզ էր ու ընտանի. նոյնիսկ հայրեցնին կը թուէր մոռցած ըլլալ Տէր Հօր քարոզը եւ այժմ սկսեր էր Մերականը քաշքշել, մինչդեռ ժամ մը առաջ դեռ կըրակ կը տեղացնէր ալին ու ձախին:

— Եթէ խօսիմ՝ խօսեցաւ պիտի ըսեն. այ մարդ, — ըսի, — այսօր Արարայի ճակատամարտին օրն է. քանինե՛ր գոհուեցան. քարոզ պիտի տա՞ն՝ յարգանքի խօսք մը ըսէ...

Երբ Սրբուհին սուրճը բերաւ, տիկին Մարին բնազդով զգաց, թէ արդէն սկսեր էր իրեն/ինն/ընուն կիրակնօրեայ անհոգ ու բուժարար մարտդութիւնը, քանի որ ջուրերը խաղաղեր էին եւ կիրակին կը բուրէր չորս դին եւ ժպիտներ կը ցանէր տան չորս կողմը. տիկին Մարին շուղեց մտիսիլ այս սառիթը:

— Հիմա մեզի պիտի ըսե՞ս, թէ ինչ էին սա թուղթերը, — դարձաւ Սրբուհին:

Սրբուհին ժպտեցաւ խորհրդաւոր եւ, թուղթերը զզրոցէն հանելով՝ երկարեց Զաւէնին, իսկ Զաւէն աջ ու ձախ դարձուց անոնց էջերը, յոռսալով իմաստ մը հանել անոնցմէ:

**Թերթիկներէն մէկը անորոշ բաներ մը կ'ըսէր՝**

Եթէ տուն շունիք, եկէք ինձի եւ ես ձեզի ցոյց  
կու տամ ձեր տան ճամբան,  
Եթէ ճամբորդ էք, ես ձեզ ճամբու կը դնեմ,  
Եթէ դառ ունիք, ես կը պաշտպանեմ ձեզ,  
Եթէ անգործ էք, ձեզ կը դնեմ գործի,  
Եթէ.....

Ձաւէն շիրքաւ յոտակօրէն հասկնալ գրուածներուն միտք բանին. ա-  
սոր տակը բուն մը կա՛յ, ըսաւ եւ փնտռեց տակինը. իր անպլերէնը դեռ հարկ  
եղած ճկունութիւնը շունէր եւ սակայն թերթիկին վերջին առկերը բաւական  
յստակ թուեցան: Եթէ օգնութիւն կ'ուզէք, դիմեցէք ինձի՝ ձիմ Սէյնթ Քլէր,  
Քրիստոսական Նոր Եկեղեցի, Հեռ. 783-4576: Թերթիկին վերնագիրն էր՝  
Ուզեցէ՛ք եւ պիտի տրաւի:

Ես նոր միայն կը ճանչնայի Սէյնթ Քլէրը: Այն քիչն իսկ, զոր տեսեր  
էի, արդէն կը բուէր. ատով իսկ ան դարձած էր մեր կեանքին անբաժան  
մասը: Ինչորս ալ օտար ուսանողներ էինք. աւելի ճիշդ՝ դրեթէ բոլորս. կար  
մէջներս Սինտին, որուն վրայ շատերս աչք ունէինք. սկիզբը ճակոմոսցի  
կարծեր էինք զինք եւ սակայն ան կու դար Հաւայեան կողմերէն եւ ուրեմն  
այլեւս ինքզինք կը համարէր բնիկ ամերիկացի. հոգի՛ն սիրես ատանկ ամե-  
րիկացիին... Ըսեր էր զգարեացի ժորժը, երբ առաջին օրը Սինտին տներ  
էինք մեր միջեւ: Սինտին բացառիկ շնորհ կը ցուցարեբէր սովորական աղիւ-  
սակներուն մէջ, մինչ ես կը դառնայի ժորժին ու կ'ըսէի ցած ձայնով. «Ձը-  
զարթան ո՛ւր, ապահովագրութիւնը ո՛ւր»:

Սէյնթ Քլէրը սկիզբը ճանչցեր էինք իբրեւ ուսուցիչ: Ան ներս կը մըտ-  
նէր ամէն առտու եւ կը սկսէր բոլորովին անսպասելի կապակցութիւններէ.  
Եթէ դուք իմ տեղս ըլլայիք եւ կանդ առած ըլլայիք Գոդոցի մը անկիւնը եւ  
երկրորդ յարկէն պատուհանի մը փեղկը ինչոր մէկը զլիւտն, ըսէ՛ք իրնդ-  
րեմ, ի՞նչ եղած պէտք է ըլլար ձեր յիստը...  
— 16 առ հարիւրէն 43 առ հարիւրի միջեւ, — կ'ըլլար Սինտին անբո-  
ւաբանի պատասխանը: Ապշահար կը դառնայինք իր կողմը, իսկ Սէյնթ Քլէ-  
րին զէմքին վրայ կը գծագրուէր ա՛յն իսկ ժպտը, որ ըսել կ'ուզէ. «Ծեր  
ըլլաւս մի՛ նայիր»:

Ժորժը իմ կողմն էր դառնայ յուսանատ. Քու Ապու ժորժը չի կրնար  
ելլել մէջէն, կ'ըսէ եւ կը սկսի մեծ շարժա՝ ձեռքով ծածրակը քերել: Յէյնթ  
Քլէրը անտարբեր մարդ մը չէ. ան կը բարեկամանայ բոլորիս հետ. անգործ  
ենք ու անօթի, կ'երթանք իրեն. ատան սենեակ կը փնտռենք, իրժէ՛ կ'ել-  
լին այդ բոլորը: Հետզհետէ ես կը դանձիմ իր զաւրտիքը: Հետզհետէ ես կը  
սորվիմ, բայց շատ դանդաղ եւ կցկտուր:

Վերի պատմութեան մէկ մասը ծնած էր իմ Երեւակայութենէս, քանի  
որ ես այնքա՛ս կը ճանչնայի Սէյնթ Քլէրը եւ կը ջանայի վերամբռնել պատու-  
հածը: Ան շատ փորձեր էր զիս զբաւել ղէպի իր այդ ուրոյն եկեղեցին եւ  
սակայն չէր յաջողած: Իրեն ըսեր էի, թէ ես կը պատկանէի Հայ Եկեղեց-  
առյ եւ ինք չէր հասկցեր. եկեղեցին ի՞նչ գործ ունի ազգութեանդ հետ, զոր-  
մտցեր էր եւ տարկեր. եկեղեցին տեղ մըն է, ուր մարդ պիտի երթայ ա-  
զօթելու, ինքն իր համբան դոնելու. մարդ պէտք է առանձին մտայ Աստու-  
ծոյ հետ՝ փոխանակ իր ամբողջ աղօր հետը տանելու. մարդ պէտք է առան-  
ձին ստանայ Աստուծոյ պատգամը եւ զայն փոխանցէ իր նմաններուն:

Ես կը նայէի իր անիլուած դէմքին եւ անոր աչիսոյ՜ ու գործունեայ  
արտայայտութիւնները կը զուարճացնէին զիս: Նայէ՛, կ'ըսէր ծոցատետքը  
բանալով, ես դացեր, պրպտեր եւ զտեր եմ ձեր սուրբը:

— Ո՞վ է մեր սուրբը, — կ'ապշի ես:

— Սէյնթ Կրեկորի, եպիսկոպոս Հայաստանի, որ հայերը դարձուց  
ի Քրիստոնէութիւն:

Հիմա, կ'ըսէր, ես քեզի պիտի ըսեմ զաղտնիքը. այդ մարդը քու դիտ-  
ցած սուրբերէդ չէր. ան իր ուսումը առաւ վանատաշահ քաղաքի մը մէջ, ու-  
րուն անունն էր Կեաւրիա. անիկա ո՛չ միայն հաւատք ունէր ղէպի Քրիստո-  
սի խօսքը, այլեւ ունէր ծրագիր. կը հասկնա՞ս, իմ երիտասարդ բարեկամս,  
ան ունէր մեթոս, ուղղամտութիւն. կրնար ճանչնայ զիմացի մարդուն  
ախօքը: Ա՛յս է զազտնիքը: Դուն պիտի կարենաս աւսնել այդ ախօքը ա-  
ւելի առաջ, քան այդ սխալին ենթակայ անհասը եւ երբ ծօտենաս իրեն եւ  
մատնանիշ ընես զայն, այն ատեն դուն ո՛չ միայն սղնած պիտի ըլլաս այդ  
մարդուն, այլեւ պիտի ըլլաս այդ մարդուն խնկական սուրբը:

Սէյնթ Քլէրը միշտ ալ կը շփոթեցնէր մեզ իր այս ելիւէջներով: Դրժ-  
ւար էր որոշել, թէ իր խօսքը ինչ բանի կը վերաբերէր այդ պահուն. կրօն-  
քի՞, թէ ազանովագրութեան: Իր եկեղեցին ան հիմներ էր հեռաւոր, լքեալ  
թողի մը անկիւնը: Խարխուլ մթերանոց մըն էր անիկա. Գաղաքապետութիւ-  
նը զայն առաւ իրեն նոր օրէնքին հիման վրայ. ան խոստացեր էր մաքրել ու  
կռկել զայն: Օր մը կ'անչեց բոլորս. մէկ օրուան մէջ ներկեցինք մթերանոցը-

ըրինք նախնական նորոգութիւններ եւ յետոյ միայն իր ցուցմունքներէն իմացանք, որ մթերանոցը պիտի ըլլար իր վաղուան Լկեղեցին: Զարմացանք: Եկեղեցի՞ն:

— Բայց, պարոն Սէյնթ Քլէր, ձեր ասպարէզը ասպահովագրութիւնն է:

— Իմ ասպարէզս է օգնել, — եղած էր իր կտորուկ ու աներկմիտ պատասխանը:

Եկեղեցին անհրաժեշտ կուտանն է իր գործունէութեան. անով ինք կը ճարէ իր մարդերը. այդ մարդերէն խրաքանչիւրը աննէլիք մը ունի Սէյնթ Քլէրէն եւ, ուրեմն, նաեւ ինքնարեքարար՝ տայիք մը: Ի՞նչ երկի ժողովարանին ամպիրոնէն ան կը քարոզէր յատակ տուեալներով. գուն պիտի կարեւնաս առաջ, որպէսզի կարենաս առնել. առնելու գաղտնիքը, կ'ըօէր, տալու գաղտնիքին մէջն է. եւ ձեր Տէրը այդպէս ալ ըրաւ մինչեւ իր վերջին օրը Երկրի վրայ: Ժողովարանը լեցուն էր բազմապիսի զէժքերով, որոնք եկեր էին թաղին դանազան խորշերէն եւ սպասուծով կը հետեւէին իր տիրական խօսքին: Նոյն քարոզը ան վաղը պիտի շարունակէր զատարանին մէջ եւ անկէ հանէր ասորեք իմաստ: Առնել եւ տալ, պիտի ընդգծէր. փոխանակելու այս հարցին մէջ բոլոր կրօնները կը միանան. բոլոր սկզբունքները կը հաշտուին. իսկական խաղաղութիւնը ասկէ միայն կրնայ ծնիլ, քանի որ անիկա ազատ մարդոց համաձայնութիւնն է: Ձեզի կ'ըսեմ՝ զուք կարելի պէտք է դարձնէք, որ ասպահովագրեալը պայ եւ փնտռէ ձեզ եւ փնտռելու պարագային ալ՝ դունէ՛ ձեզ... Եթէ դունէ, պիտի փնտռէ. եթէ փնտռէ, պիտի գտնէ: Տե՛սէք սա անտարանական ճշմարտութիւնը, որ անփոփոխ մնացեր է մինչեւ այսօր:

Յր մը պատահամբ կ'անցնէի իր դրան առջեւէն: Պայծառ օր մըն էր. ծրագիր ու խոստում կը տեսնէի այդ ժիր ու արևուտ օրուան մէջ: Յանկարծ աչքիս զարկաւ Սէյնթ Քլէրին դուռը: Քանի՛-քանի՛ անդամներ եւ անցեր էի անոր առջեւէն եւ քանի՛ անդամներ ալ մտեր էի անկէ ներս եւ սակայն երբեք այսպէս ուշադրութիւնս չէր գրուած անոր տեսքը: Տարօրինակ մտեր-



ժուժիւն մը կը ներշնչէր այդ դուռը գուրսէն գիտողին: Ան ներկուած էր բնասանի ու ջերմ կաթնաուռով մը եւ շորս խաշածեւ լուսամուտներ ունէր վրան, որոնք շրջանակուած էին գոյնզգոյն ապակիներու դրուազոյ՝ դրան ձախ կողմը, ժայթին նայող պատն ալ, կէսէն վեր, լաջն ու կար ցուցափեղկ մը կը կաղմէր, որուն ներքի կողմը զարդարուած էր քանի մը հողուաղիւտ սկահակներով: Ներս մտնողը կարծես կը ժանէր տուն եւ ոչ թէ դրասենեակն, ներքի կահերն ալ աւանդական եւ մտերիմ ձեւեր ունէին: Քլամ ին, քլամ ին, լսեցի իր ձայնը ներսէն. ձեռքով նշան կ'ընէր, որ ներս մտնէի: Իժկա՝ մութեամբ ընդունեցի հրաւերը:

Գործի վրայ կ'երեւէր այդ առաւօտ. կը խօսէր աշխոյժ շէշտերով եւ աղանակներ կը պատգային: Ես գուարճալի կը գտնէի Սէյնթ Քլէյրը, երբ այսպէս կրակ առած դէմս կ'ընչէր. իրեն համար աշխարհը յարաշարժ բան մըն էր, որ տեսարար կը խուսափէր իր ձեռքերէն. մինչդեռ իմ աշխարհս կեցեր էր նոյն տեղը, Միջերկրականի միւս կողմը կամ Ատլանտեանի այս ափին:

— Դուն պարտականութիւն մը ունիս, — ըսաւ ձեռքերը ազուցելով ծոծրակին ետեւ, — կ'ուզեմ, որ լաւ մտածես ատոր մասին:

— Ի՞նչ պարտականութիւն, — վրայ տուի դարձացած:

— Դուն կը պատկանիս Հայաստանեայց Եկեղեցոյ, րա՞յք:

— Բա՛յք, — ըսի:

— Այդ մէկը քու գիտնալիքդ է, — ըսաւ բառերը կամաց-կամաց հաւաքելով իր գանազան գրպաններէն, — այժմ մտածէ՛, թէ Աստուծոյ այդ տունը ի՞նչ սուած է քեզի եւ դուն ինչ տուած ես տնոր...

Վայրկեան մը նայեցայ իրեն՝ հասկնալ ջանալով, թէ ուր կ'երթար այսպէս քովնոր: Գտաւի կը այլեւս մտքին մէջ, թէ Սէյնթ Քլէյրը պարտաւ ջուրի մէջ շէր երկարէր իր կարթը: Իր գործուղի տրամաբանութիւնը կըրնար բաւական ճամբայ կտրել մեզի հասնելէ առաջ եւ սակայն բոլորս ալ այլեւս գիտէինք, թէ ի վերջոյ ան կը հասնէր իր ուզած տեղը եւ կը զգայինք, թէ դանդաղը մենք էինք: Արդէն երկու տարի անցեր էր, Սինտին վազուց մեկնած էր Հոնոլուրու: Մեր բաժանման օրը, իրրու յիշատակ քովս ձգեց լոկարիթմներու իր գիրքը: Ժորժը եւ ես շուտով քննութիւն պիտի անցրնէինք, որպէսզի պաշտօնապէս ստանայինք ապահովագրողի մեր վաւերագրերը: Ժորժը պիտի վերադառնար Պէյրուիթ, մինչդեռ ես պիտի չկրնայի. ես պէտք էր մնայի Հոս. ամուսնանայի եւ ապագաս շուկէի: Օր մը «Հայրենիք» շէնքին մէջ երէց ընկեր մը բանեց զիս ու հարցուց.

— Մէկը ունի՞ս:

— Այո, — ըսի, — հայրս, մայրս Պէյրուիթ են դեռ. հղբայրս կ'ուսանի:

— Դուն ի՞նչ քոսքիս պատասխանէ, — ըսաւ, — մէկը ունի՞ս:

— Օ՛, այո, — ըսի, — ազգականներ ունիմ Պոսթըն:

— Նորէն չհասկցար, — ըսաւ, — ըսել կ'ուզեմ՝ կարդուի՞ս պիտի, մէկը գտած ես...

Ընդմիջեցայ: Կոպիտ բան էր. ինչո՞ւ պէտք էր պատասխան տայի հարցի մը, որ միայն զիս կը հետաքրքրէր:

— Ատիկա անձնական խնդիր է, — ըսի:

— Անձնական խնդիր չէ, ընկե՛ր ջան, — ըսաւ պիբիլ ու ջղուտ, — գը-  
նա՛ ուրածդ ըրէ, բայց նայէ որ օտարի քածերուն չիխաս...

Քանի տնգամ յիշած եմ մեր այս երէց ընկերը, զոր այդ տարի հողին  
յանձնեցինք: Հիմա չեմ գիտեր, թէ ի՞նչ պատասխան տամ այս Սէյնթ Քլէ-  
րին, որ ասանկ երկկնքէն ինկած հարցումներ կ'ուղղէ ինծի: Ընչդ է, ես ա-  
մէն Կիրակի եկեղեցի գացողներէն չեմ, բայց դիտեմ, թէ իմ ճամբաս ի վեր-  
ջոյ Հայոց Եկեղեցին կը հանէ. երբեք ալ չեմ մտածած, թէ անիկա ինչ տը-  
ւած է ինծի եւ ես ինչ կը պարտիմ իրեն, քանի որ անիկա մեր տունն է, մեր  
տնաջին ու վերջին հանգրուանը, բայց այդ մէկը Սէյնթ Քլէրին՝ ի՛նչ:

— Պարոն Սէյնթ Քլէր, — կ'ըսեմ կտոկածով, — ես չեմ գիտեր, թէ  
զուք ի՞նչ բանի կ'ակնարկէք, բայց սպասով եղէք, որ այդ հարցը չի ծա-  
ղիբ. Հայոց Եկեղեցին պիտի ըլլայ իմ տնաջին ու վերջին հանգրուանս:

Պօսքերս չեն տպաւորեր զինք. նոյնիսկ զսէ է, որ բռնած է զիս այս-  
պէս քիտթ ու անօգնական. կը ժպտի ու մեղմօրէն կը հակահասէ.

— Բայց չե՛ս տեսներ, որ ատենք օդային խօսքեր են, սիրելի՛ բարե-  
կամս, — կ'ըսէ, — ես հետաքրքիր եմ, թէ ի՞նչ կը պատահի այդ երկու  
հանգրուաններուն միջև:

Յետոյ չ'ուղեր ժամանակ կորսնցնել. կ'անցնի նիւթին.

— Նայէ՛, — կ'ըսէ, — ահաւասիկ ծրագիրս քերի համար:

Փոխտնակ ապահովագրական մեծ ընկերութեան մը դիմելու եւ գործ  
ուղելու, ըստ իրեն, պէտք է մտածեմ աւելի տոռոյ Հնարաւորութիւններ հե-  
տապնդելու մասին: Այս շրջանին մէջ արդէն սկսած էք բազմաճառ. եկեղեցի  
ունիք, ակումբ ունիք, դպրոց բացած էք արդէն. այդ կը նշանակէ, թէ ա-  
սիկա սկիզբն է դեռ. մի՛ մոռնար, կ'ըսէ ցուցամտը հեռուէ-հեռու ճօճելով  
վրաս, որ ամէն եկող ընտանիք իր հտուր դերդաստան մը ունի, որ յոյսով  
կը սպասէ հեռուն. կամաց-կամաց բոլորն ալ պիտի գան, կ'ըսէ, աշխատու-  
նակն ու խելացին, հարուստն ու չուներորդ. այսպէ՛ս լիցուեցաւ Ամերիկան-  
տսիկա՛ է քու պատրաստի համայնքդ. ասո՛նք են քու մարդիկդ...

Ինք կը խօսէր խանդավառ ու ինքնավստահ՝ ուժ եւ կշիռ դնելով իր  
բառերուն մէջ եւ սակայն իր խօսքերը վրաս մէկկէն նեղութիւն բերին. կար-  
ծես մութին մէջ պորձուող զէշ բանի մը ակամայ մեղսակէք կ'ըլլայի եւ  
բնազդներս գարձան իրեն ոչէմ. այս բողոքական ամերիկացին իր անփոյթ  
ձեւերով կոպտօրէն կը միջամտէր մեր նիստուկացին. մենք արմատախիլ  
կ'ըլլայինք ու կ'իջնայինք նոր արեւ: Յանկարծ սարսափելի պատկեր մը կը  
բացուէր աչքերուս առջև. Հայրս, մայրս, հօրեղբայրներս, հօրեղբորդինե-  
րըս, ինձի ու աղջկան ելիւր էին ճամբայ եւ շուտով պիտի իջեանէին մեր  
դուռներուն առջև:

— Այդ բանը, պարոն Սէյնթ Քլէր, չի՛ կրնար ըլլալ, — ըսի զսպելով  
ժարմինիս դողը:

— Համբերէ՛, բարեկամս, ժամանակ տուր ինքզինքիդ. մի՛ յուսահա-  
տիր դեռ ճամբայ չելած, — ըսաւ ինք փութիտ ու ետանդուն. — կարեւորը  
այն է, որ դուն տեսնես իսկական Հնարաւորութիւնը. մնացեալը կը քննենք  
առանձին: Դուն դեռ նոր ես, դիտե՛մ. գրամադրուիս ու փորձ չունիս, այդ  
ալ գիտեմ: Դուն եւ ես դեռ շատ խօսելիք ունինք:

Շքեր էի. չէինք հասկնար զիրար. ինք չէր տեսներ, թէ ինչ տեղի

կ'ունենար, մինչ ևս իր աչքերուն մէջ կը տեսնէի երկու լայն սվկիանոսներս  
 — Դուն եւ ես, — ըսաւ վերջապէս՝ վեհ իմաստ մը դնելով իր խօս-  
 քին մէջ, — զօրծ ունինք ընելիք այստեղ. մեր առջեւ ունինք կոյս գետին  
 մը. մի ժողովար, որ այս հայերէն ամէն մէկը անապահով կացութիւն մը կը  
 բերէ հետը...

Չեմ յիշեր իմ պատասխանս. չեմ յիշեր իսկ, թէ ինչպէս օձիքս աղա-  
 տեցի ու դուրս եկայ իր գրասենեակէն. դիտեմ միայն, թէ ժամեր շարունակ  
 թափառեցայ փողոցները՝ ջանալով թօթափել ճիշդ նախադրացումը. մտայ  
 վաճառատունները. դուրս եկայ դուռներէն. չէի կրնար ընդունիլ պտտահանը  
 եւ սակայն ինքզինքս կը զգայի խղճութիւնս անպէս եւ ընդզոյրմս կը դառ-  
 նար լեծի գէմ:

Իր քովէն դուրս գալէ ժամեր ետք միայն ևս սկսայ վերադառնել խա-  
 դադութիւնս եւ նոյնիսկ սկսայ ըմբռնել իր ըսածը եւ զգացի, թէ վերաւո-  
 րանքս, վերջին հաշուով, սփռեցի էր: Աէյնթ Քլէրը փայլուն միտք ունէր իր  
 այս տարիքին: Մինչ ևս եւ ընկերներս հարցը հարցին վրայ կը բարդէինք եւ,  
 ի վերջոյ, կը համոզուէինք, թէ անհնար էր ամէն փորձ, Աէյնթ Քլէրը բը-  
 նագումով կը զգար միայն հնարաւորը եւ ասոր վրայ կը կերպրէր իր մասը  
 ու աւետարանական իմաստութիւնը: Այսօրուան հնարաւորութիւնը մենք  
 էինք եւ ինք տեսնալ հոստատութեամբ զտեք էր մեզ. նոյնիսկ սրամիտ բան  
 մը կար այս բոլորին մէջ եւ նոյնիսկ անկամ ժպիտ մը սկսեւ էր ծլիլ գէմ-  
 քիս վրայ:

Դուրսը դարուն էր եւ ևս կ'անցնէի մայթէ մայթ եւ սակայն Աէյնթ  
 Քլէրին վերջին խօսքը զեռ գամուած կը մնար ուղեղիս մէջ՝ այս ծայրէն-  
 ամբն մէկը անապահով կացութիւն մը կը բերէ հետը: Աէյնթ Քլէրին ամ-  
 բողջ զարտնիքը հոն էր արդէն. իրականութեան մէջ, անիկա զարտնիք իսկ  
 չէր, այլ՝ բաց ու հասարակ-տեղիք մեքենայութիւն մը. ան կը փնտռէր մար-  
 գոց անապահով կողմերը. յետոյ իր ուրոյն միջոցներով ապահովութիւն կը  
 ներշնչէր անոնց. իր խոստացած ապահովութիւնը չափուած, հաշուարկուած,  
 վերահսկողութեամբ բան մըն էր. զգուշի սո՛ւտ մը, որմէ իր քաղցիք շահը բա-  
 ցարձակապէս անվտանգ էր ու ապահով. իր օգնութիւնը հայցելով՝ մարդիկ  
 նոր ապահովութիւն մը չէր, որ կը գտնէին, այլ՝ ժամանակակարապէս կը  
 դնէին միտքի խարուսիկ խաղաղութիւն մը: Քիչ ետք, աւելի ևս յստակու-  
 ցաւ հարցը. միտքի խաղաղութիւնը տխուր ապրանք մըն էր. զայն կարելի  
 չէր գնել և իւրացնել. անիկա կը նմանէր ժամանակակար թմբիբի, որուն յաճա-  
 խորդը միշտ պէտք է վերողաւնայ... Կրնա՞ր ըլլալ, ուրեմն, թէ այս յա-  
 ւիտենապէս արթուն եւ կենսութեան պարսն Աէյնթ Քլէրը էապէս կը գործէր  
 աւելի հեռունները, քան ևս կ'երեւակայէի. կրնա՞ր ըլլալ, որ ան իր նուրբ  
 յիշեցումներով ու բարեմիտ թղթիկներով էապէս անապահովութիւն կը ներ-  
 շնչէր իր ապագայ յաճախորդներուն:

Օրը կը պապաւր շուրջս. այդ օրը ազատ էի. կատարելապէս ազա՛տ.  
 և կրնայի ըլլալ բացարձակապէս անհոգ. երթալ ու մտկայիլ համալսարա-  
 նի թատրաներուն տակ. գտնել պատահական բարեկամուհի մը. խօսիլ ու

զբառաբանումը իր շրջանակներում, վերջապես, տոնել: Եւ սակայն անախորժ անհանգստութիւն մը կը յամենար ներսս. սկսեալ էի մտածել ծնողներու մասին, եղբորս մասին. պիտի կարենամ որ ուսումը օւարտել: Կը դառնի, թէ ժամանակ չունիլի. պէտք էր շուտով օւարտելի եւ միջոցներ ձեռք բերելի, որ պէտքի ստանձնելի պատասխանատուութիւններս այս կեանքին մէջ. շուտով դպրոցի թոշակը պէտք էր վճարելի եւ չէի կրնար ազատ օրերս այսպէս վատնել. պէտք էր տշխատելի յաւելեալ ժամեր. խնայելի աւելի՛. ամէն բան՝ ծայրը ծայրին:

Սէյնթ Քլէրին ամբողջական ծրագիրը յետոյ միայն յայտնի եղաւ, բայց անշուշտ ես դայն չէի կրնար հաշտեցնել ինքզինքիս հետ. ես դայն մերժեցի ջոխտի պատրուակներ առաջ քաշելով, որոնցմէ իւրաքանչիւրին պէժ ինք ունէր իր պատրաստի հակաճառութիւնը: Բաժնուեցանք եւ ես այլեւս չայցեցի իր զրոտնեակը: Աւարտել էի դպրոցը. գործ փնտռելու համար պէտք եղաւ քանի մը ճամբորդութիւններ ընել. գացի Նիւ Խորթ, Պոսթրն, Շիքսփո. ի վերջոյ պաշտօն վերցուցի հոս. ամուսնացայ. զատկներու հայր եմ այժմ:

Սէյնթ Քլէրին զաղափարը միայն վերջերս է, որ հասունացաւ միտքիս մէջ, թէ եւ ես դայն բարեփոխած եմ եւ գրած շատ աւելի ընդունելի շրջանակի մէջ. հիմա ան այլեւս ընդվզեցուցիչ չի թուիր: Ի՞մ հիղերուս շնորհիւ էր, որ վերջերս ազանովուղեցինք մեր եկեղեցւոյ կայուածը, որուն համար շնորհակալութեան պիտ ստացայ Նիւ Եորթի Առաջնորդարանէն: Սէյնթ Քլէրը երեք տարի առաջ հանդստեան կոչեց ինքզինք. զարմացանք, երբ լսեցինք, վեց ամսուան ընթացքին երկու անգամ սրտի կաթուած ունեցի էր. զրեանչ մայրս դեռ չի կրնար հաւատալ, թէ ատանկ հանդարտ ու կոկիկ մարդ մը այսպէս կրնայ սրտի կաթուած ունենալ. մենք, որ այդքան չարչարանքներ տեսանք, կ'ըսէ, փա՛ռք Ամենակալին... կը զարնէ խոհանոցի սեղանին, որուն շուրջ նստեր ենք կիրակնօրեայ նախաճաշի: Երկու տարի առաջ միայն հրաժարեցայ պաշտօնէս եւ որոշեցի բանալ այս զբառնեակը. սկիզբը կեանքի ապահովագրութեան վրայ կեդրոնացուցեր էինք մեր ուժերը. այժմ տարածուած ենք արդէն. կեանք, կայուած, արկած եւ յարակից ճիւղեր:

Ընտանիքը, զոր կը նկարագրէի որոշ վերապահութիւններով, Պրբու-  
հիենց ընտանիքն էր: Սրբուհին այժմ տիկինս է՝ եւ իր իսկական անունը Սըր-  
բուհի չէ:

Այժմ ամբողջ օրս կ'անցնի ահաւոր հեւքի մէջ. հեռանայնները կը հա-  
լածեն զիրար. մեր սկզբունքն է անթերի սպասարկութիւն տալ մեզի զիմող-  
նիբուն. մեր յաջողութեան դադանիքը հո՛ն է. չենք մոռնար զիրենք: Ապա-  
հովազրութեան ապարէզն ալ բարդ ձեւեր ստացած է Սէյնթ Քլէրի օրերէն  
ի վեր, Եթէ մարդը չի նով է եւ իր ինքնաշարժով կը մտնէ պարտէզիդ մէջ,  
ի՞նչ կրնաս ընել: Մենք կ'ապահովադրենք ծառերդ, քարերդ, մարդադետի-  
նըդ: Եթէ ան վիրաւորէ՞ հիւրերէդ մէկը: Կ'ապահովադրենք զայն առան-  
ձին: Եթէ ինքը պատահամբ վիրաւորուած ըլլայ քու հողիդ վրայ. կ'ապա-  
հովադրենք նաեւ զինքը՝ քո՛ւ հաշուդ: Նահանգին օրէնքները օրըստօրէ կը  
բարդանան. պէտք է անոնց հետ քայլ պահել. իրիկունը տուն կու գամ եւ  
ուղեգս քայքայուած կ'ըլլայ:

Սրբուհին եւ ես կը նայինք երեխաներուն եւ անոնց ապագան այժմէն  
իսկ կը մտահոգէ մեզ այս մեծ քաղաքին մէջ: Բարեբախտաբար ունինք այս  
ամուր ընտանիքը, որ մերն է դեռ:

ԿԱՐՑ ԱՐՄԵՆԵԱՆ

## Ծ Ե Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Դ Է Պ Ք

Մէկ,

Երկու

Եւ երեքսկէս տարեկան

Մանուկներ

Երկաթուղիի ցիլոններուն մէջ կը խաղան:

Անոնց մտքին հարց չի ծագիր, թէ

Այս երկաթուղին մեր տարողուած քաղաքին

Նշանաւոր յուշարձանն է

(այսինքն)

Գոյականներու, ածականներու,

Բայերու, մակբայներու,

Հարցական նշաններու, բացազանչութիւններու,

Ստորակէտներու, վերջակէտներու

Նար տողերու

Տխուր գարնավալի՞ն ամէնօրնայ քայլարշար:

Տախտակի կտորներ շարժելով

Եւ տարօրինակ միջեր արձակելով՝

Մանուկները կը զգան, թէ այս փլատակներուն վրայ

Գոյացած բլրակներուն անմահ եերօտներն են,

Ոճրագործներ,

Խաբէրաներ

Եւ երբեք չձեռքավարտող գողեր:

Մանուկները գիրար սաղալելով,

Իրարու ձեռքերէն, վիզէն, աւերէն քաշէնելով

Իրար հարուածելով,

Գնդակահարելով՝ ցեխաբաթախ կամ արիւնլուայ կը վերագառնան:

Մանուկներու մէջ սասանաներ կան,

Որ կ'առաջնորդեն գիրենք


Եւ ամէն ինչ բնելու կտրողութիւն կը շնորհեն...

Մանուկները ամէն տեղ են եմա,

Քիչ մը աւելի ծեր,

Քիչ մը աւելի բիրտ...

ԱՐԱՄ ՃԻԿՂԵԱՆ



### Հ Ե Ր Մ Ա Ն Հ Ե Ս

#### «ԱՅԵՓԸՆՎՈՒԼՆ» — ԱՅՄԻՆՔՆ՝ «ՏԱՓԱՍՏԱՆՆԵՐՈՒ ԳԱՅԼԸ»

«Այեփընվուլֆ»-ին լանցած՝ ստիպուած ենք փութ փակագիծ մը բանալ եւ քիչ մը աւելի ծանրանալ Նիցչէի «Երաժշտութեան ոգիէն» աղբիւրքեան ծնունդը գործին վրայ, որուն առաջին բաժինը կը պարզաբանէ Նիցչէի դեղագիտական բժրոնումները եւ անոնց յարաբերութիւնները մարդուն հետ: Ըստ Նիցչէի, յունական ողբերգութիւնը (մասնաւորաբար *Allie Iragedy*), միաժուշումն է յունական արուեստի երկու հիմնական ձգտումներուն՝ «այսինքն» ապոլոնեան քանդակագործութեան արուեստին, որուն մէջ կ'իյնան փլաքիւթ արուեստները, եւ տայնիզեան երաժշտական արուեստին:

Առաջինին հետ կու գան երազները (պատկերի նախատիպը), իսկ երկրորդին հետ՝ գիւտութիւնն ու մութ ձգտումները, անբացատրելի կամ անսանձելի իղձերը (արդի առումով՝ անգիտակիցը): Ասոնք կարծէք տրամախոհական ձեւով մը յաջողած են իրարու: Եթէ երկրորդը զարնան դրացւող խենթ ձգտումներու պէս յորբած է միշտ, առաջինը ձեւաւորած, դրբսեւորած ու մարմնաւորած է զայն: Երկրորդը, սակայն, շատ աւելին իրազորած է նաեւ, վերազարձուցած է մարդը քնութեան եւ մարդոց միջև: Վերատին ստեղծած է եղբայրութիւն մը կամ զերպոյն միութիւն մը, միաժամանակ աշխուժացուցած է հաղորդակցութիւնը մարդուն եւ քնութեան: Ըստ Նիցչէի, յոյները գիտէին ու կը զգային գոյութեան սարսափը, թէ՛ ունայնութիւն մը կար Ապոլոնի ու միւս աստուածներու պանթէոնին ներքեւ...: Իսկ գիտութիւնը, մեկնելով յունական ողբերգութիւնէն, կու դար կամ խառնուած կ'ըլլար սեփրին ու տահապոսութեան հետ (Incest):

Սակայն յաջորդ սերունդները աստիճանաբար կը հեռանան ո՛չ միայն այս միութիւնէն, այլեւ՝ տայնիզեան ձգումներուն տեղ Եւրիփիտէս կը գործածէ բարոյականութիւնը, մինչ Սակրատ ապոլոնեան գուշակութեան, ինքնազստման ու երազի միտումները կը փոխարինէ գիտութեամբ, աւելի պարզ՝ բացատրողական կամ ճանաչողական գիտութեամբ: Իսկ ըստ հին յոյներուն, գիտութիւնը կը կաշկանդէ եւ կ'անդամալուծէ շարժումը...: Նիցչէի բառերով՝ «Այս նոր գրգիռները սառն, հակասական (paradoxial) միտքեր են, ք-

րոնք կը փոխարինեն ապոզոմեան յայտնատեսութիւնը, եւ կրակոտ կիրքեր՝ տայունիզեան յափշտակութեան տեղ դրուած» (էջ 1014) :

Ապոզոմեան եւ տայունիզեան ձգտումներու միաձուլումով նիցչէ կը տեսնէր ողորդութեան վերադարձնումը եւ այս շարժումը կը տանէր զերմասկանան նոր երաժշտութեան մէջ: Բնականաբար, հարցականներ ու տարբեր կէտեր շատ կային ու կան նիցչէի թեզին մէջ, սակայն Հէս այդ բոլորը կը տանէր ուրիշ տեղ: Քրիստոսական թուականներու ճազի, նոր երաժշտութեան, կենցաղի, սյուրերու եւ ամերիկեան խոփող քաղաքակրթութեան ներկայութիւնը կը համարէր իբրեւ նոր տայունիզեան գործնութի մը նախանշանը, ուր փաստօրէն գոյութիւն ունէին դիմումութիւնը, պարը եւ նոր միաձուլումի մը պահանջները: Խորքին մէջ, ծանրաբեռնուած ու ամբողջական հասնող եւրոպական քաղաքակրթութեան մէջ թարմ ալիք մը կու գար, սարբեր կենցաղ մը, զոր Հէս կը փորձէր բացատրել նիցչական սկզբունքներով:

Այս բոլորը գոյութիւն ունին «Մքեփընվուլֆ»ին («Տափաստաններու գայլը») մէջ: Սակայն կայ եւ աւելի՛ն, «Տափաստաններու գայլը» կը բերէ միջին տարիքի մէջ գտնուող մարդու մը տագնապը եւ թարմանալու, նոր արժէքներ գտնելու պահանջը: Ծիշոք է, որ պատմութիւնը Հերի Հալլըրի կեանքին մէջ բաժինն է, որ կը բխի Հալլըրի ինքնակենսագրութեան մէջ մասէն, սակայն անիկա կը բերէ Հերման Հէսի տաղանդները՝ կրկին երրորդ դէմքով պատմուած եւ մարմնաւորուած այլ անհատականութեան մը մէջ: Հոն գոյութիւն ունին անձնանուններու խաղը՝ քանի մը զուգահեցումներով, գոյութիւն ունին տայունիզեան գործնաբան, բնութեան ու բոլորին հետ միաձուլուելու, ինչպէս նաեւ ժամանակը շրջանցելու խնդիրները...: Այս բոլորով հանդերձ, «Տափաստաններու գայլը» իր կենդանութեամբ եւ գաղափարներու մէջ չմնալու, ամբողջ կացութիւն մը եւ գոյութեանակալ հարց մը ընդգծելու իրողութեամբ՝ կը տարբերի Հէսի միւս գործերէն: Ասոր պատճառը զուցէ միջին տարիքի իր անձնական տաղանդն է, զուցէ եւ վարպետօրէն ներխուժած նոր կենցաղը, որ իրական միջավայր մը կը ստեղծէ գործին եւ, միւս վէպերուն պէս՝ վերացական կամ ներկայէն հետու դեռիմի մը վրայ չի ձգեր տիպարները:

Փաստօրէն, «ՏԵՄԻԱՆ»ը միայն մասամբ իրական շրջապատ մը ունէր:

«Սիտհարբա»ն կը պատմուէր սուանց իրական տշխարհի մը:

«Նարսիս եւ Կոլտմուստ»ը միջին դարերէն ժամանակաշրջանի մը մէջ կը ծաւալի:

«Ճամբորդութիւն դէպի Արեւելք»ը ժամանակէն դուրս եւ աւելի հոգեկան աշխարհի մը մէջ կը շարժի:

Ի՞նչ «Ապակեայ գնդակներու խաղը» ապագայի մէջ տեղի կ'ունենայ:

«Մքեփընվուլֆ» բոլորովին տարբեր է դասական վէպէն: Հէսի գրականութեան «մասնագէտ»ներէն երկուքը՝ Ջիոլլետտի եւ Փրիտման, իր որոշ նամակներէն ու վէպի կառոյցէն մեկնած, այս գործը քարձակով գրուած սուտ» մը կը կոչեն: Ծիշոք է, որ Փրիտման զեռ անցեալ տարի նոր ուսումնասիրութիւն մը կը հրատարակէր Հէսի մասին (Hermann Hesse: Pilgrim of Crisis), սակայն քնարական յղացքով վէպի իր ըմբռնումը շատ ալ չի հետաքրքրէր ժամանակակից մարդը: Յիշեալ գործը պէտք է տեսնել իբրեւ 20րդ դարու առաջին քառորդին վէպի կայունածին մէջ կատարուած փորձարկում:



ներքն մէկը, գուցէ դեռ չափով ժը դասական, բայց եւ այնպէս՝ բաւական իրողութիւն:

Վէպին առաջին բաժինը, որ ամբողջին շուրջ մէկ երրորդը կը կազմէ, լաւագոյն փաստն է ատոր: Հերի Հալլը երեք տարրի դիտանկիւններէ կամ անձերու կողմէ կը ներկայացուի: Նախ մանր-քաղցենի դասակարգէն երիտա-տարը ժը կու տայ Հալլրի մասին իր նկարագրութիւնը: Հալլը, շուրջ ինը ամիս ապրած է այս երիտասարդին հետ, անոր մօրաքրոջ տան մէջ, ընդ-հանրապէս անաղմուկ եւ հանդարտ, միշտ դարձանայի հետաքրքրութիւն մը ստեղծելով երիտասարդին մօտ: Միայն վերջին ամսոյն, ան իր երկու ընկե-րուհիներով, պարեզանակներով ու փոփոխութեան ենթարկուած կենցաղով անհանգստացուցած է զիրենք...: Հալլը յանկարծ կը մեկնի՝ յուշատետր մը ձեռքով ետին, որուն հիմամբ կը հետեւինք ո՛չ միայն Սթեֆընի վարկէն կեանքի մէկ ժամանակաշրջանին, այլեւ հազարապէս կ'ըլլանք ինքն իր մասին կողմած կարծիքին, իսկ յուշագրութեան մէջ պարփակուած եւ Հերիի կողմէ գտնուած պրակի մը միջոցաւ՝ կը տեսնենք երրորդ մօտեցում մը Սթեֆընի-փուլֆին նկատմամբ: Նոյն անձին եւ նոյն աշխարհին մասին երեք դէմքերու կողմէ կատարուած պատմումը, որդէն դասական վէպի երրորդ դէմքով (կամ մէկ վէպով) կատարուած պատմումէն դուրս կը բերէ վէպը, որ ինքնին հե-տադում մը կը նշէ: Իսկ վէպի վերջաւորութեան նկարագրուած ներքին դը-մոխրը կամ ներքին աշխարհին տարբերացումն ու վերակազմութիւնը, իր բազմաթիւ կարեւորութիւններով, պատմուած դերերապաշտ մթնոլորտի մը մէջ ու գերբնականապէս եղանակով մը՝ բոլորովին նոր ոտու մը կը կատարէ:

«Մքիմիստի» Հերման Հէսի ամէնէն տակի ինքնակենսագրական գոր-ծերէն մէկն է, սակայն հասուն, միջին տարիքին հասած Հէսի մը, որ ինքն իր մէջէն ամբողջ քաղաքակրթութիւն մը կը հարցադրէ:

Ինչպէս Հերի Հալլը կը նշէ, ինք մարդ մըն է, որ իր քաղաքական ու հանրային կեցուածքներուն համար կորսնցուցած է իր բարեկամներն ու հան-բուծիւնը: Կինը աստիճանաբար ինչպիսիքութեան հասած է, զինք զրկելով իր ընտանեկան եւ անձնական երջանկութենէն, եւ այս բոլորը զինք հասցու-ցած են մեկուսացման: Սոյն նախատուեալները Հէսի նախատուեալներն էին 1916էն առաջ, երբ տակաւ անդրադարձաւ, թէ անհատը նախ ոչեք է լու-ծէք ներքին քառքը՝ արտաքին խառնաշփոթ աշխարհը հասկնալու համար:

Ինչպէս կը տեսնուի, Հալլը անձ մըն է, որուն մէջ միտամանակ տեղ կը գտնեն մարդկային ու զայլային տրամադրութիւնները: Ան ներքնապէս բաժնուած է երկուքի. անոր ընտանիքը, իր սոս քառախարակութեամբ, փոք-ձած է սպաննելի դայլը, սակայն անոր անհատականութիւնը քանդելու տեղ, անոնք՝ իր պարագաները յաջողած են պարզապէս ինքզինք ատել սորվեցնել իրեն (էջ 16): Ոտքին մէջ, ասիկա տեսակէտն է նոյնինքն Հալլրի, որ ինք-զինք կը տեսնէ երկու բեւեռներու մէջ կորուսած — համամարդկային ճշգ-րտումները թող չեն տար, որ մարդը ազատօրէն իր կերքերուն կամ ցանկու-թիւններուն իրականացման նուիրուի, իսկ զայլը պարզապէս կը ծիծաղի եւ ոչնչութիւններու կը վերածէ մշակութային արժէքներու համար մարդուն ներդրած ճիշդը:

Պատմող երիտասարդը կարգացած է հարկաւ Հալլրի յուշագրութիւնը եւ ծանօթացած է անոր հարցերուն: Ան ընդհանրացում մը եւս կը կա-րէ, Հալլրի պարտան նկատելով ամբողջ սերունդի մը հարցը: Սերունդ մը, որ ինկած է երկու քաղաքակրթութիւններու միջեւ: Ան մտո չի կրնար կազ-

մէլ ո՛չ նախկինին եւ ոչ ալ զայի՛քին: Կ'ապրի լուսանցքային տեղ մը, որ կը վերածուի զժողովի:

Սակայն աւելի հետաքրքրական են Մթեփընվուլֆին եւ քաղքենի ընկե-  
րութեան փոխարարելութիւնները: Որոշ կացութիւններ, որոնք անգամ մը  
երիտասարդին կողմէ պտտմուած են (մինչեւ էջ 29) եւ անգամ մըն ալ Հե-  
րի կողմէ, աւելի ցայտուն կը զարձնեն երկու կողմերուն դիտելու տարբե-  
րութիւնները: Հերի ծնունդով քաղքենի կամ մանր քաղքենի մըն է, որուն  
պտտմուած փաստօրէն կրնայ իր գոյութիւնը նիւթապէս ապահովել եւ ապ-  
րիլ առանց աշխատելու: Դեռ կը սիրէ նման մաքուր ու կոկիկ քնակարաննե-  
րու մէջ ապրիլ, ինչ որ ցոյց կու տայ այդ աշխարհին հետ իր ներքին կապ-  
ւածութիւնը, սակայն չի կրնար անոր մաս կողմել...: Առաջին վայրկեանէն  
կը սիրէ իր վարձած տոնի, քանի որ հոն ամէն ինչ կոկիկ է եւ մաքուր:  
Սրօֆարիայի բոլոր կարծէք խորհրդանիշ կ'ըլլայ այդ բոլորին: Աւելին.  
Մթեփընվուլֆ հարց չ'ուզիր ունենալ սօսիկանութեան կամ էլշտանութեան  
հետ, ո՛չ թէ անոր համար, որ յանցանք մը գործած է, այլ որովհետեւ բը-  
նադրաբար կը խորշի հաստատութիւններէն (Institutions):

Թելպէս օրագրութեան մէջ երեւան կու գայ, ան հասած է յիսուսի  
սահմաններուն եւ ինքնիրեն հետ կնքած է համաձայնութիւն մը, որ եթէ իր  
տառապանքն ու տանձնութիւնը տնտեսիկի աստիճանի մը հասնին, իր 50րդ  
տարեդարձին օրը անձնապան պիտի ըլլայ:

Իսկ քաղքենի ընկերութիւնը, որ կը ներկայանայ երիտասարդին կող-  
մէ, հարկաւ ներքին համարում մը կը զգայ անոր հանդէպ, սակայն Հերիի  
անկանոն պտտելու, ուսելու ժամերը եւ, մա՛նաւանդ՝ շաշխատելու իրողու-  
թիւնը չի կրնար ընդունիլ: Այս զգացումը հասկնալի է, որովհետեւ Մթե-  
փընվուլֆի կենցաղն ու մտածելակերպը օգտակար չեն արտադրողական մե-  
քենային համար: Սակայն անոր գիրքերը, լուսանկարները, սենեակը, եւայլն,  
քաղցրականութիւն մը ունին, զոր կարելի է դասել մեղաւոր հանցեցեցողու  
կարգին...:

Իր ղիշերային շրջապատութիւններու ընթացքին, Հերի ծանուցումներու  
լոյսերուն ցոլացումը չի չեցնող գիրքերու կը հանդիպի պատի մը վրայ, ուր  
արձանագրուած է «Կլայնարգակամ թատրոն — մուտքը՝ ոչ ամէնուն — խնե-  
քերուն համար միայն», իսկ քանի մը օր ետք, երբ հոնկէ կ'անցնի, կը տես-  
նէ անցորդ մը, որ իրեն զբօսյկ մը կու տայ, որուն խորագիրն է «Մթեփըն-  
վուլֆի թեգը»:

Պատահականութեան արդիւնք է ա՛յն՝ որ «Մթեփընվուլֆի թեգը» եւս  
կը իօսի Հերիի մը մասին, եւ պարզ գիպուածի՞ մը պէտք է վերագրել այն  
միւս իրողութիւնը, որ Հերին եւս շուրջ 50 տարեկան է եւ անձնապահու-  
թեան մասին կը մտածէ...: Հէս արդեօք կ'ուզէ շեշտել, թէ սերունդի մը  
հա՞րցն է այս բոլորը:

Ըստ թեզին բովանդակութեան, որպէսզի Մթեփընվուլֆ կարենայ լու-  
ծել իր հարցը, պէտք է նախ նայի իր ներքին քառսին եւ սուղուի անոր խո-  
րհը, որմէ ետք.

«Գոյութեան քննուկը այլեւս պիտի բացայայտուի դիմացը, իր ամբողջ  
անփոփոխութեամբ, որմէ ետք այլեւս անկայելի պիտի ըլլայ իրեն համար  
փախուտ տալ միտի դժոխէ՛ն՝ դէպի գագաթական փիլիսոփայութեան հան-  
գիստները, և ապա, ետ գալու դէպի կոյր գայութեան օրճին: Մարդն ու գայ-  
լը այլեւս պիտի ստիպուին ֆանչնալ զիրար՝ առանց սխալ ապրումներու դի-  
մակին եւ ուղիղ պիտի նային իրարու աչքին: Ատկէ ետք կ'ա՛մ պիտի պայթիմ

և կամ ընդմիջտ պիտի բաժնուիմ իրարմէ, եւ այնուհետեւ կա՛մ Աթեփըն-վաւփ մը պիտի չըլլայ, կամ ալ տեղնի պիտի հաշտուիմ իրարու հետ՝ Հիւ-ժորի արթնցող լոյսիմ տակ» (էջ 68) :

*Իսկ թիչ մը անգին պիտի ըսէ .*

«Հերի կը բազկամայ ո՛չ թէ երկու ինքնութիւններէ (selves), այլ՝ հարիւր կամ հարար: Ինչպէս բոլորիմ վարքը, իր կեանքը եւս կը շարժի ո՛չ թէ երկու բեւեռներու, ինչպէս մարմինն ու ոգին, կամ՝ սուրբն ու մեղաւորը, այլ՝ հազարաւոր կամ անհաշուի բեւեռներու միջեւ» (էջ 70) :

*Սիրահարթայէն ետք, զարժանալի չէ այս լուծումը: Մարդու ինքնութիւնը կամ եւք Հէսի կողմէ այլևս կը դիտուի իրբեւ ինքնութիւններու հոյը մը:*

*Առկէ անդին, Հերի այլևս իր ներքին աշխարհին ճանաչողութեան պիտի ձեռնարկէ, ձերբազատուելով իրեն տրուած թիւրիմացութեան մղող դատարարութեան ազդեցութիւններէն, այլևս աշխարհը պիտի շտեմնէ երկբեւեռ իրականութեան մը մէջ: Հերի պիտի մտնէ «անդրերկրեայ» աշխարհը:*

*«Ան Արծիւ» անունով խմբիչգասուն-պարսորսի մը մէջ կը հանդիպի Հերմինի, հանրակին մը, որ կը յիշեցնէ իր սուսին սէրը՝ Բողա Քրայլլըրը...: Հերմին Հերիի կը սորվեցնէ առօրեայ պզտիկ հասոյքներով վերստին ըմբռնել կեանքը: Ան պարէլ կը սորվեցնէ իրեն, միասին կ'երթան ճաշարանները, նոր երաժշտութիւնը կ'ունկնդրեն: Հերի կը ծանօթանայ Հերմինի բարեկամներէն սաքիֆոնիսոզ Փապլլըյի, որ կը դրսեւորէ ճազի եւ դիշերային աշխարհի ամբողջ ոգին եւ մասնագէտ մըն է թմրեցուցիչներու զործածութեան: Հերմինի ցուցմունքներով ու քաջակրօնքով՝ տն կը սորվի վերջատին ծանօթանալ աղլիկներու եւ մտերմիկ խօսքեր ըսել անոնց: Հերմինի ընկերուհին՝ Մարիան, զինք կը տանի սիրոյ խաղերուն: Նման գիշերուան մը ընթացքին կը պատկերանան իր ամբողջ անցեալն ու ոչրերը, մանկութիւնը, բարեկամը, մայրը եւ անցեալի ամբողջ տառապանքին պատճառները: Այս բոլորը տեղի կ'ունենան եւ Հերմին միշտ կը յայտնէ, որ Հերի կը պատրաստուի իրեն սիրահարուելու: Այս բոլորը իր նոր դաստիարակութեան հանգըրաններն են միայն:*

*Վերջին հանգրուանը կ'իրականանայ՝ դիմակաւոր պարահանդէսի ընթացքին, ուր Հերի եւ Հերմին առանձին-առանձին կ'երթան: Այս բաղմայարկ սրահներու մէջ կայացած խառնիճաղանճային պարահանդէսին ատեն Հերի հետզհետէ կը հասնի ո՛յն կայութեան, զոր Նիցչէ բուրբին հետ կը նկատէ մարդ էակին միաձուլումը: Հոն կը հանդիպի Հերմինին, որ սուր պէս ծպտուելով՝ կը յիշեցնէ Հերիի մանկութեան ընկերը՝ Հերմանը...: Հերի զայն շճանչցած՝ կը սիրահարուի անոր՝ միասին կը մխրճուին այդ խենթ պարահանդէսին բոլոր ծալքերուն, իսկ մութնուրոյսին, Փապլլըյի առաջնորդութեամբ՝ երեքով հաշիւէ հաւաքոյթ մը կ'ունենան:*

*Հոս է, որ կը բացուին Հերիի ինքնութեան բոլոր ծալքերը: Ինքզինք կը զգայ կախարդական թատրոնին մէջ, որ «խենթերուն համար» է միայն և կախարդական թատրոնի զգրպաններէն մէկուն մէջ կը հանդիպի Սթեփըն-վաւփի ընտելացման, այլուր, ամբողջական բնութեան ու յարձակողական միջնուրոյսի մը մէջ՝ իրեն այնպէս կը թուի, թէ անցնող մեքենաներուն վրայ կը կրակէ: Ուրիշ պատկերի մը մէջ, տեսնելով, որ Հերմին պատկած է Փապլլըյի հետ, Հերի կը սպաննէ զայն, եւ այսպէս անընդհատ կը շարու-*

նակուի իր ներքին պատկերներու հոսքը: Անկախ հաշիւի աղղկցութենէն, այժմուրը կարելի է հասկնալ միայն գերբնական տրամաբանութեամբ: Հոս է, որ «անմահներ» Մոցարտին կը հանդիպի, որ կը խնդայ ու կը խօսի ներքին ժամանակի մասին: Հէս հասած է երեք զարժեքէ ի վեր հետադարձ իր ժամանակէն դուրս աշխարհին: Մոցարտի խնդացող դէմքը անտիճանաբար կը վերածուի Փայլույի դէմքին: Այս փոխակերպման մէջ վերջինը կը յայտնէ, թէ Հերի տպագային աւելի լաւ պիտի խաղայ իր ներքին աշխարհի հարաւոր ետեւում խաղերը: Հերի տրամբ է խնդալ, հիւմոր ունի այլևս եւ դիտէ, որ երկրեւեռ իրականութեան մը մէջ չ'ապրիր:

Անկախ գործին թելադրականութենէն, «Սթեփընսը» կը բերէ ինքն իր մէջ որոշ զգուարութիւններ, զորս կարելի չէ քաջատրել պարզ տրամաբանութեամբ: Եթէ նման մակերեսային ժողովուրդ մը ցուցարարներն, պիտի զարմանանք, թէ ինչպէս փողոցային պարուհի մը կամ նուազաւոր մը կրնայած են այդքան իմաստութիւն կամ կենսափորձ կուտակել: Զերուրօյի հարցը կը շարժէ մեկնելով ա'յն վարկածէն, թէ Հէս իր տիպարներուն կը մօտենայ երկու տարբեր մակարդակներու միջ (էջ 209-216), նախ՝ տուրեսայ, ապա՝ աւելի բարձր մակարդակի մը վրայ: Ուրիշ խումբ մը, Տրիտմանէն սկսեալ, կը հաւատայ բոլոր տիպարներուն, սակայն կը կարծէ, որ աւտոնք պարզ պատճառներ կը դառնան Հերի Հալլըրի անդիտակից աշխարհը դրսեւորելու: Անոնք կը դառնան Հէսի ներքին հետաքննարկման միջոցները:

Հարցին լուծումը, կը կարծենք, թէ վերտին կը դոնուի անձնականներու խաղին մէջ եւ քիչ առաջ տրուած ա'յն հարցումին, թէ պատահականութեան տրոյտը էր Հերիի և Սթեփընսըի թելի հերոսին անուններուն նոյնութիւնը: Հաւանաբար հոս կը գտնուի նաև մէկը մեկնարանող նշաններէն մէկը: Հերիի հանդիպած և պիտի զգուարեալու զարմացող զարմար Հերիին, որ զիմահանանդէսին իրրու տղայ ծպտուած, Հերիին կը յիշեցնէ իր կրթնացած մանկութեան ընկերը՝ Հերմանը... վայրկեանի կը համար վերջիւնով դերքին ինքնակենսադրական բնույթը, այս ամբողջ տպագող հեղինակին ինքնաճանաչման ճիգին շի՞ վերածուի արդեօք: Աւելի՛ն. «Սթեփընսը» մէջ է, որ յիշատակուած է հնդկական գիցարանութեան հերոսներուն մասին չէսնէ մեր մէջըրած հատուածը, ուր տիպարները կը դիտուին իրրու մէկը գեր-անհատականութեան մասնիկները: Անկախ Հերիի, Հերմանի, Փայլույի կամ Մարիայի տիպարներուն իրական աշխարհէն, վերջիւնով մօտեմցան լոյսին տակ անոնց կը արուի ա'յլ տարրութիւն մը. անոնք կը դառնան Հէս-Հերիի ինքնաճանաչման հասնելու եւ ճշգրտարութիւնը նուաճելու անհատականութեան մասնիկները:

Անկախ կ'ըսենք, որովհետեւ ինքնաճանաչման ճիգին մէջ՝ Հերի անցած է Հէսի պատկերացած ուղիէն: Մարդն է, որ ստունձին անհատականութիւն մը իրագործած է, սակայն միակ զգալով, այլևս կը ձգտի աւելի բարձր մակարդակի մը վրայ վերամիաձուլման կամ վերահղորդակցութեան մը: Ինչպիսի բնութիւն ու մարդը ուզուած եւ մշակութապէս զարգացած այս մարդուն տայնիպեան ձգտումը Հէս կը պատկերացնէ ու կը մշակէ շատ յստակօրէն: Սկիզբը, տառապած ու առանձին մարդն է ան, որ կը զգայ նոր աշխարհի ներկայութիւնը: Հերմանի ու Փայլույի հանդիպելէն առաջ իտի, ան ճաղ երաժշտութեան մասին կ'ըսէ. «Անոր անտաշ եւ վայրագ գուարճութիւնը հասարակութեան հետ ինքնազոյն չ'էր: Իսկ Փայլույի հետ, որ կը ներկայացնէ պիտութիւնը, բնազդը, խենթութիւնը, երաժշտութիւնը եւ տայնիպեան ամբողջ աշխարհը, դի-

մակահանդէսին մէջ իսկ ան կ'իրականացնէ. «Առնատակաճութեան միաձու-  
լումը ամբողջներում կամ բոլորիկ հետ, միսթիք միութիւնը ուրախութեան»  
(էջ 197): Այսպէս, մշակութային մարդը վերամիացած է բնութեան, այսին-  
քըն՝ Մարիային, երաժշտութեան, իսկական եսին ու շրջապատին:

Տակաւ կը յիշենք, թէ իրենց առաջին հանդիպումին իսկ ազդեկը ըսած  
է Հերբեր, որ զինք պէտք է ճանչնայ: Հոն է, որ Հերման, իր մանկութեան  
ընկերը յիշելով՝ ըսած է, որ եթէ ազայ ըլլայիր, քեզ Հերման պիտի կոչէի,  
որմէ ետք ազդեկը կը յայտնէ, թէ անունը Հերմին է: Ի՞նչ կը պատահի.  
Համաձայն Եռենկի, ամէն էակի մէջ կայ արական եւ իգական բաժին մը  
(Anima and Animus, էջ 48), որոնցմէ մէկն ու մէկը կը շեշտուի՝ համա-  
ձայն մեր սեռին: Սակայն ներքին հաւասարակշռութեան համար էական է  
երկուքին ալ ճանաչումը: Իսկ հնդկական հասկացողութեամբ՝ սէրը կը շը-  
ջանցէ բոլոր սեռերը, ձեւերն ու երեւոյթները, հասնելու համար ընդհան-  
րական հսին: Սոյն երկու զաղափարներն են, որ կը միաձուլուին հոս:

Հերբեր կը հասնի բազմաթիւ ինքնութիւններու կամ եսերու ճանաչման:

ՆԱՐՄԻՍ ԵՒ ԿՈՒՏՄՈՒՆՏ

«Տախտատանճարու փայլը» վէպէն ետք, Հէսի գործը քիչ մը տարբեր  
նկարագիր կը ստանայ եւ որոշ գծումքներն են առջեւ կը գտնուի: Եր-  
բորք աշխարհին հասած է անիկա: Թեկէ ետք, Հէս վերադարձ մը եւ վերա-  
պատմում մը պիտի կատարէ նոյն դործողութեան, կամ՝ պիտի վերձէ իր-  
ականացնել իր փնտրած աշխարհին սահմանումն ու ընդարձակումը:

«Նարսիս եւ Կոլտմունտ»ը (1930) առաջինն է այս փորձերէն: Իէպէ-  
րը տեղի կ'ունենան 13րդ կամ 15րդ դարուն, սակայն ո՛չ որոշ ժամանակ կը  
յիշատակուի եւ ոչ ալ աշխարհագրական յստակ վայրեր կան: Եղածսիներու  
փոփոխութիւնը՝ ձիւնը, անձրեւը, գարունը, եւայլն, կը նշեն ժամանակի  
անցքը: Իսկ Մարիայորոնի վանքէն զատ՝ շրջաններու անուններ չեն յիշատակ-  
ուիլ: Կը զգանք սակայն, որ ղէպէրը տեղի կ'ունենան գլխաւորաբար Կեր-  
մանիոյ մէջ:

Հակառակ իր կառոյցէն եւ վերացականութենէն քիտղ գծումքներն-  
ներուն՝ «Նարսիս եւ Կոլտմունտ»ը Հէսի ամէնէն աւելի տարածում գտած կամ  
խօսուած գործերէն է, որովհետեւ, ինչպէս քիչ ետք պիտի տեսնենք, հեղի-  
նակին մտածումները այնքան բացայայտօրէն կը դրուին Նարսիսի եւ Կոլտ-  
մունտի խօսքերուն մէջ, որ առանց ինքինք վտանգելու, քննադատը կրնայ  
ուղղակիօրէն առնել զանոնք եւ մէջբերել:

Նարսիս երիտասարդ եւ ամէնէն ուշագրաւ միաբաններէն է Մարիա-  
պորոնի, ուր Կոլտմունտ (Ոսկեբերան) պատանեկութեան կը բերուի Տօր կող-  
մէ՝ կրօնական դառնայու համար: Պատանին աչջիմ է եւ հետաքրքիր, սա-  
կայն իր ուսուցիչը կը նշմարէ, որ մինչեւ իսկ Կոլտմունտի համար անձանօթ  
բան մը կայ իր ներաշխարհին մէջ. այլ է իր կոչումը: Նարսիս պատրաստ է  
ամէն ինչ հարցադրելու, իմացականութեամբ կեանքը բացատրելու համար:  
Կոլտմունտ ինքզինք գտնելու հողեկան իսկական տազնապ մը կ'ապրի եւ,  
աստիճանաբար, կը հեռանայ կրօնական մթնոլորտէն ու իր անհանգստու-  
թեան մէջէն, որ Փիգիլեականի վերածորած է նաեւ, կը յիշէ ա՛յն՝ որ հայրը  
ուրած է որ ան մոռնայ: Մայրը ջոփ գեղուհի մը եղած է, որ փոքր տարե-

Քէն ձգած է գինք եւ Հեռացած: Ասկէ ետք, Կոյտմունտի կեանքը ամբողջ փնտառուք մը կ'ըլլայ կիներու ընդմէջէն՝ իր մօր պատկերին, որ տակաւ կը վերածուի համամարդային նունկեան Եւսմօր պատերի փնտառուքին: Կոյտմունտ կը հանդիպի բաղամթիւ կիներու, որոնք, իր առինքնող պատկերէն տարուած՝ անմիջապէս կ'ուզեն գիշեր մը հետը ըլլալ, բայց երբեք հետը չեն մնար: Սուկայն ան աստիճանաբար կը ճոռնչայ սէրը: Բնութեան մէջ, գոյատեւելու եւ ինքնապաշտպանութեան մղումէն մեկնած՝ կը սպաննէ ուրիշ թափառաշրջիկ մը՝ Վիթթորը (էջ 137), ուրիշ օր մը կը հանդիպի կրնկայ մը ծննդաբերութեան (էջ 126), իսկ այս բոլորը կը յանգին վարպետ Նիքոլայի կողմէ քանդակուած Աստուածամօր մէկ պատկերին, երբ կը հանդիպի այս պերջինին: Կը գտնէ վարպետը եւ կը խնդրէ անկէ աշակերտել մօտը:

Կոյտմունտ հարուստ է բնատուր ձիրքերով: Ան շուտով կը տիրապետէ տախտակի վրայ կատարուած փորագրութեան, ինչպէս եւ կաւին ու գրծագրութեան: Իր առաջին դործը կ'ըլլայ Ժիւլիայի քանդակը՝ կաւի վրայ, սպու կ'աշխատի Նարսիսի տախտակէ քանդակին վրայ, զայն ներկայացնելով իբրեւ Յովհաննէս առաքեալը:

Նախկին նիցչէական սահմանումն է, որ Հէս կը կիրարկէ վերստին: Կոյտմունտ, որ սգին է՝ բնութեան մէջ թափառումը, խենթութիւնը, անձնական փորձով մարդու եւ բնութեան դէմ ճշմարտութեան փնտառուքը՝ իր մղումները կը դրսևորէ փրսթիք արուեստներէն քանդակագործութեան մէջ...:

Սակայն Կոյտմունտ չի կրնար հոն մնալ, հակառակ անոր, որ Նիքոլայսի հետ ապահովուած է իր ապագան: Կը վերադառնայ բնութեան: «Սեւ մահուն» տարիներն են, ուր ամբողջ գիւղեր վարակուած են ժանտախտէ եւ հրեաներ կը հարածուին ու կը հրկիզուին: Մահը ամէն տեղ կը տիրապետէ: Ծածրուն վրայ կը հանդիպի Լենէյին, որուն հետ անտառները կը փախին, խուսափելու համար ժանտախտէն: Ինքնապաշտպանութենէ մղուած՝ կրկին կը ստիպուի սպաննել. կը հանդիպի Ռեպեթային. իշխանի մը կողմէ կը պատապարտուի մահուան, սակայն Նարսիս կը հանդիպի իրեն եւ գինք կը վերադարձնէ Մարիայրոն, ուր կը շարունակէ ստեղծագործութեամբ պարապել:

Ճիշդ է, որ ինչպէս վէպի երկու Հերոսները կը տեսնեն, Նարսիս եւ Կոյտմունտ կը ներկայացնեն ճշմարտութեան հասնելու երկու տարբեր ձեւերը: Նարսիս՝ ինչպէս անունը կը թելադրէ, ինքն իրմէ անանող մարդն է, դուրսի աշխարհին կարիքը չի պահար, փիլիսոփայ-մտաւոտական է: Կոյտմունտ կը ներկայացնէ միւս բեւեռը. ան միշտ սէտք է շփուի մահուան, մտանդին, կնկան ու աշխարհին հետ: Պէտք է սորվի փորձառութեամբ: Սակայն այս բոլորը, իրենց այլազան երեսներով, շատ ուղղակիօրէն կը դրուին, ինչպէս.

«Վստահ ըլլալու համար, — եզրակացուց Նարսիս, — նրազոյ մարդիկը, քերտեղներն ու բամբակեղմները, շատ մը ձեւերով անիլ յաւ են, քան ինծի պէս մարդիկը — մտաւարակները: Դուք կ'եմբռնէք ամբողջութեամբ կ'ապրիք. ձեզի տրուած է ամբողջ ուժով սիրել, գիտնալ ու վերստի ամբողջութիւնը անոր: Մեմք՝ մտածողներս, եակաակ անք, որ յամայն կը թաւի, թէ ձեր վրայ կ'իշխենք, ո՛չ իսկ կրնաք ձեր իրականութեան եւ ուրախութեան կէտը ապրիլ: Մերը չոր ու ճիւղար կեանք մըն է, իսկ ըլլալու ամբողջութիւնը ձեզի կը պատկանի: Ձեզի է հիւրը պտուղներուն, պարտէզը սիրահարներու, ուրախալի համոյակամութիւնները գեղեցկութիւններուն: Ձեր տունը երկիրն

է, մերը՝ անոր գազափայրը: Ձեր վտանգը ա՛յն է՝ որ կրկնաբ խեղդուիլի հա-  
նոյճներու աշխարհին մէջ, մերը ա՛յն՝ որ շունչ կը փնտռենք սնօզ տարածու-  
թեան մէջ: Դուք բանաստեղծ ես, ես՝ մտածող: Դուք կը պառկիս մօրդ կուրծ-  
քին, ես կը հսկեմ ամայութեան մէջ: Վրաս՝ արեւը կը շողայ, վրագ՝ լուսինն  
ու բոլոր սաստիկը: Քու երագներդ ազդիկներու մասին են իմ երագներդ՝  
սղօց» (էջ 46):

*Նձան բաղձաթիւ ալ տողերու կրնանք հանդիպիլ:*

*Նոյնքան պարզ ձեռով դրուած է արուեստի հետ Կոլտմունտի կապը:*

«Ինք գիտէր, ո՛չ թէ իր մտածումներով կամ բաներով, այլ՝ վստահ ու  
խոր արեան գիտակցութեամբ, որ իր ընտրած բոլոր մամբաները զինք իր մօր  
պիտի առաջնորդէին — այսինքն՝ ցանկութեան եւ մահուան:

... Արուեստը միաձուլումն էր երկու աշխարհներու — ոգիի եւ արեան  
աշխարհին, հօր եւ մօր աշխարհին» (էջ 164):

*Սակայն աւելի հետաքրքրական է իր մայրը փնտոզ Կոլտմունտի  
տագնապը: Կապը կը դարձանայ ամէն մակարդակի վրայ եւ կը հարստանայ  
զանազան առընչութիւններով: Կոլտմունտ, որ մտաքած էր իր մանկութիւնն  
ու մայրը եւ Նարսիսի մղուձով յիշած վերջինը, իր առաջին հանդիպած կնոջ  
առթիւ կը թէ, թէ ան իր մօր առաքեալն է եւ մայրը զինք կը կանչէ (էջ 77):  
Փնտտուողը ո՛չ թէ իր մօր ճանաչման կերթալ, որուն հետքերը չի հետա-  
պնդեր, այլ իր կողմէ փնտաւած մօրը բերած առընչութիւններուն: Կը փր-  
տուէր ետեւի բնորոշած յաւերժական մայրը, պարագայ մը, որ Կոլտմուն-  
տը կ'առաջնորդէ ինքնաճանաչման: Իր հնդիպած բոլոր կրններուն մէջ եւ սի-  
րոյ ու մարդկային յարաբերութեան բոլոր մակարդակներուն վրայ՝ ան կը  
տեսնէ իր մայրը, որ զնչու աղջիկն է, Լիզայի, Լեննի, Փիլիպի, Լիզ-  
պէթի, Թեպեթայի, Մարիի, Ակնէտի եւ իրենց անունով յիշուած թէ անա-  
նուն միւս բոլոր կրններուն: Ատիկա կրնայ մասէն փախուստ մը ըլլալ, սա-  
կայն մօր միջոցաւ ան կ'ընդգրկէ ընտելան, իր անձին եւ ճշմարտու-  
թեան ճանաչումը: Յտակօրէն հոն կայ տոհմապօղոթիւնը, որ դուցէ, ճըշ-  
մարտութեան ճանաչման անուղղակի դիմը պէտք է նկատել: Կան ծնունդն ու  
մահը նաեւ: Կոլտմունտ ծննդաբերութիւն ունեցող կնկան գէժքին վրայ կը  
կարգայ ա՛յն իրողութիւնը, որ ցանն ու հաճոյքը քոյրեր են: Յաջորդ եղբը՝  
ծնունդի եւ մահուան եղբայրութիւնը:*

*Գործի վերջու որութեան Կոլտմունտ կ'ըսէ Նարսիսի, որ իր մէջ է մօր  
պատկերը, սակայն ան չ'ուզէր, որ ինք բացայտէ մօր գաղտնիքը, այսին-  
քըն՝ զայն թունդակէ: մայրը կը կանչէ զինք, եւ այսպէս՝ Կոլտմունտ կը  
մեռնի, նշխով գերագոյն ճշմարտութիւնը արուեստով բանալու անկարելիու-  
թիւնը, հակառակ անոր, որ արուեստագէտը կը պարփակէ ու գտած է զայն  
իր մէջ: Աւելին. Կոլտմունտ կը վախնայ բառերէն. ամէն անգամ, որ խօսի,  
կը զզայ, թէ հուսկացողութիւնը կը պակսի իր եւ շրջապատին միջեւ: Բառե-  
րը կ'ազդաւորեն իրականութիւնը, որ ենթակայական է եւ չի փոխանցուիր:  
Ինչպէս կը տեսնենք, Կոլտմունտի հակաբեւեռը՝ Նարսիսը, գրեթէ չի  
զարգանար իրրեւ տիպար եւ վէպը կը կեդրոնանայ առաջինին կենսագրու-  
թեան վրայ: Վէպը, Կոլտմունտի մահով՝ կը հասնի իր լրումին:*

*Ամէն պարագայի, այս գործը չէսի առաջին փորձն է՝ իր փնտած  
երրորդ թագաւորութիւնը հաստատելու: Այս մէկը կ'ըլլայ Մարիապոլոնի  
վանքը, ուրիչ կը մեկնի Կոլտմունտ եւ որուն կը վերադառնայ, եւ ուր կը*

միանան Նարսիս եւ Կոլամուսա : Սակայն որքանո՞վ ճիշդ ընտրուած է այս վայրը :

**ՃԱՄԱՐՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԵՊՈ ԱՐԵՒԵԼՔ**

Մինչեւ Հիմա, Էթէ Հէո կը կատարէր անձին փնտոտուքը, «Ճամբորդութիւնն զԷպի Արեւելքնով ան կը փորձէ սահմանել այն երրորդ թագաւորութիւնը, որուն ձգտած է :

Շուրջ 70 էջոց այս վիպակը, իր կարգին, կապ ունի Հերման Հէսի կենսագրութեան հետ : Կրողի մը կամ հաւատքի մարգու մը ներքին ինքնահենսագրականն է, գրուած երրորդ դէմքով :

Թելագրական է վիպակի պատմողին անունը՝ Հ. Հ. (H. H.), որ անմիջապէս կը յղուի Հերման Հէսի, կամ իր հերոսներէն Հերի Հալլըրի : Ան կը պատմէ սրբազան ու զաղտնի ու խտէ մը իր հեռացումն ու վերամիացումը ահոր : Այս դժով, առաջին մտկարգակի վրայ, գործը կրնայ դիտուիլ ֆրեյե Լիբլ գարուն շատ տարածուած դաղանի ու խտերու մասին գրուած վէպ մը, իսկ խորքին մէջ, ստեղծագործ էական կամ իր կոչումէն բխած հարցերը դիմակալող մարդուն տաշնայն է :

Հ. Հ. անուն հերոսը կը կարծէ, թէ ա՛յն ուխտը, որուն կը պատկանէր, դադարած է այլեւս զոյութիւն ունենալէ եւ կը փորձէ գրել անոր պատմութիւնը : Ուխտի անդամները, որոնց հետ պտտմող ենթական ճամբորդութիւն մը կատարած են զէպի Արեւելք, եւր հասած են Մորպիտ Ինֆէրիոր կոչուած վայրը, ծառան՝ Լէոն, հեռացած է իրենցմէ եւ այդ պատճառով տարտղնուած են բոլորը :

Հետաքրքրականը ա՛յն է, որ Հ. Հ.ի կամ Հէսի համար Արեւելքը, որ կը նկարագրուի, իրապաշտ առումով աշխարհագրական յստակ վայր մը չէ : Ճամբորդութեան քարտէսը ո՛չ միայն աշխարհագրական տարրեր եւ իրարմէ հեռու շրջաններէ կ'անցնի, այլեւ կը ներկայացնէ պատմական տարրեր ժամանակաշրջաններու պատկանող վայրեր ու դէմքեր : Հէսի համար Արեւելքը կը ներկայացնէ մարդկային քաղաքակրթութիւնն ու մշակոյթէն տնցած պատմական ամբողջ ժառանգութիւնը : Վայր մըն է, որ հոգեկան է : Հէս կը փորձէ շեշտել այս մէկը :

«Յառաջացանք զէպի Արեւելք, սակայն միաժամանակ նամբորդեցինք զէպի միջին դարերը եւ Ոսկեայ դարաշրջանը : Թափառեցանք Իտալիոյ եւ Ջուզեպիլոյ մէջ... Երկուսսարգուքեան շրջանի քարեկամներու հետ թուսալիկընի մէջ կերամք ու խմեցինք... Այժմստրն ու Փարսիփայլը, Ուիթիքն ու Կոլամուսուր եւ, երբեմն, Սանչո Փանչան կողմէ՛ք՝ քշեցինք մեր ձիերը Պարմալայցի մէջ» (էջ 50) :

Ճամբորդութեան ընթացքին, Հ. Հ. կը հանդիպի ո՛չ միայն Հէսի սիրած հեղինակներուն, տիպարներուն եւ յօրինողներուն, այլեւ՝ Հէսի վէպերու հերոսներուն՝ Միտհաթային, Փապլոյին, Կոլամուսոսի եւ ուրիշներու... Հոն տակաւին կը յիշուին վայրեր, որոնք Հէսի կենսագրութեան ու ապրած շրջաններուն հետ ունին ուղղակի ազդեցութիւն մը : Ի՞նչ է այս բոլորին նպատակը : Հէս չ'ուզեր, որ ըթերցողէն վրիպի «Ճամբորդութեան» ներքին ինքնակենսագրութիւն մը եւ ուղեւորութիւն մը ըլլալու պարագան :

Հ. Հ. աստիճանաբար կը գտնէ Լէոն եւ կը դիտնայ, թէ Ուխտը չէ,



որ դադարած է գործընթացն ունենալէ, այլ պարզապէս ի՛նք լքած է զայն: Անկախ պատժումի կամ գիտաշարի արտաքին նշաններէն, ուր երեւոյն կու գայ, թէ Լէօ ո՛ր միայն ուխտի ուղեւորներուն ծառան եղած է, այլեւ՝ հոգեկան ղեկավար միտածմանակ: Հ. Հ. վերադարձին կ'ընդունուի Ուխտին մէջ, ինչ որ կը նշանակէ, թէ աշխատանքը կը ներկայացնէ ստեղծագործ մարդուն զիմաստուած տաղանդները: Հէօ, Հ. Հ. կամ սեւէ արուեստագէտ որոշ շէրֆաններու կրնայ կատարածներ ունենալ, իր տարած աշխատանքին հանդէպ հաւատքը կրնայ զինք հասցնել սկեպտիկութեան, մանաւանդ՝ որ իր հաւատքին հասարակը ազերո ունին վերացական կամ ոչ-շօշափելի իրականութեան մը հետ, իսկ միւս կողմէ՝ գրականութիւնն ու արուեստը առանձին մարդու մը ճիգն են եւ այս իսկ պատճառաւ՝ անոնք կրնան վնասութեան կամ յոռետեսութեան առաջնորդել:

Գործին վերջաւորութեան, իր խումբին ուղեւորութիւնը՝ «Ճամբորդութիւն ղեկավար Արեւելք»ը գրելու Հ. Հ. ի ճիգը կը վերածուի վիպակի խորագրին, որովհետեւ, մեր ունեցած զիրքին վրայ փաստօրէն կը տեսնենք Հերման Հէսի անունը, իսկ Լէօն կը դառնայ իր ստեղծած տիպարներէն մէկը: Այսինքն՝ ա՛յն տիպարներէն մէկը, որուն իրականացման ձգտած է Հէօ մարդը: Յատկանշական է այս դժոյ գործին նախավերջին հատուածը.

«Բան մը տեղի կ'ունենար հոն: Բան մը, որ կը նմանէր դանդաղ, բայց դիրաւահ եւ շարունակական հոսքի: Իսկապէս, բան մը իմ պատկերէս կը հանդէպ եւ կը հոսէր Լէօյի պատկերին մէջ: Անդրապարսպ, որ պատկերս Լէօյի պատկերին մէջ հասելու, գայն գորացնելու, սնանելու եւ անցնելու հոյսովային մէջ էր: Թուեցաւ, թէ ժամանակի ընթացքին, պատկերներէն մէկուն ամբողջ բովանդակութիւնը միւսին մէջ պիտի հոսի եւ պիտի մնայ միմիայն մէկը — Լէօյինը: Ինք պիտի անի, ես՝ անհետանամ:

Մինչ հոն կեցած կը դիտէի եւ կը փորձէի հասկնալ. թէ ինչ կը պատահի, յիշեցի կարն իստակցութիւն մը, որ անգամ մը կատարուած էր իմ եւ Լէօյի միջեւ՝ Պրէմիարքանի տօնական օրերուն ընթացքին: Խօսած էինք այն իրականութեան մասին. թէ քանատեղծական ստեղծագործութիւնները շատ անելի կենդանի են եւ իրական, քան զիրենք արարող քանատեղծները» (էջ 108):

Այսինքն՝ Հէօ մարդը եւս հոսած է իր ստեղծած տիպարին մէջ: Ան դարձած է իրմէ անկախ գեղարուեստական կերպար. անհատականութիւն մը, որ զինք ամբողջութեամբ պարփակած է, բայց իրեն հետ կապ չունի. կը պատկանի Արեւելքին: Կոլումբոսի, Միտհարթայի կամ Փապլոյի պէս Լէօն եւս կը պատկանի մեր հոգեկան հարստութեան, ա՛յն երրորդ թագաւորութեան, որ վերացական ըլլալով հանդերձ, արուեստագէտին համար իրական է եւ որմէ կը ստանայ անունը: Անիկա այն նոյն աշխարհն է, ուր կան Քլին, Մոցարտը եւ Հէսի հոգեկան աշխարհին հետ ազերո ունեցող միւս տիպարները:

Այս մէկը, իր կարգին, չի՞ր դառնար արդեօք մեր մշակութիւն մէկ դաստիարակ:

**ԱՊԱԿԵԱՅ ԳՆԻԱԿՆԵՐՈՒ ԽԱՂԸ**

Հերման Հէսի վերջին գործը՝ «Ապակեայ գնդակներու խաղը», կը հարցադրէ եւ կը պատկերացնէ ա՛յն աշխարհը, որուն գիմար իր հաւատարմու-

թիւնը յայնանձ էր հեղինակը՝ իր նախորդ գործով: Սակայն այս հարցադրուժը կապածէ մը կամ ժխտուժէ չի բխիր, այլ աւելի հետուն կը տանի թեզը:

Գիրքը ձօնուած է դէպի Արեւելք ճամբորդող ուղեւորներուն, ինչ որ կը հասաստէ երկու գործերուն սերտ տորնչութիւնը: Այսինքն՝ զործը կը նուիրուի այն մասցածին կամ հոգեկան արժէքներու աշխարհին, որուն բազմաթիւ երեսներուն անգրագարձած էր Հէս՝ «Տէմիան»էն սկսող իր գրական-նութեամբ: Եւ ճիշդ ա՛յս հաստատուժը անուղղակիօրէն կը կատարէ վէպէն առաջ գրուած այս մէջբերումը:

«... Հակառակ անոր, որ որոշ իմաստով, բեթումսիս մարդոց համար գոյութիւն չունեցող քաները քաւերով աւելի դիւրութեամբ եւ անպատասխանատու ձեւով կրնան ներկայացուիլ, քան գոյութիւն ունեցող իրականութիւնները, լուրջ եւ խղճամիտ պատմաբանին համար՝ ճիշդ հակառակն է: Ոչինչ աւելի դժուար է եւ սակայն ոչինչ աւելի անիրաժեշտ, քան խօսիլ որոշ քաներու մասին, որոնց գոյութիւնը ո՛չ հաստատու է եւ ոչ ալ փաստարկելի: Այն պարզ փաստը, որ լուրջ եւ խղճամիտ մարդիկ անոնց հետ կը վարչիւն իրեն գոյութիւն ունեցող քաներ, գանձէ քայլ մը եւս կը մտնեցնէ գոյութիւն ունեցալու հարկին եւ կ'աւելցնէ անոնց կարելիութիւնը՝ ծննդաւ»:

Վերի մէջբերումին տակ գրուած անունը՝ Այսերթուս Սէքունտուս, երեւակայածին անուն մըն է, որ ընկանաբար ըսել կ'ուզէ, թէ խօսքերը կը պատկանին Հէսին:

Իրբեւ սկզբունք՝ դէպքերը տեղի կ'ունենան ուպագային, սակայն միջավայրին ձգած տպաւորութիւնը աւելի անցելու կը յիշեցնէ: Իր վաղ պատանեկութեան ժողովք Քնեթի կը տարուի Ուաքել (Քասթալիա), երաժշտութեան մէջ ցուցարեւած իր բնածին յատկութիւններուն համար: Ուաքել կեդրոնն է ապուկեայ դնդակներու խողին, ուր երաժշտութիւնն ու մեր մշակույթի այլազան երեսները հաւաքուած են եւ մտային այս խողին միջոցաւ կ'առաջնորդեն նոր յորինումներու: Բնակահարար, Հէս իսկ չի կրնար աւելին ըսել հաշուիչ մեքենաները յիշեցնող այս միջոցին մասին, ուր կարծէք կ'առաջադրուին մշակութային-գրական-երաժշտական ծրագիրներ:

Ամէն պարագայի, Քասթալիան ընտրանին ներկայացնող միջավայր մըն է, հաստատութիւն մը, ուր կը հաւաքուին ժողովուրդի լաւագոյն զաւակները, եւ ուր քողորթական աշխարհը յաճախ խորհուրդ կը փնտռէ:

Քնեթի կ'ուսանի կրօնական միջավայրը յիշեցնող այս կեդրոնին մէջ: Զուտ մտաւորական կամ հոգեկան արժէքներով գրազոյգ գեղագէտներու այս ընտրանին, իրբեւ զաղափար, կրկին շատ բան ունի իր մէջ Նիցչէէն եւ Հէսի մինչ այդ արձանագրած իմացական հարստութէն: Ընկերային ու քաղաքական իրադարձութիւններէն հետո՛ւ այս աշխարհին մէջ՝ Քնեթի կ'ընկալէ այն սմէշը, որ այդ աշխարհը կրնայ տալ: Աւելի՛ն. հոն ինք կը ատանայ ներքին ամուր տիւրիվիլին մը, մտածելու եւ արտամտանելու մեթոտ մը, որ փինջ սպառաջին ատակ պիտի դարձնէ տարբեր դաղափարներ եւս ընկալելու:

Սակայն փոփոխութիւնը կու գայ տարբեր տեղէ: Քնեթի կ'ուղարկուի Պենետիքթին հայրերու մօտ, Մարիաֆէլ, ուր կը հանդիպի Հայր Ժաքոպուսի: Այս վերջինը աստիճանաբար կը համոզէ դինք, թէ մինչեւ իսկ Քասթալիայի նման բացարձակ բիւրեղացման մը հասած հոգեկան-իմացական հաստատութիւն մը չի կրնար կցզիացած ձեւով երկար դիմանալ. ան կ'ենթարկուի կամ պէ՛տք է ենթարկուի շրջապատի պատմական, քաղաքական ու ընկերային փոփոխութիւններուն, այլապէս անպէտք կը դառնայ:

Եթէ Լէօ, իր Ուխտի անդամներուն հետ ընկերութեան մէջ կ'ապրէր աննշմար կերպով, ահա Քնեխթ ամբողջ հաստատութիւն մը ունի իրեն հետ: Ինչ որ աւելի՛ ցցուն կը դարձնէ այս աշխարհն ու անոր դիմադրաւած հարցերը: Քնեխթ, հետզհետէ կը դառնայ Ուսցելի Մաճիտաբար Լուսին, գլխաւոր ղեկավարը Քոսթալիայի ո՛րն բաժնին, ուր կը կիրարկուի ապակեայ գնդակ-ներու խաղը: Քնեխթ անուճը, որ ծառայ կը նշանակէ, արդէն կը թելադրէ նմանութիւնը Լէոյի եւ Ժողովի: Երկուքն ալ իրենց օտանմանած հաստատու-թիւններուն ղեկավարն են ու ծառան:

Քնեխթ աստիճանաբար կը զգայ, որ Հայր Ժաքոպիւս իրաւունք ունի, թէ չկողբացած եւ ինքն իրեն համար ապրող Քոսթալիայ մը չի կրնար մարդ-կութեան ծառայել: Արդ, կը հրաժարի իր պաշտօնէն ու կը հեռանայ, իր այս արարքով վերջին ծառայութիւն մը մատուցանելով Քոսթալիայի: Իր հեռացումը նախազուրացում մըն է հաստատութեան: Միշտ փնտառուքի մէջ գտնուող Ժողով Քնեխթ կը նուիրուի իր բարեկամներէն մէկուն տղուն՝ Թի-թոյի գաստիարակութեան եւ, այս վերջինին հետ հաղորդակցութիւն հաս-տատելու իր ճիգին մէջ, երբ առաւօտուն պաղ լինին մէջ կը փորձէ լողալ՝ յանկարծամահ՝ կ'ըլլայ:

Ի՞նչ կը պատահի ուրեմն: Հողեկան-իմացական-մշակութային աշխարհի մը նուիրած էր ինքզինք Հէօ, ու, մերժելով արտաքին կամ երեսութեան կան իրականութիւնը՝ այդ ներքին ճամբատութեան կողքին հաշուած էր ինքզինք, սակայն «Ճամբորդութիւն դէպի Արեւելոյէն մինչեւ Վկալիկայ» գրե-րակներու խաղը՝ երկարող այս յանձնառութիւնը իր ենթական կը փոխէ եւ զուտ մշակութէն անդին երթալով կը վերադառնայ մարդուն:

Սակայն, այս դժոյժ, ի՞նչ է տարբերութիւնը «Սքեմիսմիսի»ին եւ Հէօի յիշեալ դործին միջեւ: Հոն եւս հեղինակի մտահոգութիւններուն մէջ լայն տեղ դառած էին, քաղաքականութիւնն ու ընկերային փոփոխութիւննե-րը, սակայն ինչպէս տեսանք, Հէօ այդ բոլորը քաղաքակրթութեան մէկ տար-բեր երեսէն կը դիտէր, սոյննիպէսն ու ապրումնան մարդու նիցչական աշ-խարհահայեացքի ընդմէջէն, մինչ հոս պատմական կամ պատմութեան փիլի-սոփայութեան մօտեցումը յատկօրէն կը փոխարինէ նիցչական մօտեցու-մը: Ժաքոպիւս կը ներկայացնէ պատմաբան Պուրխարաի տեսակէտները, ու-րուն «նկատագրութիւններ աշխարհի պատմութեան վրայ» հատորը խոր տը-պաւորութիւն ձգած էր Հէօի վրայ: Զուտ զեղադիտական-իմացական աշ-խարհով մը զբազող անձ մը, նիցչական պատկերացումով ապրող, կրնայ նմանիլ Քնեխթի բարեկամներէն թեկուարիտսին, որ վէպին մէջ կը նկա-րագրուի, իբրեւ տարօրինակ անձ մը, որ այլևս կապ չի կրնար հաստատել արտաքին աշխարհին ու իրականութեան հետ: Իսկ Քնեխթ կը համարձակի երթալ աւելի անդին:

Հէօ, որ ինքզինք կը ներկայացնէ իբրեւ խմբագիրը Քնեխթի կենդա-նագրին եւ գրութիւններուն, հատորին վերջին 120 էջերուն մէջ կը հուաքէ Քնեխթի բանաստեղծութիւններն եւ պատմութեան շարք մը...: Հէօի մօտ միշտ ալ կայ իր փոխապաշտ կազմութենէն զուրա գալու ճիգ մը. մա-նականա՛ր՝ Վկալիկայ գնդակներու խաղը՝ գրուած ժամանակաշրջանին (1943), երբ վկայի կայունածէն ներս կատարուած են ահագին փորձարկումներ եւ նը-ւաճումներ: Մարդու մը ամբողջութիւնը ներկայացնելու Հէօի այս ճիգին պէտք է վերագրել հատորին մէջ Քնեխթի անունով գրուած բանաստեղծու-թիւններուն եւ երեք պատմութեան ներկայութիւնը: Անոնցմէ «Նընգ-կակամ կեանք» վերատն կը շեշտէ հնգական ներքին աշխարհի ու ներքին

ներդաշնակութեան վրայ ծանրանալու անհրաժեշտութիւնը. մայան՝ արտաքին աշխարհը, խորուսիկ է միշտ: Միւս երկուքը կը կեդրոնանան հաստաքի անհրաժեշտութեան վրայ, առանց որուն Արեւելքը կամ երբորդ թագաւորութիւնը կը վերածուին ցնորածին յղացքներու. «Անճրեւաքերը» կը զոհէ ինքզինք, իր մահուամբ վերահաստատելու համար ցեղախումբի հաստաքն ու բնութեան հետ կապը:



Ինչպէս տեսանք, «ՏԵՄԻԱՅՆՈՎ Հերման Հէս տարբեր անուն մը կ'ընտրէր եւ անով գրական նոր աշխարհ մը կը բանար իրեն համար: Էմիլ Սինքլէր գրչանունով սկսած ինքնակենսագրութիւնը, որ ներքին կենսագրութիւն մըն էր, կը ջնջէր ժամանակի հասկացողութիւնը եւ Հէսի համար կը բանար անժամանակ, մտացածին եւ երբեմն գերիրապաշտ աշխարհ մը:

Իր մանկութեան ապրած ներքին ու արտաքին աշխարհի հետ ներդաշնակութիւնը կորսնցուցած մարդը, իր առանձնութեան եւ անձկութեան մէջ շարունակ կը ճգնէր տարբեր մակարդակի մը վրայ նոր միութիւն մը կամ հազորդակցութիւն մը իրականացնել: Այս ճիւղը տարբեր միջավայրերու մէջ կը պատմուէր: Անիկա, Տէմիանի եւ Սթեֆանիոյ Ֆիլիպարդային՝ նախապատերազմեան Գերմանիան էր, Հնդկաստանն էր՝ Սիւալարթայի ասիական, Միջին դարերն էին՝ Կոլումբոսի մաքին, իսկ ապագայ աշխարհն էր՝ Գնեխթի համար:

Սակայն Էմիլ Սինքլէր գրչանունին որչեղրումն էտք, Հերմաններու, Հերիններու, Հերմիններու կամ Հ. Հ. հերու անուններուն առջանցքը միշտ կը շեշտէր հեղինակին տաղանդը: Տուգնույ մը, որ սմբողջական առարկայականութեամբ եւ երբորդ զէմքով կարելի կ'ըլլար անձնատրել: Իսկ եթէ որոշ կասկածներ կային այս մասին, «Ճամբորդութիւն դէպի Արևելք»ը կու գտար այդ բոլորը փարատելու: Հոն յիշուող կենսագրական տեղեկութիւններն ու վայրերը, արձագանգներն ու նմանութիւնները Հէսի կենսաքին հետ, իր սիրած գործերուն, հեղինակներուն, հերոսներուն, բարեկամներուն եւ այլ մանրամասնութիւններու յիշատակումը, կասկած չէին ձգեր, որ Հէս կը փորձէր իր դաւանած արժէքներուն նկատմամբ իր հաւատքը հաստատել եւ գրտնել ներդաշնակութիւնը ինքն իր բնութեան ու արտաքին աշխարհին-միջավայրին հետ:

Հէս այնքան խորութեամբ կը սնանի գերմանական Կրիստոսի, որմէ ներծած փիլիսոփայութիւնը, հրատչութիւնը եւ մշակութային այլ արժէքները անջնջելի կը մնան իր մէջ: Այդ ազդեցութիւններէն մէկուն՝ Նիցշէի տայնիզման-ապոլոնեան բմբռնողութեան հետապնդումը, զոր կատարեցինք, բուական պերճախօս փոստ է այդ մտտին: Սակայն, ինչպէս իր ներքին կենսագրութեան պարագային, իր ազդեցութիւններուն ու գտնանած հեղինակներուն դժոյժ եւս Հէս զիտէ աւարկայական եւ անկողմնակալ ըլլալ: Գուցէ այս մէկը կու գայ իր վաղ պատանեկութենէն, ա՛յն շրջանէն, երբ կըցաւ իրեն պարտադրուած կրօնական դաստիարակութենէն փախուստ տալ եւ խուսափիլ միսիոնարական նեղ աշխարհաշայտակցէն:

Սակայն վերջին բազմատառութիւնը ասելի անյին կ'երթայ: Հէս խուսափեցաւ քրիստոնէական-բողոքականական վարդապետութենէն, սակայն միշտ զղաց ոգեկան արժէքներու ու հաւատքի անհրաժեշտութիւնը: Այս ձեւով, իր դաւանած բոլոր արժէքներն ու իր գրականութիւնը կը ստանան ոչ-ենթա-

կայական նկարագրեր մը: Սակայն Հէօի արժէքներուն խորքը միշտ ալ կը կազմեն ենթակայական մղումները: Ինք կը յաջողի առարկայականացնել զանոնք:

Իբրեւ զգայնութիւն՝ Հէսի վիզապատկերները, որ միշտ կը բարեխառնուի 20րդ դարէն եկող հոսանքներուն, այսօր չի կրնար անչուշտ խանդավառել մեզ: Տարբեր հոգեբանութիւն եւ ձգտում է, որուն կրնանք վերադառնալ օր մը: Սակայն Հէս այն գրագէտն է, որ Սթեփընսօլֆեր կրնայ ստեղծել, տարերային մթնոլորտ մը բանալ, որուն մէջ ամէն ինչ կը մտնանք եւ կը հարցադրենք մեր ներքին քառսը:

Սակայն այս չէ՞ իսկական գրականութիւնը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Byrne, Donn. *An Introduction to Personality*. 2nd ed. (New Jersey: Prentice-Hall; 1974).

Freedman, Ralph. *The Lyrical Novel* (Princeton: Princeton Univ. Press; 1963).

Hesse, Hermann. *Demian*, 26th ed. New York, Bantam books.  
*Siddharta*, 18 ed. New York, New Directions books.  
*Steppenwolf*, 11th ed. (London: Penguin; 1973).  
*Narciss and Goldmund*, 8th ed. (London: Penguin; 1974).  
*The Journey to the East*, 5th ed. (Manchester: Panther, Philips Park Press; 1975).  
*Magister Ludi (The Glass Bead Game)*, 7th ed. New York, Bantam books.

Nietzsche, F. *The Philosophy of Nietzsche*. New York, Random House.

Ziolkowski, Theodore. *The Novels of Hermann Hesse* (New Jersey: Princeton Univ. Press; 1965).

### «ՌԱՆՉՊԱՐՆԵՐ»ՈՒ ԾՆՆԴՈՑԸ...

#### ՍՊԱՂԱՆԱՑ ՄԱՍԿՐԻ ԵՒ ՇԷՆԻԿԻ ՄԱՆՈՒԿԻ

#### ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ

Ստացած ենք նաև նամակներ Գէորդ Չուուչի կնոջ Եղսոյի եւ անոր հազիւ մէկ տարեկան զուակ Վարդգէսի մասին: Կը զրէ զարձեալ Մանուկը, ներքահէլով իր ստացած բազմաթիւ նամակները Եղսոյի եւ փոքրիկ Վարդգէսի մասին: «Ձեմ կրնար հաւատալ տեսածիս. կառավարութիւնը հրաման է Հանել անպատճառ ձեռք ձգել Եղսոյին եւ մա'նուանդ նրա ծծկեր մանուկին՝ Վարդգէսին: Ո՛ր զիւղի սահմանում ձեռք բերաի, կը սպառնայ բնաջինջ անել այդ գիւղը: Կը հաւատա՞ս, նոյնիսկ Ս. Կարապետի անտառից դուրս են Հանած Եղսոյին եւ Վարդգէսին: Աստուած, ինչո՞ւ ուրացան նոյնիսկ վանքի միաբանութիւն, նոյնիսկ Վարդան վարդապետ, Ստեփան վարդապետ: Իւր քեռին՝ Մկրտիչ վարդապետ շթողուց Ս. Յովհաննու վանքի սահմաններում թաքնուելու ինչո՞ւ ծծկերին եւ իր մօրը. զիւղեր չեն սլահի. բոլորը կ'սպեն. — մի կնոջ եւ երեխի համար արժէ՞ մի վանք, մի զիւղ կործանել: Խնջ անեմ, չգիտեմ, տեղ չկայ դուրս սլահելու. կա՞մ պէտք է Եղսոյին, Վարդգէսին սպաննել, որ թշնամու ձեռք չանցնեն, կա՞մ պէտք է դաւաճանի, պէնամուսի յանցանքով սեռորի տալ Գէորդի յիշատակները մոռացողներին, կա՞մ պէտք է դուք մի ճար գտնէք»:

...Մակարի խօսքերը կ'ազդէին ընկերներու վրայ. ես պարտուած էի եւ մինակ մնացած իմ հաշիւներու մէջ: Սրբ յուսահատ հարց դրի, թէ «բա ինչպէ՞ս անենք Եղսոյի եւ Վարդգէսի հետը», քեռի Մակար հանդիստ իր խրատը շարունակեց: ...— Դու հուսա մնայ. Եղսոյի, Վարդգէսի գործը ինձ պիտի թողնես կարգադրելու:

Երբ հարցուցի, թէ ի՞նչ է քու միտքը, քեռի Մակար շարունակեց.  
— Ամէնքդ ալ գիտէք եւ արար աշխարհ, որ Սեբոբի կնիկ Սօսէին եւ Գէորդի կնիկ Եղսոյին եւ հակառակ եմ եղած. հակառակ եմ եղած, որովհետեւ Փետային իրաւունք չունի կնիկ ունենալու: Ինձ չհասկցան լուսհոգի Սեբոբ, Գէորդ: Սօսէն եւ Եղսոն իմ աղջիկներս են, իմ աչքի լոյսը: Էսա օրերը նախատեսելով հակառակ էի, անցածը անցաւ, մըկա լսեցէք ճըժեր: Գէորդ իմ հոգու կէսն էր, նրա նամուսը իմ նամուսը, նրա դաւակը իմ դաւակէն աւելի: Քեռի Մակարը թէ Եղսոյին չզնայ աղատելու, արար աշխարհը պիտի հաւատայ, թէ պէնամուս մարդ է քեռի Մակարը: Իմ ստածն է, դու տի մնաս, ես պիտի դնամ. թէ որ ողջ եկայ, ազդուժեան նամուս փերկած կը լինիմ, թէ որ ես մեռայ, շատ բան չի կորչի. քեռի Մակարը հայեւոր է արդէն, մի խնդրանք ունի, թաղէք իմ ջանդակ Գէորդի, Գայլէ կողքին:

...Եւ վերջապէս կը համբուրուինք քեռի Մակարի հետ: Ան կը զսպէ բնաջինք, չի փղձկիւր, բայց այնպէս կը համբուրէ, որ կը զգաս, թէ վերջին համբուրն է:

Գացին. կը բարձրանան լեռան կածանով. մենք կանգնած կը հետեւ

ւինք նայուածքով: Ենթիկի Մանուկը կանգ առաւ եւ կանչեց. «Ձոր, Ձոր, իմ ճփերին եթիմ լիթողնես»: ...Ձորն ո՛չ միայն Մանուկի հին պինակից ընկերն էր, այլեւ հորեղբոր տղան, երկուքն ալ Ենթիկի քաջ առնձէ ծնած: Ձորն չգիտացաւ, փղձկաց ու լացաւ. եւ փոխանակ պատասխանի՝ ըսաւ. «Մարտէ վկայ, փորձանք պիտի դայ, ես դնամ, պարոն, Մանուկին դարձուր»: «Մի ծըռիր, Ձոր, բան չկայ», ըոի, բայց նախազգացում մը կ'ըտէր մէջս, որ այս ճամբորդութիւնը վաս պիտի վերջանայ:

Մակար կ'երթայ իր փոքրիկ խումբով, Ենթիկի վրայով կը զարնէ Կուսթիկ լեռը, կը մանէ Ամրէի Գեալին եւ կը կանդնի Փեթարի գլխուն:

Այն պահուն, երբ քեռի Մակարը Մասուէնէն կ'իջնէր Փեթար, Դաշտէն Փեթար կը բարձրանային Գրբրոն եւ Տիգրանը՝ իրենց հետ առած Գէորգ Զաւուչի կինն ու զաւակը, ինչպէս նաեւ Փեթարի Մանուկը՝ խումբ մը ֆետայիներով, որոնք չկարողանալով Դաշտի մէջ տակալ հալածանքներուն, կը զարհնէն դէպի Տարբուի շղթան եւ Փեթարի մէջ հանգիստ կ'ընեն արշարոյթին:

Այն խմբակը, որուն մէջ կը լինի Մշեցի Ռուբէն, կը նկատէ, թէ մօտիկ լեռան լանջերուն սեւ շերտ մը կայ, կը շարժի: Ռուբէն կը հարցնէ գիւղացիներուն՝ ոչխար է, տաւար է, անոնք շտաժ էին, այլ պահուն ոչխար ինչ գործ ունի սարերու վրայ: Ռուբէն անմիջապէս իմաց կու տայ խումբերուն, ինք քանի մը հոգիով կը մօտենայ սարերուն, կը տեսնէ, որ դօրք է, որ կը սպասէ արեւուն ծագման:

Ես կու դայ Մշեցի Ռուբէն (Ռոն) եւ կ'ըսէ Մակարին. «Մ'նչ կ'անես, քեռի, մենք պաշարուած ենք»: Մակար կը պատասխանէ. «Բան չընկայ, ձագուկ, դադարած իմ փշուր ըմ»: Յետոյ կ'ամբողջնէ տրեխները եւ ոտքի ելլելով կը հրամայէ. «Շուտ արեք, երեք բաժին դուք եղէք, Ղազար թեթեւ (արագափայ) ինչ կ'անէ-չանէ՝ թող հինգ հոգի վերցնէ եւ լեռան գրուխը բռնէ: Ամրէի Գեալու Յից քարը անպատճառ բռնէ. ես մէջտեղից կ'երթամ. Մանուկը (Ենթիկցի) ինծի հետ թող լինի. Փեթարայ Մանուկ խումբի ետեւէն թող շարժուի: Հայցէք (նայեցէք) ձգուկներ, վախից չկրակէք, զօրքի միջովը առանց կրակի վերեւ բարձրացէք»:

Եւ կը սկսի նահանջը: Ֆետայիներու թիւն է 21-23, մինչ զօրքերը անհամար են: «Այ քեռի Մակար, մի կարգադրութիւն եղադի եւ Վարդգէսի համար», կը հարցնէ Առդայ Տիգրանը: Մակար կը հրամայէ. «Ձգուկ, սուկեարը շատ է, իմ բախտը սեւ, Վարդգէսին թող գիւղացոց մէջը, ճիժ է, գուցէ փրկուի. Եղսոն նամուս է, թող թշնամուն շանցնի, զարկ ու մեզ հասեր»:

Բայց Մակարը մէկ հաշիւ չէր բրած, որ Ս. Յովհաննու վանքը հազիւ մէկ ժամուայ ճամբայ է եւ հոն զօրքեր կան, որոնք դիւրաւ պիտի դան եւ իրենց վերելի լեռները բռնեն: ...Կը նահանջեն արագ. բայց Մակարը ծերունի է, յոգնած, տաքերու ուժը կորսուած է արդէն:

Նահանջող ֆետայիները կը հանդիպին դալըկցիներու օբային. այս քուրտները կը ջանան ֆետայիներու ստաղքը կտրել, բայց քանի մը սպաննուած տալով՝ կը փախչին. ֆետայիները անոնց տեղերուն մէջ մածուն, հաց կը դտնեն, կ'առնեն, ուտելով կը նահանջեն: Էլ մը կը բռնեն, Մակարը վրան կը նստեցնեն եւ կը շարունակեն առաջանալ: Թշնամին երկու կողմերով զուգահեռ կ'ընթանայ, կը հարուածէ, բայց չի կրնար ֆետայիներու շարժումը արգիլել:

Կէսօրը անց է արդէն. շատ դժուարին ճամբայ մը կայ ֆետայիներուն առջև, թէ որ բարձրանան լեռը, կանգնած կը լինեն Ենթիկի գլխին (Դուքար

նէ Ձիֆդրան) : Հոյժեանքն կը բարձրանան Դուքանէ : Նորէն Ղազարն է առաջապահը, Մանուկն է յետապահը : Ղազար կը յաջողի ելլել կապարը, բայց Մակար ույրեւս անկարող է շարժուելու : Ան կը պնդէ, ազատուէք ինքնեքը, սպաննէք ինձ : Բայց սպաննող չի գտնուիր : Կ'առնեն զէնքերը, ասըրճանակը, խնչալը եւ սիրտ կու տան, որ քալէ ծերունին : Բայց անհետարին է. երկու Մանուկները, Ռոն եւ Գըրրոն զբազուած են Մակարը տեղէն շարժելու գործով :

Թշնամին կը մտտենայ. ան արդէն հասած է քանի մը տասնեակ քայլի վրայ : Մակարի ցանկութիւնը կը կատարուի, զնդակ մը կ'առնէ, բայց չի մեղմիր. կարծես ուժ կ'առնէ ստացած վէրքէն. նորէն կը շարժուի եւ ընկերներու պաշտպանութեան տակ կը հասնի Դուքանէ Ձիֆդրան :

Այստեղ Խաչիանցի աշխրհիքը զոգան է ելած. ցեղապետն է Ռըզլո ազան, Մակարի ծանօթ բարեկամ : «Ես պիտի մեռնիմ, ինձ թողեցէք քրտերի միջին. գուցէ չսպաննեն, զուք ազատուեցէք, քանի Մանույ զօրքերը չեն բռնած առաջներդ», կը ինչդէ Մակար :

Ֆեսայիները կը թողուն քեռի Մակարը եւ առաջ կ'երթան կռուի տալով : Մակայն Շէնիկի Մանուկ չի համաձայնիր վերաւորին թողուլ միայնակ եւ կ'ըսէ. «Ես ուխտ ունեմ զեզի հետ մեռնել, քեռի» : Մանուկ կը յառաջանայ զէպի քիւրտերու զոգանը : Քիւրտերը կու գան դիմաւորելու, բարեւ կու տան, բարեւ կ'առնեն ու կը խոստանան պահել Մակարը : Բայց յանկարծ քիւրտերէն մին նախաձեռն մը կը քաշէ եւ Մանուկին զլիտան կ'իջեցնէ, արիւնը կը հոսի, աչքերը կը լեցնէ : Մանուկ կը քաշէ տասնոցը, կը կրակէ եւ քիւրտերու մէջէն երեք սպաննալ ու երեք միւրաւորը կը ձգէ : Ինքն ալ կը զարնուի թեւերէն : Այս վիճակին մէջ կը փորձէ փախչիլ ու հասնիլ կա՛մ ընկերներուն եւ կա՛մ իր հայրենի զիւղը, Շէնիկ : Քիւրտերը կը թափին վերաւոր Մակարի վրայ եւ նաճախով ու խնչալով հողին կը հանեն :

Մանուկ կը հասնի դառիթափով իրենց զիւղի վրայի քարերը : Ան վերկուրթին կը սպասէր իր հայրենի զիւղէն, բայց ի գուր : Շէնիկ հերոս գիւղը հպատակած էր. զիւղացիք տան կտուրներէն կը դիտեն Մանուկի միայնակ պայքարը : Սեմալի զօրքերը, որոնք զիւղն էին բռնած, կը ջանան առաջըր կտրել Մանուկին :

Մանուկ կը կրակէ, բայց ի գուր : Յուսահատ կը ջարդէ հրացանը, կը ջարդէ աւորմանակը քարերու վրայ, իր գրպանի ժամացոյցը կը նետէ անդունդի մէջ եւ, քարի ծայրին նշան կանգնելով՝ զնդակ մը կ'ընդունի զլիտն ու կը զլտորի ձորը, զօրքին ու հարազատներուն աչքերուն առջեւ : Այս գեղեցիկ մահը տեսնելով՝ Շէնիկի մէջ կանգնած սպաններէն մին կ'ըսէ. «Ախտա՛ քեզ, հազար ափսոս, որ մի իկիտ կը սպաննենք, երնէկ քո տիրոջ» :

Ըստ Մակարի հրահանգին, Տիգրան ծծկեր վարդդէսը կը յանձնէ պառու կնոջ մը եւ կ'ըսէ. «Փախցրու, ազատէ, թէ որ ձեռք անցնի, քո եօթը պարտը սրից կը քաշենք. թէ որ ազատի, կշիռքովը ոսկի պիտի տանք» : Եղտոյին կ'ըսէ. «Ել երթանք իրարու հետ» : Եղտոյին հետ կը լինի Գուլէ անունով կին մը եւս, վարդդէսի դայեակը, որ խորամանկ մէկը ըլլալով՝ կ'ըսէ Եղտոյին. «Եղտո, մի՛ գնա, քեզի կը սպաննեն» :

Եղտոն կ'աղաչէ. «Տիգրան, դու Տիգրան, ազատէ ինձ, կա՛մ դու պիտի մեռնես Գէորգի համար, կա՛մ ազատես նրա կնիկը. դու որ ինձ զարնես, ամբողջ ազգութիւնը իւր եօթը պորտով քեզ մայրասպան կ'առէ» : Տիգրան կը համոզուի, զէնքերը կը թափէ, կնկայ շորեր կը հագուի, որ չտեսնուած բան



էր Փետրուարի կեսերէ մէջ, եւ Եղորտի Հետ դորգէրու մէջէն անցնելով կը  
ժամախ դէպի Դաշու:

Դ. հատոր, էջ 203-212

«...Սուլթանից հրաման կայ, որ յայտնաբերենք եւ ոչնչացնենք բոլոր  
ֆետայիներին, իսկ Գեորգ Զաւուշի կնոջը եւ երեխային բռնենք-յանձնենք  
սուլթանի ձեռքը»:

...Շուտով ստացուեց Բաղէշի կառակալի եւ Մշոյ կառավարչի հրա-  
մանը, որով պահանջուեալ էր ամբողջ երկրում որոնումներ սկսել: Հրամա-  
նում ասուած էր, որ եթէ որեւէ գիւղ կամ վանք համարձակուի թաքցնել նը-  
բանց, հիմնայաւասկ կը կործանուի:

Այդ հրամանինց երկու օր յետոյ, մեզ ներկայացաւ Յեսու վարդապետը  
գրեթէ լայահառայ: Նա խնդրեց Գեորգի ընտանիքը շտապ հեռացնել Ս. Կարա-  
պետի վանքից: «Մի կնոջ եւ երեխայի համար արժէ՞, որ մի վանք կամ գիւղ  
կործանուի», ասաց ծերունի վարդապետը:

Ի՞նչ անել: Մեզ մնում էր Հեղինէին եւ Վարդգէսին սայաննել կամ ա-  
րեւէ միջոցով փրկել նրանց, առանց վնաս պատճառելու վանքին: Թոյրս հա-  
ւաւումս էինք անտառում եւ մտածում էինք մի ելք գտնել՝ դուրսից  
դուրս գալու համար:

Սպազանաց Մակարը գլուխը կախ գցած՝ իր համրիչն էր քաշում: Կող-  
քին նստած էին Շենիկցի Մանուկը, Մօրուհ Կարապետը եւ Զոյուն:

Ես քեռի Մակարի դէմքին վրայ կարգացի. «Հիշո՛ւ է, ես հսկառակ եղած  
եմ Գեորգի ամուսնութեանը և նրա գործելակերպին. ըմբռստացել եմ նրա դէմ  
եւ պատժուել զրա համար, բայց եզտն իմ ազնիւն է, իմ աչքի լոյսը: Գեոր-  
գը իմ հոգու կէտն էր: Այժմ երբ նա չկայ, նրա նստուսը իմ նստուսն է, նրա  
ժառանգը՝ իմ ժառանգը: Եթէ Մակարը չզնայ եղաւյնի ազատելու, արար  
աշխարհ պիտի կարծէ, թէ քեռի Մակարը անձամուս մարդ է»:

Ու կազմու տակից վեր կացաւ Սպազանաց հսկան: Կայեց գէնքերը եւ,  
ծանր ձեռք իմ ուսին դնելով՝ ասաց.

— Ես կ'երթամ եզտային եւ մանուկ վարդգէսին փրկելու: Ես նրանց  
կը տանեմ Սասուն: Թէ որ ոչք եկայ՝ ազգութեան պատիւը փրկած կը լինեմ,  
թէ մեռայ՝ մի մեծ բան կարգած չէ՛ք լինի: Քեռի Մակարը հալուոր է ար-  
դէն: Միայն մի խնդրանք ունի. իր ջանդակը կը թաղէ՛ք Գեորգ Զաւուշի կող-  
քին:

Մէկ-մէկ համբուրուեցինք զնացողները հետ: Քեռի Մակարը այնպէս  
էր համբուրում, որ կարծես այլեւս չպիտի տեսնուէինք:

Մակարն իր խմբով բարձրացաւ լեռան կածանով, իսկ մենք կանգնած  
նայում էինք նրանց ետեւից: Յանկարծ Շենիկցի Մանուկը ետ դարձաւ եւ  
զուսաց.

— Զոյօ, Զոյօ, իմ ոտերին (երեխաներին) եթէմ չթողնես:

Զոյուն չգիմացաւ, վիզակաց եւ երեխայի պէս լաց եղաւ:

Մի օր յետոյ Ախուն եւ Դրախտ Պետուն վերադարձան:

Եւ Պետուն պատմեց.

«Սպազանաց Մակարը Շենիկցի Մանուկին ուղարկեց Ս. Կարապետի  
վանքը՝ Գեորգ Զաւուշի կնոջը եւ երեխային բերելու, որ տանի Սասուն, իսկ  
ինքը իր փոքրիկ խմբով կարեց Կարտիկի լեռը, մտաւ Ամրէի Գեալէն եւ  
լուսարացի դէմ դուրս եկաւ Փեթարի գլխին: Մէկ էլ էն տեսնեմք, Շենիկցի  
Մանուկը, որ մեզնից բաժանուելով գնացել էր Ս. Կարապետի վանքը, դէպի»

Փեթար է բարձրանում՝ հետը առած Հեղինէին եւ Վարդգէսին: Քեռի Մակարը ուրախացաւ եւ կարգադրեց ցերեկը հանգստանալ Փեթարում, իսկ գիշերը ուղեւորուել Սասուն: Այդ խօսքի վրայ էինք, երբ Ալոն ասաց. «Էս ի՞նչ սեւ շերտ է լերան լանջին, ոչխար է, թէ տաւար»: Բայց ոչխարը կամ տաւարը ի՞նչ գործ ունէր սարի վրայ, վազ լուսադէմին: Մի գիւղացու ուղարկեցինք, որ մտնիկից իմանայ, թէ դա ինչ բան է: Մեր ուղարկած մարդը ետ եկաւ եւ ասաց. «Ո՛չ ոչխար է, ո՛չ տաւար. օւմանցու գորբ է, սարն ընկած՝ Գեորգ Չաւուշի կնոջը եւ երեխային եմ փնտռում եւ նրանց փախցնող փեղայիններին»:

Մերունի Մակարը, որ պատրաստուում էր ցերեկը Փեթարում հանգրտանալ, տրեխները ամրացնելով ելաւ ռաֆի: Կա ինձ հրամայեց երեք հոգով բռնել լերան գլուխը՝ Ամրէի Գեալու Յից ֆարը: Ինքը վերցրեց մէջտեղի գիծը, իսկ Շէնիկցի Մանուկին կարգադրեց իր ետեւից շարժուել: Մենք պէտք է առանց կրակելու վեր բարձրանալով անցնէինք գորբի միջով:

— Իսկ Հեղինէին ի՞նչ անենք, ինչպէ՞ս փախցնենք Սասուն, — հարցրեց Շէնիկցի Մանուկը:

— Ձգուկ, ասկեարը շատ է, իսկ իմ բախտը՝ թեւ, — ասաց քեռի Մակարը, — մենք նրանց մեզ հետ տանել չենք կորոզ: Վարդգէսին տուր առաջին պատահած հայ կնոջը, ճիծ է, գուցէ կը փրկուի, իսկ նզսն նամուս է, բշմամու ձեռքը չանցնի, զարկ ու եկ մեզ հասիր:

Բայց ճիշդ կրտսեց իշխան Մակարը, որ իր բախտը սեւ է: Ս. Յովհաննու վանքի կողմից նոր գորբ էր եկել եւ գաղտնի բռնել Ամրէի երկու թւերը: Ստիպուած նահանջեցինք՝ թռչնելով լերան գագաթը:

Շատ արագ էինք նահանջում, իսկ Մակարը ծեր էր եւ ռաֆերին ուժ չկար: Քրդական մի բարեկամ օրայի հասանք: Օրայից հաց առնելով, շարունակեցինք մեր նահանջը: Մակարն ուղղակի ուժասպառ էր եղել եւ ծրնկները ծալուում էին: Մի էլ բռնեցինք, ծերունի Մակարը նստեցրինք վրան: Մի շատ դժուար վերելք կար մեր առաջ: Այդ շահնկու սարն էր: Եթէ այդ լեռը յաղթէինք, կը լինէինք Շէնիկի գլխին:

Մակարն այլեւս անկարող էր շարժուել՝ ո՛չ ստեղծ, ոչ էլ աւանայինն նստած: Ու խնդրեց քեռի Մակարը, որ իրեն սպաննենք, իսկ մենք մտածենք միայն մեր փրկութեան մասին: Բայց ո՛ւմ ձեռքը բարձրանալ քեռի Մակարի վրայ: Առանք գեմերը, ֆանդեցինք փամփուշտները եւ սիրտ տուեցինք, որ ֆայլի: Մակարն ի գուր. Շէնիկցի Մանուկը, ես եւ Փեթարայ Ախոն շատ զբաղուեցինք Մակարին տեղից շարժելու գործով:

Թշնամին արագ մտնում էր, գտնում էր մի քանի տասնեակ ֆայլի վրայ: Մակարի ցանկութիւնը կատարուեց: Մի գնդակ հեռուից գալով խոցեց Սպաղանաց իշխանին: Մակարը գզաց, որ թշնամու գնդակ է: Վերջից ուժ առած՝ տնկալով շարժուեց առաջ եւ մեր պաշտպանութեամբ հասաւ Շէնիկի գլուխը — Դուխանէ Քերան:

Խաշկանցի ցեղապետ Ռեզֆօ ազայի աշխրեթը գոգամ էր ելած: Ռեզֆոն Սպաղանաց Մակարի հին ծանօթներից էր: Մակարը խնդրեց, որ իրեն թողնենք Ռեզֆայի ամբարնոցում, իսկ մենք ազատուենք, քանի դեռ գործը այդտեղ չի հասել:

Շէնիկցի Մանուկը համաձայն չեղաւ քեռի Մակարին վերադարձնելու մեծակ թողնել այդտեղ:

— Ես ուխտ եմ արել ինչ հետ մեռնել, քեռի, — ասաց Մանուկը եւ, մեզմից բաժանուելով՝ մնաց ծերունի Մակարի հետ: Հեռուից տեսայ, թէ ինչպէս նա առաջացաւ դէպի ցեղապետի օրան, որ կարգադրութիւն անի Մա-

կարի համար: Այդ միջոցին հայի ազայի կատարի քրդերից մէկը, որ այդ-  
տեղ էր, մի նախաջ քաշելով, թափով իջեցրեց Շէնիկցի Մանուկի գլխին:  
Մանուկն իրեն չկորցրեց: Քաշեց տասնցը և երեք-չորսին տպաննելով և  
մի քանիսին էլ վիրաւորելով, ինքն էլ թեւից գարկուած, փարձեց փախչել  
դէպի իր հայրենի գիւղը՝ Շէնիկ: Մակարը մեծակ մնաց շաննիկ սարում:  
հալիլի քրդերը թափուեցին վիրաւոր, անգէն ծերունու վրայ և նախախն-  
բով (կեռ սուր) տպաննեցին նրան:

Մանուկը գտնիթափով հասաւ Շէնիկի վերելի քարերը: Կրակեց, որ  
շէնիկցիները օգնութեան գան, բայց Սեմալից եկած գորգը պաշարել էր գիւ-  
ղը, և նրանք տանիքներին կանգնած՝ անգոր դիտում էին նրա մեծաւոր պաշ-  
խարը: Փեղային գայրոյթից իր երացանը և ստրնանակը քարերին գարկելով՝  
ջարդեց և թռչելով մի քարածայրի, որի տակ շաննիկ սարի մեծ վիհն էր  
բացում, մի գնդակ առաւ իր հպարտ նակասին և, արծուի նման նայրե-  
լով՝ գլորուեց անդունդ:

Այդպէս մատազուեց քաջարի սասունցին:  
Մի թուրք սպայ, տեսնելով այդ հերոսական ու գեղեցիկ մահը, բարձ-  
րաձայն գոչեց. «Ափսո՛ս, էրմենի էգիթ, որ քեզ հայ է ծնել»:

Քեռի Մակարի հրամանի համաձայն, Շէնիկցի Մանուկը ծծկեր վարդ-  
գէտին յանձնեց փեթարցի մի պառաւ կնոջ, որ պահի: Եղտնն նստել էր այդ  
կնոջ կողքին և չէր ուզում երեխայից բաժանուել: Ես Եղտնի ձեռքից բռնե-  
լով՝ ասացի. «Երբեք իրար չես: Բայց փեթարցի կինն ասաց. «Եղտն, մի՛  
գնա, բեզի կը սպաննեն»: Եղտն չոքեց իմ առաջ և ասաց. «Տիգրան, կա՛մ  
քու պիտի մեռնես Գէորգի համար, կա՛մ պիտի ազատես Գէորգի կնոջը և  
բեխոյան: Եթէ ինձ գարկես, ամբողջ ազգութիւնը միմչեւ եօթը պարտ քեզ  
հայրասպան պիտի սախ»:

«...Հարկադրուած հազայ կնոջ շոր, դնչկալով ծածկեցի իմ բեզը և,  
Եղտնին ու վարդգէտին վերցնելով՝ իջայ դէպի Դաշտ»:

«Ռանչպարներ», էջ 176-183

**ՅՈՒՎԱՆՆԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՏԱՊԱՆԸ**

*Վանքի խաչքարերու մօտ փոս մըն էր փորուած, փոռին ըով տապա-  
նաքար մըն էր դրուած և տապանաքարին վրայ արձանազրուած. «Սա է տա-  
պան ի Տէր Հանգուցեալ Յովհաննէս վարդապետի յամին...», թուականի  
տեղը բաց էր թողուած:*

- Լաւ, որ էդպէս է, ասա՛՛ վերջալոյս և ոչ արշալոյս:
  - Զէ, կը սխալիս, որդիս. արշալոյս. այս փոսն կը սկսի նոր կեանք,  
ինչպէս արդանդէն սկսուած է այս կեանքը:
- Ե. հատոր, էջ 20-21

Վանքի միաբանութեան աւագ՝ Յովհաննէս վարդապետն էր: Այդ փո-  
սը ինքն էր փորել: Փոսի եզրին դրուած էր մի տապանաքար՝ նետուեալ ար-  
ձանազրութեամբ. «Սա է տապանն ի Տէր հանգուցեալ Յովհաննէս վարդա-  
պետի յամին...», մահուան թուականը բաց էր թողնուած:  
— Հայր սուրբ, — ասացի, — միթէ՞ այս ուրախութիւնը սրձա-

գանգ չունի մեր սրտի մէջ : Մոռցե՛ք այդ փոսը , չէ՞ որ Հայաստանի վրայ ար-  
շալոյս է ծագել :

— Իմ արշալոյսը այս փոսի մէջ է , — առանց գլուխը բարձրացնելու  
շնչոց ծերունի վանահայրը՝ ձախ ձեռքը կոխելով իր կուրծքը վերմակի պէս  
ծածկող սպիտակ մորուքի տակ :

«Ռանչպարներ», էջ 189-190

Ժողովուրդը խուսնէրսմ ուխտի կու գար Առաքելոց վանք , բայց Յով-  
հաննէս վարդապետն ու վանքը կը շփոթէր իրարու հետ եւ յաճախ հայր  
սուրբին կ'երկրպագէր փոխանակ վանքի տաճարին :

Ե. հատոր , էջ 18

Այնքան բարի մարդ էր այդ ծերունին , որ մեր ուխտաւորները նրան  
յաճախ շփոթում են վանքի տաճարի հետ . փոխանակ վանքին երկրպագելու ,  
նրան են երկրպագում , ամուսնելով «Առաքելոց տարբ» :

«Ռանչպարներ», էջ 190

**ՔԻԻՐՏ ՀԸՍԷԻ ԿԱՐԾԻՔԸ**

Խուժայ , Մոսկանայ քրտու եւ հայու մէջ տարբերութիւն չէս կարող  
զտնել , նոյնիակ քրտորը լեզուով հայախօս են , քրտերէն չզիտեն : Բունաչէնի  
վանքը՝ մեր Ս . Աղբերիկ , Մարութայ Ս . Աստուածածին՝ մեր մայրամանէն ,  
նաչ եւ Ռաշ սարը մեր ուխտատեղին են : Մեր մէջ մէկը անունով հայ է ,  
միւսը՝ անունով քիւրտ , մէկը խաչապաշտ , միւսը՝ իսլամ : Բայց թէ բոլորն  
էլ մէկ են , Խուժայ Դաւթի զաւակներ :

Գ. հատոր , էջ 320

**ՂԱՍԸՄ ԲԵԿԻ ԿՆՈՋ ԿԱՐԾԻՔԸ**

Խուժի եւ Մոսկանի քրդի եւ հայի մէջ տարբերութիւն չկայ : Նոյնիակ  
քրդերը լեզուով հայախօս են : Մեր մէջ մէկը անունով եռյ է , միւսը՝ անուն-  
նով քուրդ , մէկը խաչապաշտ , միւսը՝ իսլամ , բայց բոլորն էլ մէկ են՝ ե՛ւ  
Բոնաշէնի վանքը , ե՛ւ Մարութայ Ս . Աստուածածինը՝ մեր բոլորին ուխտա-  
տեղին :

«Ռանչպարներ», էջ 160

**ՔԷՕՍԷ ՊԻՆ ՊԱՇԻՆ**

...Բնիկ Կուպանի շրջանէն , ազգով կապարտին : 1878ին , ուսումնա-  
կական պատերազմին կամաւոր կ'երթայ տաճկական բանակը , Շեպկոյի կը-  
սիւններուն մէջ քաջութիւններ կը գործէ եւ կը դուռնայ սպայ . յետոյ աչքի  
կ'իյնայ Եմէնի եւ Մակեդոնիոյ կոխներուն մէջ եւ կը բարձրանայ Հարիւ-  
րապետի աստիճանին , թէեւ միշտ անոր անունը «Քէօսէ օնպաշի» կը մնայ :  
1904ին Մասնոյ ապստամբութիւնը ճնշելու մէջ մեծ դեր կը խաղայ եւ հըռ-  
չակ կը հանէ ինչպէս հայերու , նոյնպէս թուրքերու եւ քիւրտերու մէջ (Կ .  
հատոր , էջ 134) :

«Անցեալ օր սպայ մը , երբ հայհոյանքներով կը պախարակէր Գէորդ

*Զաւուշն ու քեզ եւ փեսաւ կ'անուանէր Հայերը, Գէօնէ Պինպալին բարկացաւ եւ ըսաւ:— «Ես եթէ Հայ ըլլայի, պիտի ըլլայի Գէորգ Զաւուշ» (Դ. հատոր, էջ 132):*

Դ. հատոր, էջ 132-134

Քոսա Բիմպաշին Կուբանի թաթարներինց էր: 1878ին մասնակցել էր ռուս-տանկական պատերազմին իբրեւ կամուտը: Կռուել էր Գանու Շեպկայի պատերի տակ: Եմէնի եւ Մակեդոնիոյ կռիւներում բարձրացել էր հարիւրապետի աստիճանին: Վերջին տարիներին եկել էր Մուշ եւ, Սասնոյ մեծ ապստամբութիւնը մնշելով՝ դարձել էր Բաղէշի ճահանգի ամենահեղինակաւոր զինուորականը: Քոսան սկզբունքով դէմ չէր փեղայիներին: Նա անձամբ սիրում էր Գէորգ Զաւուշին եւ յամախ իր սպաներին ասում էր. «Եթէ ես հայ լինէի, կ'ուզէի Գէորգ Զաւուշ լինել»:

«Ռանչպարներ», էջ 171

**ԱՍՎԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ Ի ԼՈՒՐ**

*.. Մկրան պատմել, թէ ազատութիւն է, Ստամպուլի մէջ Սուլթան Համիտի թախաբան ֆետայիները քանդեց հե, ա՛հա նամակներ կը ստանինք Սասնոյ դօրքերուն, որ քաջութիւն Հայաստանէն:*

Դ. հատոր, էջ 382

Նրանցից մէկը ուզապի մտնեցաւ մեզ եւ առանց ուշադրութիւն դարձնելու մեր զենքերին ու ահարկու տեսքին, բղաւեց. «Փեղայիները քանդեցին Սուլթան Համիտի թախտը: Սասնոն էրմենիստան է լինելու»:

«Ռանչպարներ», էջ 188

*Փետայիներս կը ժողովուրդնք տուանքին: Ի՞նչ պիտի ընենք: Ես իմ մէջ վճռուած եմ այլեւս, իջնել լեռներէն, գէնքերը վար դնել եւ լծուիլ խաղաղ աշխատանքի:*

Դ. հատոր, էջ 387

Հարցը պարզ է դրուած. մեզ հրաւիրում եմ իզնել լեռներից, գէնքերը ցած դնել եւ լծուիլ խաղաղ աշխատանքի:

«Ռանչպարներ», էջ 190

*«Քեզի բան մը ըսեմ, դու սիրտդ չառնես. սահմանադրութիւն արին, որ ֆետայիները թախտ լինին. ձեզ խաբեցին, որ օր ու գիշեր իրանց ուզածը անեն խեղճ ժողովրդի գլխին», կ'ըսէր Մոկուսաց Դաւոն:*

Ե. հատոր, էջ 28

— Սահմանադրութիւն արին, որ ֆեղայիները թախտ լինեն եւ իրենք իրենց ուզածն անեն մեր ժողովրդի գլխին, — դժգոհեց Մօրուք Կարապետը եւ սասունցիներին կոչ արեց գէնքերը չյանձնել:

«Ռանչպարներ», էջ 190

*Ձուրն ու Մանուկը յուզուած — «ձ0 տարի է Ֆետային թուայիմ չէ հղած. մենք ուխտ ենք արած զէնքով մեռնելու. օսմանցուն ի՞նչ խղճով է, որ զէնքդ կու տաս»:*

Դ. հատար, էջ 387

— Քառասուն տարի ֆեդային թասլիմ չէ եղած: Մենք ուխտ ենք արել զէնքով մեռնելու. դու ի՞նչ խղճով քո զէնքը համաձայն ես օսմանցուն տայ, — Ալիզոնանցի Մուսոյի առաջ ցցուելով՝ տուխցած խօսեց կայծակ Անդրէասը:

«Ռանչպարներ», էջ 191

— *Մանուկ, դու ի՞նչ պիտի անես:*

— *Ե՞ս. ես վալլահ մեր տուն դարձողը չեմ, բան չունիմ դառնալու համար. ես այս երկրում այլեւս ապրողը չեմ. ես կ'երթամ Բագու, Ռուսիա, հոն ինձ ճանչցող չկայ:*

Ս. հատար, էջ 56

Մանուկ կրկնեց Ձուրնի խօսքը՝ սեւ մագոս արան ուսերին փաշելով.

— Իսկ եթէ պահանջեն զէնքերը յանձնել եւ տուն դառնալ:

— Ես տուն դարձողը չեմ: Ես երկրում այլեւս ապրողը չեմ: Կ'երթամ Ռուսիա, մայրաքաղաքի երկիր: Ինձ հոն փանչող չկայ, — ասաց փեթարցիմ:

«Ռանչպարներ», էջ 192

*Ձուրն կ'ըսէր. «Ես այլեւս ազգութիւն չեմ ճանչնայ. ես պիտի դնամ եւ մեր սարերում շողան պիտի լինեմ»:*

Ն. հատար, էջ 56

— Ձուօ, դու՞:

— Ես կ'երթամ մեր սարերը, չորան կը լինիմ:

«Ռանչպարներ», էջ 192

— *Ի՞նչ շուտեցաք, — կ'ըսէին Գոմսայ Մելիքն ու Մոսոն, — Հէչ որ չիկնի, զեղի գրագիր կամ գրիչ կը լինինք, մինչև. որ էլի ճրագով մեր յետևը ընկնին:*

Ս. հատար, էջ 57

Փրանկ-Մոսոն ասաց.

— Եթէ պահանջուի զէնքերը յանձնել, ես կը վերադառնամ Նորշէն, իմ կափարի մօտ: Հէչ որ չեղաւ, մեր գիւղում գրագիր կամ գրիչ կը լինեմ, մինչեւ որ ճրագով էլի մեր ետևը ընկնեն:

«Ռանչպարներ», էջ 193

**ԶԱԼԻՆԻ, ԶԸՆԹՈՅԻ ԵՒ ԱԷՅՏՕ ՊՕՂՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ**

..Միւս կողմից Ղարսը բեկ կ'առէ՝ արի իրարու հետ աշխատենք, զնանք մինչեւ Մոսկան, մինչեւ Ղարզան, բուրբին՝ հայ ու քիւրտ՝ ստքի հանենք, օսմանցու թախթը փլցնենք:

Ինչանք Ս. Կարապետի Վերի Փական: Անտանէլի էր լեռներու վրայ անձրեւի տակ մտալը: Այստեղ տաք էր եւ լաւ, բայց այս փոփոխութիւնն ալ Ձաւէնի մտքին վրայ չէր ազդեր. ան դարձեալ կը պնդէր, որ զինք զրհեմ Ղարսի մօտ՝ Ջընթոյի հետ միասին: Երանի թէ նախորդ դիւեր Ջընթոն ալ ճամբած ըլլայի. ան այժմ Սէյսո Պողոսի միտքն ալ դարձուցեր էր, եւ այժմ երեքն ալ՝ Ձաւէն, Պօղոս եւ Ջընթօ կ'ուզէին երթալ Ջուխուրի շրջանը:

Քանի որ որոշում դժուար էր հանել, ըսի թէ որոշում չկայ, այլ ասոնք են կարծիքները, ես ալ դէմ եմ, ինչ կ'ուզէք ան ըրէք: «Մեր որոշումը երթալ է», ըսին վճռական կերպով Ձաւէն եւ Ջընթօ, իսկ Սէյսո Պողոս մըտաւանջօրէն կը համակերպէր անոնց: «Ուզուր լինի, դուչէք», եւ ուրախ-զուարթ ճամբայ ելան Ջընթոն, Ձաւէնը, Յովհաննը եւ անոնց հետեւն անձման Սէյսո Պողոսը:

Կ'իշխան ճամբայ դէպք Ջուխուր. դիմաւորելու կու գայ Ղարսը բեկը, կը հասնին Արտոնք դիւղ, կ'իջևանին «Մուրրի տունը»: Ղարսը բեկ կը նստի քէֆի, լաւ կը խմեն մեր ընկերներու հետ մինչեւ կ'ս գիշեր: Քնանալու ատեն իրարմէ կը բաժնուին. Ձաւէնը, Ջընթոն, Սէյսո Պողոսը եւ Հասանոն իրարու հետ մէկ սենեակի մէջ կը քնանան, իսկ Ղարսը բեկ իր ծառաներով կը քաշուի դիւղի միւս տունները:

Երբ բուրբը կը քնանան, Ղարսը բեկ իր ծառաները կը ճամբէ Հըռէի դիւաւորութեամբ «Մուրրի տուն» տանիքը, որուն տակ կը քնանային Սէյսոն, Ջընթոն եւ Ձաւէնը: Անոնց հետ պատկած Հասանոն առաւ քուն է Եղեր. երբ տանիքի վրայ ոտնածայն կը լսէ եւ կը ստուգէ, որ ընկերները քնացած են, անոնց զենքերը անաղձուկ տանիքի պատուհանէն դուրս կու տայ Հըռէին: Այսպէսով մեր ընկերները քնանալու ժամանակ դիւաւորի վիճակի կը մտանուին: Հասանոն դուրս կը բանայ. ներս կը մտնեն «ընկեր» քիւրտները եւ, առանց արթնցնելու, հրացաններու փողերը կը զնն Ֆետայիններու դուրսնելուն եւ կ'արձակեն: Դժբախտ Ձաւէնն ու Ջընթոն քնած կը մահանան, Սէյսոն կիսամեռ կ'արթննայ, «եա պէպիտներ» կը դռնէ, ձեռքը զենքին կը տանի, բայց աւա՛ղ, զէնք չկայ, կ'ուզէ մաքառել, կը ստանայ քանի մը զննակ ու կը մահանայ:

Գ. հատար, էջ 324-327

1907 թուականի սյունն էր: Կովկասից Մաշ էր եկել Ձաւէն անունով մի երիտասարդ գրծիչ: Եկել էր Նոր Մեխիֆի հետ հայ-էուրոյ համերաշխութեան դաշինք կնքելու: Բանակցութեան վայրը Արտոնքն էր ընտրուած: Ու ճոյն օրը Արտոնք ներկայացաւ հուսթայ բեկը, հետը առած իր մի քանի զոյաւաններին ու բաշ դալամին, որ մեր ներկայացուցիչն էր բեկի մօտ, Գէորգի ժամանակներից:

Ու թարգման արձան Ալուալինջու Սէյսոն, եւ Արտոնքայ Ջընթոն՝ Ձաւէնի եւ հուսթայ բեկի միջեւ:

Նոր Մեխիֆը համաձայնութիւն յայտնեց Ձաւէնի յայտնած բոլոր գաղափարներին: Նա յանձն առաւ ստոր հազար ֆրդերի գումար անցած՝ փոյա-

յինների աջակցութեամբ տապալել սուլթանի կառավարութիւնը Մուշում եւ քրոնքրին ու հայերին տէր դարձնել կացութեամբ:

Ու դաշինք կնքուեց:

Դաշնագրից յետոյ երկու կողմերը ոգիլից ընկելիներով ողջագործեցին իրար եւ մաղթամեքեր արին իրենց համերաշխութեան եւ ծրագրի յաջողութեան համար:

Ու երբ Քալաբու Բուրդը զգաց, որ Ջուէնն ու Ջընթոն լաւ զինովցած էին, թոյլ տուեց, որ անկողին երթան:

Ուրախութիւնից ու զինուց հարբած անկողին մտաւ Սաւու Սաւուին: Սէյտան: Երբ նրանք բնած էին, նոր Մեխիքը կանչեց իր զովամներին, որ երեքին էլ բնած տեղը սպաննեն:

«Ռանչպարնէր», էջ 186

**ԱՐԳԱՎԱՆՔՅԻ ԲԵՆՈՆ**

*Բենոն բանջարանոցի մէջ բաճը ձեռքին հող կը փորէ. ահա Արգավանք կու գան Պիթլիսի կուսակալ Ֆերիքը կամ Թասինը եւ Կուտան Ալայ բեկը. ամբողջ գիւղացիք դիմաւորելու կ'երթան. Բենոն հողը շընէր եւ կը շարունակէ բանջարանոցը փորել: Աւելի կ'իյնայ Բենոյի բացակայութիւնը. կուսակալը նկատողութիւն կ'ընէ եւ Բենոն բաճը ուսին կու գայ կը ներկայանայ հիւրերուն: Կուսակալը հարց կու տայ.*

— Արար աշխարհ հրացան կը վերցնէ, ինչու դու, Բենո, էդ բաճով ես եկեր մեր մօտ:

*Բենո կը պատասխանէ.*

— Փոշա էֆենտի, արար աշխարհի հրացանները մուխքան են էս բաճին. էս բաճն է պատճառն ու ստեղծողը հրացաններու, եւ վերջապէս հրացաններու պատուը էս բաճն է, որ կը թաղէ սեւ հողի տակ:

Գ. հատոր, էջ 55-56

Ջօրանոցների հանդիսաւոր քայմանը Տալարիկ է գալիս Բաղէշի կուսակալը: Բոլոր սատուցիները զարդարուած եւ գէնք ու գրահ կապած՝ շտապում են նրան դիմաւորելու:

Միայն Ֆադէն է բացակայ:

— Որտե՞ղ է Քազաւորի երամանին դիմադրած ըմբատ գիւղացին, — հարցնում է կուսակալը, — գտէ՛ք, քերէ՛ք ինձ մօտ:

Ֆադէն ուտէրը բշտած եւ բախը ուսին սարից իջնելով, համարձակ գալիս, կանգնում է կուսակալի առաջ:

— Արար աշխարհ իմ պատուին գրահ է կապել, դու ինչու՞ ես բախով եկել, — սպառնում է փաշան:

— Արար աշխարհի գէնքն ու գրահը թող դուրսյան էզնին իմ բախի պաշին, փաշա: Էս բախն է պատճառը եւ ստեղծողը բոլոր գէնքերի: Ինչքան էլ թօփ ու թփամեքեր գոռան, վերջը պիտի խոնարհուեն բախի առաջ:

«Ռանչպարնէր», էջ 50



### ԱՐԺԵԶԱՓԱՅԻՆ ԱՆՎԵԹԵԹՈՒԹԻՒՆ - Գ.

Այս խորագրերին տակ, մեր նախորդ երկու նշմարներուն մէջ նիւթ դարձան «Ռանչպարնի» գործին առիթով Խաչիկ Դաշտակցին վերադրուած «սահմանազատումները» եւ «առևտրական կողմնորոշումը»:

Անդամ մը եւս կրկնենք, որ Դաշակցութեան կատարած ֆետայական սիրապարտութեան ու հայ ժողովուրդին, Դաշակցութեան անունով կերտուած պատմութեան ու Հայոց պատմութեան, Դաշակցութեան մթնոլորտին մէջ ծաղկած մշակոյթին եւ հայ մշակոյթին միջեւ սահմանազատումներ տեսնելու մոլորութիւնը ժռելովս իրողութեանց անտեղեակ կամ ներքնապէս անբարոյնական անձերու մօտ միայն, եւ նման դրոշմներուն մէջ ամէնէն փութաջանը քննադատ Սուրէն Ազարեանը չէ, ոչ ալ նման բաներ կուսկուտ աշխուժութիւնը դրամագլուխի վերածած մարդերէն ամէնէն խելացին: Եթէ նման սահմանազատումներու դիւտը ընելու պատճառներ տուած ըլլար Դաշտակցի «Ռանչպարնի» գործը, իրեն կարգ չէին ձգեր միւսները, եւ կամ ինք նոր միայն հանդէս չէր դար, երբ վերապահ երեք տարի առաջ լոյս տեսած է ամապրին մէջ եւ վերջապահութեան կամ տարեդարձային կարգով այդ մասին խօսելու նոր գրքիներ չկան մէջտեղ:

Սուրէն Ազարեանի ուլացած յայտնութիւններուն, «սահմանազատումներուն» ու «կողմնորոշումներուն» ետին կայ մեղի անձանթ գրգռում մը, որուն առիթով խօսք բանալու պատիւը կրնար ձգել աւելի յարմար անձերու, արդէն վերադարձ իր պարկեշտութեան վրայ ինայելով նորի մը բեռը: «Սահմանազատումներէն» ու «կողմնորոշումներէն» տարբեր բնոյթ մը չունի նոյնպէս քննադատին Լրեք ԼՅՆոց դրութեան եզրագրակիչ պարբերութիւնը:

«Այս կողմնորոշման բնական շարունակութիւնն է անչպարնի մեծ-ցորդին ինքնախոսքը Սովետական Հայաստանի հողի վրայ, ուր մարմինն են առնում նրանց պատմական երազանքները»:

Ազարեան կարծես կր խօսի պատմութեան անձանթ մարդոց հետ եւ իրեն ընթերցող ամբողջներ միայն ունի աչքին առջեւ:

Արեւմտեան Հայաստանէն զէպի Արեւելեան Հայաստան գանդուածու-վին քաշկուտուող մեր մնացորդացին բախտին մէջ ի՞նչ դեր կրնար ունենալ առևտրական կողմնորոշումը, որ կարելի ըլլար անչպարնիներուն տեղափոխութիւնը, համարել «այս կողմնորոշման բնական շարունակութիւնը»:

Աւելի ծանրակշիռ է Սովետական Հայաստանի սահմաններուն մէջ սանչպարնիներու մնացորդներուն վերադրուած երազանքի բաժինը՝ «ուր մարմինն են առնում նրանց պատմական երազանքները»:

Տուեալ հերոսներուն ճշմարտութեան հետ որեւէ ազդես ունի՞ արդեօք վերի խօսքը:

Այդ մարդերը, ինչպէս ամէն հայ մարդ, գոհ են հարկաւ, որ մեր ձեռքին տակ գոյութիւն ունի մաս մը Հայաստան, քայց տառով կրնա՞ն մարմինն առնել միթէ՞ սեւէ հայու եւ, մասնաւորաբար, սանչպարնիներու մնացորդներուն պատմական երազանքները:

**Ձեռք կարծեր :**

Ատիկու պիտի նշանակէր Հրաժարիլ պատմութենէն ու պատմական ժա-  
ռանդութիւններէ, տրամադրութիւն մը, որ երբեք չի Համապատասխաներ  
մարդոց այրող ապրումներուն, կարօտներուն ու մասձումներուն :

Շատ չհետանանք գրականութենէն ու բանանք կարգ մը մատեններ :  
Այսօրուան Հայաստանի մէջ ապրած ու ապրող մարդոց պատմական երա-  
զանքներուն մարմին Հայթայթող Սուրէն Աղաբաբեան ի՞նչ նժարներու մէջ  
կը կընէ արդեօք Ակսել Բակունցի «Միրանի փողը» պատմութեան կարօտ  
բաժինը, ի՞նչ կը իւր կու տայ Հրաչեայ Փոլարի «Կարօտ»ին, ո՞ր տրամադրու-  
թեամբ կը գոցէ Սերօ Պանդազեանի «1971 թուական, ամառ» պատմութեան  
կամ ինչպէ՞ս կը դիմադրուէ նորերէն Հրանտ Մաթեոսեանի, Մուշեղ Գալ-  
շտեանի, Ռուբէն Յովսէփեանի, Յովհաննէս Միլքոնեանի, Նորայր Աղալ-  
եանի եւ միւսներուն Մէջ, Սասնոյ, Կարնոյ եւ այլ եղբայրներէն բխած տեն-  
դերը, յիշողութիւնները, ստուարանքները, կարօտները նորէն :

Կարօտ մը ինքնին չի բանկիր եւ բանկած որեւէ կարօտ կ'ենթադրէ տի-  
րօցման տենչ մը : Նոյն որակը ունին նաեւ Աղաբաբեանի մօտ շնչած ու շնչող  
Հայաստանի գրողները, որակը ամբողջական այն Հայուն, որ կը հրճուի Հայ-  
րենիքի վերստեղծուած մասին ի տես եւ դիշեր ու գօր կը ստղնապի խլու-  
ծին ի խնդիր :

Այս երկու ուղբումներով այնչո՞ծ Հերոսներ են նաեւ Պաշտօնի Դաշտենցի  
յես մահու լոյս ընծայուած այս դործին հերոսները, ինչպէս էին կենդանու-  
թեան օրօջ հրատարակուած միւսներուն տիպարները, դէ՞ռ «Խաղաղութան»  
(1956) օրերէն սկսեալ, բոլորն ալ Հայրենիքէ այս կողմէն, բոլորին ալ սրտին  
«էն կողմէ» սաք ապրումը : «Կարող է պատահել, ես մեռած լինեմ ու դուք  
առանց ինձ էն կողմ էրքաք : Իմ փափաքը տարբէ անց հետ : Եօթնականի մի  
պագ ազրիւր կայ Իրիցանում : Իմ փախարէն նրա քրից մի կում խմէք : Գե-  
րեզմանում էլ լինեմ՝ հոգիս կը փառաւորուի» :

Այս իղձը աւելի խորունկ է «Խանչպարներ» գործին մէջ եւ աւելի բա-  
ցորոչ է հերոսներուն գաղափարական նպատակասլացութիւնը :

«Որոշել էր, որ երբ Հայաստանը ապստամբուի, այդ սերմը շաղ տայ  
ազատագրուած Հայաստանի հողի մէջ, առաջին հերքին, ի հարկէ, Մշոյ  
Դաշտում» :

Պաշտօնի Դաշտենցի մտքին եւ իր «Խանչպարներ»ուն մէջ այս ծաւալը  
ունի Հայաստանը եւ ոչ թէ Սուրէն Աղաբաբեանի ընդունած անձուկ սահ-  
մանները :

**Ըստ ուրիշ հերոսի մը .**

«Մախիսների շուրջը մեմք պէտք է ստեղծենք հայկական ուժեղ պետա-  
կանութիւն» :

**Մասիների շուրջը եւ ոչ թէ մէկ կողմին դիմաց :**

Պաշտօնի Դաշտենցի «Խանչպարներ»ը այս մասին եւ միայն այս մասին  
խօսելու թելադրանքներ կը բովանդակէ եւ բնաւ առիթ չի տար մնացորդնե-  
րուն հոգին վերաւորելու՝ սահմանափակ երազանքներ վերադրելով անոնց,  
ինչպէս փորձած է ընել երազանքներով արդէ՛ն յաղեցած քննադատը . . .

— Հնժի հեկայեղափոխական կ'ըսեն: էրանի տարի գոմշի պէս կուսնցի:

2010



Գազափար մը տալու համար այն մասին, թէ Սովետական Հայաստանի մէջ իրապէս ինչ վերափոխման արժանացան ասնկարճերու մնացորդներուն պատմական երազումները, հետագայ էջերուն կու տանք մեզի ծանօթ ֆոնի մը ժայերուն վիճակաւած բախտին վերջին փուլերը. որոնք հարեւ զայնքա բաներու մտօն յնն վկայեր: Ինչպէ՛ս կարելի է պատմական երազումներու մարմնաուրեմար հայրստանայ, երբ պատմաբիւնը, պիտի սեռնէ՛ք ինչ կտէ, բոլորովին տարբեր բան կ'ըսէ. հաստատելով նայն ատեն կարմիր սրամտարութիւններու հետեւումք նշանաւոր ֆետալի Ձայլի կրկնակ սերբողալութիւնն ու անհետ կորուստը, Մօրսէ կարոյի հերթական հալածանք, Փեքարայ ծարոյի եւ Տէր Գոթի Արամին զաւազիր պատմաբիւնը, Մահացի Գրիգորի գոզգոթան եւ միւսներուն կրած հարստատարող վերաւարումները:

Սովետական Հայաստանը չի կրնար հոլարտանայ եւ, մտնումն՝ արդարանայ հայրենեանէր այդ կորիճներուն հանդէպ ցուցարեքած իր շատանութիւններուն մէջ...

### «ՀԱՎԱՅԵՂԱՓՈՒԱԿԱՆ» ԶՈՂՈՆ

Մետեխում մեր խմբին միացրին Սասունցի Չուրն:

Ինչո՞ւ բանտարկել էին Չուրնին: Նա վերադարձել էր, որպէսզի իր կեանքի վերջին տարիները ապրէ իր Հայրենակից բեկորների հետ եւ իր ձերկորող Հայրենիք» Ալադեադի մօտ փլէ էր շունչը:

Շատ յուզուած էր Չուրն, երբ Մետեխ

մտաւ: «Չուր, Չուր» ասելով շրջապատողինք նրան: «Քոզէք, նստիմ հանգստանամ, լաօ», ասաց բարկացուած ձայնով:

Տղաները անկողին փռեցին յատակի վրայ: Նա ծալապատիկ նստեց՝ գլուխը կախ: Առանց խօսք փոխանակելու, սկզբից ծխել, կարծես թէ բոլորի հետ խոսված լինէր: Բուական երկար լռութիւնը

յետոյ, գլուխը բարձրացրեց, իր յոգնած աչքերով մի հայկացի նետեց շրջապատողների վրայ, ձեռքերը տարածեց օդի մէջ եւ, ատամները իրար սեղմած՝ բացականչեց.

— Ընձի հակայեղափոխական կ'ըսեն: Էրտուն տարի դո՞ւշի պէս կ'ուռնեցի:

Աշխատեցինք հանգստացնել նրան, բայց նա խոռոված էր, շարունակեց իր լըռութիւնը:

Մի քանի րոպէից յետոյ, հարց տուինք իրեն.

— Ինչո՞ւ բանտարկեցին քեզ, Պոլո՛:

— Ձր՞մ գինայ, հակայեղափոխական կ'ըսեն:

Հակայեղափոխական բառից Պոլո շատ էր վիրաւորուած: Նրա ըմբոստ հոգին սակնուփրայ էր եղած: Իր մտքի սահմանափակ հորիզոնի մէջ նա չէր կարող մեկնարանել այդ «հակայեղափոխական»ին իմաստը: Իրաւունք ունէր Պոլոն. «էրտուն տարի դո՞ւշի պէս կ'ուռնէ էր» յեղափոխութեան համար:

— Չկրցայ արտասահման կենալ: Ընտեղ օդ ու ջուր չկայ: Մըր օդ ու ջուր ուրիշ ա:

Այո, Պոլոն վերադարձել էր Երկրորդ Սասունի՝ Ալազանդի օդը շնչելու, նրա անուշ ջուրը խմելու, ծայրագատիկ նըստելու եւ խօսելու իր հայրենակիցներին հետ, վերջիւնու անցեալի զէպքերը, Առաքելոց մանքի, զոշախ եւ ձորերի կոխները, վերջիւնու դինակից ընկերներին՝ Անդրանիկին, Սեպուհին, Մուրադին, Մուշեղին, Մօրուք Կարոյին... Եւ այսօր քանի բաւական էր, որ բոլշեւիկները յեղափոխական Պոլոյին «հակայեղափոխական» դարձնէին եւ վիրաւորէին նրա ամենանուիրական զոյցածուները:

— Ձր՞մ ուղի աքսոր երթալ, կ'ուզի՞մ բանտի մէջ մնալ, — ասում էր Պոլոն:

Երբ մեզ Մետեիից փոխադրեցին, Պոլոն մնաց այնտեղ: Դրանից յետոյ, նա ի՞նչ կ'ուռ, եւ չգիտեմ:

ԵԿՈՒՈՐ

(«Եջեր իմ յուշերից», «Հայրենիք» ամսագիր, 1949, Դեկտ.)

## Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ի Թ Շ Ն Ա Մ Ի Ն

1926ին Պոլոն հինգ տարով ուղարկուել էր Տաշքենդ: Այնտեղ նա գրագուռել էր կօշկակարութեամբ, մի քանի ամիս էլ վարսավիր էր եղել, Վերադարձից յետոյ դարձել էր հնակարկատ եւ գիւղացիների կօշիկներն էր նորոգում:

1934ին ընդունուեց կոլտնտեսութեան մէջ, Ամէն առաւուտ Պոլոն եղներին քում էր արօտ, արօտից կալ, կալից դարձեալ արօտ: Ժամանակին կերակրում, ջրում էր եղներին, մաքրում էր նրանց ախոռը եւ ուշ գիշերով վերադառնում էր տուն: Պոլոն արդէն հարուածային եղնարածի անուն էր վաստակել եւ համարում էր շքըջանի լուսազոյն անասնապահներից մէկը: Այնքան նուիրում աշխատող էր, որ երբ

բեմն լուսացնում էր եղների կողքին:

Բայց ահա դրանից մի օր առաջ Պոլոյին տղտուել էին աշխատանքից: Կինը չէր իմանում այդ մասին: Պատճառարանի էին, թէ Պոլոն կոլտնտէր եղներին ծեծում է: Կանչել էին դրասենևակ եւ ուղղակի ասել. «Վաղուանից է՛լ եղնարած չեա», ու գործը յանձնել էին մէկ ուրիշի:

Պոլոն կեանքի անցուղարձը հասկացող մաքր էր եւ դիտէր, թէ ինչը ինչոց է: Մօրուք Կարոն եւ Անդրիկ Պետոն անցել էին Պարսկաստան: Փեթարայ Իսրոն եւ Տէր Բաջի Աջամը հանգչում էին Դաթաշէն գիւղի ձորալանջին: Մօրուք Կարոյի կնոջը եւ երեխաներին արտաքսել էին գիւղից: Օհանի որդիներէից մէկին, որին

Մարթան բերել էր իրենց տուն որպէս տղայ ժառանգ, Մորուքի պատճառով հանել էին դարձնելու և նա զիւղից անյաբ տանուլով, սկսել էր սպրել ուրիշ անուան տակ :

Տազնապի մէջ էին նաև Հին ֆեդայիներ ձրտայան Բարսեղը և Առդայ Ջօրիկը :

Ջուրն դուռն էր, որ իրեն կը ձերբարկային, և կը ձերբարկուին Հենց այդ պիւղիցը : Անս թէ ինչու նախապէս կարգի էր բերել խորջինը և ամէն բոպէ սպասուծ էր, թէ ուր որ է կը գան ետեւից :

Գազտնապահ մարդ էր Ջուրն : Ծիւղայական կեանքը նրան վարժեցրել էր ծածկամտութեան : Այդ էր պատճառը, որ նա շէր ուզում կնոջը բան առել, սակայն կինը զգուծ էր, որ Ջուրն մի կարեւոր ճամբորդութիւն ունի կատարելու :

Մի բան միտքարեկան էր, որ Ջուրն արդէն պատկել էր իր աղջկան : Մնացել էին ինքը, Եադիգամը և փոքրիկ Սարհատը՝ որդիներ :

Թէպէտ ուշ էր, բայց Եադիգամը թունիրը վառեց : Իրիկնաղջիկին հազը պատրաստ էր : Կինը ամուսնու համար թիտել էր նաև մի քանի գաթի :

— Գաթաները դիր խորջինը, իսկ ձուերը փաթաթելը լուաշի մէջ : Այդ չը մոռանաս :— Եադիգամը լուաշին կատարեց ամուսնու պատուէրը : «Մուրեմն բարի ճամբայ է դնայու», — մտածեց կինը և մի ուրախ շող անցու նրա ախրամած դէմքով :

— Տանը սխտը կա՞յ, — յանկարծ հարցրեց Ջուրն :

— Կը ճարուի, — ասաց կինը :

— Մի քանի պճեղ սխտը դիր, մի քիչ էլ տաքեղ :

— Մխտորն ի՞նչի համար է, — մըռուայուեց կինը :

— Քեղ ասուծ եմ՝ դի՛ր :

Եադիգամը բերեց սխտը և շտայեց տաքեղի ետեւից :

Ջուրն սխտը թղթի մէջ փաթաթելով կոխեց տաքնոցի դրպանը : Նա նորից վերցրեց ձեռնափայտը և շուռ ու մուռ տուեց : Մայրը քիչ մաշուած էր : Մի անգամ էլ յենուեց վրան ամբողջ մարմնով

կամենալով փորձել ամբութիւնը, երբ դուրը բացուեց և միանգամից ներս մըտան հինգ զինուած տղամարդ :

Ջուրն խորջինը շալակած դուրս եկաւ :

Կինը չհասցրեց տաքեղ բերել :

Ճանապարհին իմանալով պատահածի մասին, Եադիգամը լուաշտաւ վազեց գիւղատեախի և կոյխողի գրասենեակ յայտնելու, թէ եկել են Ջուրնին տանելու՝ ոգնութեան հասնելու : Գրասենեակից յուսանատ դուրս եկաւ և վաղեց ձրտայան Բարսեղի տուն : Այս Հին հայրուհը Ջուրնի մերձաւոր բարեկամն էր : Այդ օրուայ մի տաշտուկ ալիւրը Եադիգամը փոխարինարար վերցրել էր Բարսեղի տնից : Այդ տանն էր գտնուած նաև Ջուրնի մահուակ Մարհատը :

Մինչ Եադիգամը կը վերադառնար Բարսեղի և իր որդու հետ, իրենց դրան վրայ մի սև ծանր կողպէք էր դրուած՝ կնիքը վրան :

— Վա՛յ, անխիղճներ, Ջուրնի տարան : Գոնէ թողնէին վերջին անգամ իր որդի Սարհատին տեսնէք, — ծղրտաց Եադիգամը՝ անգորութեամբ կախուելով երկաթէ փականից :



Ջուրնին դիւերով ուղիղ վերին թալին տարան :

Շրջկենտրոնի գրեթէ բոլոր ղեկավար աշխատողները ճանաչուծ էին նրան, ու մանք ի պաշտօնէ, իսկ սմանք էլ պարզապէս լուել էին, որ տղայի մի Հին Փիղալի է սպրում իրենց գաւառամասում :

Երբ Ջուրն ներս մտու, գաւառամասի լիտգօրը զգաստ կանգնած էր իր գրասեղանի առաջ, ձախ բառնցքը գրասեղանի անկիւնին սեղմած, աջ ձեռքի մատները խրած դորշ կանաչաւուն վերնաշապիկի տակ, մազոտ բթամատը վերեւից խաղաղընելով պղնձեայ դեղին ճարմանդների հետ : Մառաքիթի կոթը ուռուցիկ գալիֆէի վրայով կախուել էր մինչև ճառար սապոզի ծայրը : Հայեացքը խիստ էր և յօնքերի թուխալը շատ : Կապտերիկ զԸ

խարհը, պսպղուն ուսադիրները և կաշուէ լայնեզր գօտու վրայով կրծքի եւ մէջքի կողմից թեքութեամբ իջնող փոկերը աւելի դաժան երեւոյթ էին աալիս նրա պաշտոնական կեցուածքին :

— Խէր լինի, էս գիշերով ինչո՞ւ էիր էդքան զօրք ուզարկել իմ ետեւից, Հեռախօսով կանչէիր՝ կը դայի բրասօ, — աասց Չոլուն մտերմական շեշտ տալով իր խօսքին եւ խորքինը ձեռնափայտի Հեռալալակից իջեցնելով :

— Երեւի գործ կայ, որ թո կարիքը գիշերով զգացի: Կանչել եմ, որ քեզ մը կը բռնեմ :

— Անունդ Մկրտիչ է, իրաւունք ունես: Է՞, մկրտիք տեսնենք: Ես արդէն մի անգամ մկրտուել եմ Տաշքենդի աւազնեբում: Մէկ անգամ էլ թող թո ձեռքով մտնեմ Յորդանան:

— Բայց էս մկրտութիւնը ծանր է լինելով, իմացիր:

— Մկրտիչ, զուրբան, — դարձեալ նոյն մտերմական շեշտով շարունակեց Չոլուն, — ես գիտեմ, որ դու չես ուզում ինձ կայանաւորել: Մի առա տեսնենք, թէ ևս ի՞նչ մեղք եմ գործել հայր կամ ուսուսի դէմ:

— Հայր կամ ուսուսի դէմ մեղք չես գործել, բայց կոմունիզմի դէմ գործել ես:

— Չորօրինակ ի՞նչ եմ արել, — աասց Չոլուն նստելով մի խորխուռած աթոռի եւ խորքինը կողքին քաշելով:

— Դու ծեծել ես կոլխոզի եզներին:

— Իմ միտ չի գայ, էդ ես Ե՞րբ դարձայ եզ ծեծող: Կամ ո՞վ է տեսել, որ ծեծել եմ: Չէ՞ որ ես զիւղացի եմ, իսկ լըծկանը զիւղացու ախպէրն է:

— Դու զիւղացի չես: Դու ժողովրդի թշնամի ես:

— Ես քառասուն տարի ժողովրդի համար եմ կռուել, Հիմա ես դարձայ ժողովրդի թշնամի, գու՞ք՝ բարեկամ: Մեր կոխը ո՞ւմ դէմ էր, դուրբան. բեկերի ու աղաների դէմ: Խենչալը զարկել էին Հայաստանի մէջքին, ուղտ մէկը, որ մենք ձեռքներս ծալած նստեի՞նք:— Չոլուն աթոռ աւելի մօտ քաշեց, արմուկները դը-

նելով ուզողակի պետի դրասեղանին:— Բա Փեթարայ Իսրոն ժողովրդի թշնամի՞ էր: Խեղճը խուրջինը մէջքը պցած որբ երեխաներ էր հաւաքում աւերակներից, որ չիթիլ անէր Հայաստանի համար: Վերջին որբին խաղ ասելով էր առել մի քրդի ձեռքից: Բա Մօրուք Կարոն ժողովրդի թշնամի՞ էր, որ խեղճին ուղեցրե բռնել, թողեց փախաւ Շէյխ Չիլանի ապստամբների մօտ: Ոչ էլ Արծիւ Պետուն էր թըշնամի: Հիմա էլ ընկել էք իմ ետեւից: Ես արդէն մի քանի անգամ Ղուբն եմ ընկել եւ ձեր Հեղեղից վախեցողը չեմ, բրասօ: Չոլուն կոլխոզի եզներին է ծեծել: Ի՞՞վ կը հաւատայ էդ պոչաւոր ստին, — ցաւալի շեշտով բացականչեց սասունացին և խնդրեց, որ իրեն թոյլ տրուի մի գլանակ փաթաթել:

— Մի հատի իրաւունք կը տամ: Լուբնն ժխտո՞ւմ ես թո յանցանքը:

— Իմ պահած լծկանը միշտ կուշտ է եղել, բրասօ: Եւ եթէ մէկ-երկու թեթեւ հարուած եմ տաւել, չի նշանակում, թէ եզպպահ Չոլուն լծկան ծեծող է: Եզներին ծեծելը մահանա է, զուրբան: Ձեր միտքը ինձ բռնելն էր ու բռնեցիք:

— Աւելորդ մի խօսիր, բայց արա խորը ջինդ, — հրամայեց պետը:

Չոլուն ուսապարկը կողքից վերցնելով դրեց պետի առաջ:

— Մէջը զէնք չկա՞յ:

— Մի յերոն կար՝ արդէն հանեցին:

— Իսկ էս ի՞նչ բան է, բուրբոլին նըման չէ մեր երկրի ապրանքին, — աասց Աւելորդը շարքերի կապոցից դուրս քաշելով արծաթեայ կոճակներով մի ելեկ, որ բաւական մաշուած էր:

— Ի՞նչ անեմ, ախպէր, քուրջն առում է՝ սոխը ինչքան կճպես, էնքան կճեպ կը տայ: Մա Ձեմիլի նուէրն է:

— Ձեմիլն ո՞վ է:

— Խուրթայ քուրդ ցեղապետի կինն էր:

— Վրան սիրահարուած ես եղել:

— Նա էր մեզ վրայ սիրահարուած, բայց մենք կեանքը մոռացած տարուեցինք ազգի ու Հայրենիքի փրկութեան գործով: Մոռացանք թէ՛ սէր, թէ՛ բնութանիք եւ թէ՛ ուրախութիւն: Ամէն բան տը-

ւինք ազգին ու հիմա տակը ի՞նչ մնաց. մի բուռ խաչած ձաւար:

Չուրն ելեկը գրեց խուրջինը եւ դգաց, որ իրեն վերադարձ չկայ դէպի գիւղ: Սեւ-Մկրտիչը սեղմեց ինչ-որ կոճակ: Ներս մտան երկու աշխատակից:

— Ետադ հասցէք քաղաք:

Չուրն խուրջինը շարակեց:

— Ես կ'երթամ, բայց աշխարհը էս-

պէս չի՛ մնայ, դուրբան, — սասց նա չեմքից ետ դառնալով եւ խօսքը ուղղելով պետին, — կը գան աւելի խելօք մարդիկ եւ ձեզ բոլորիդ կը գատեն աշխատուոր մարդու հետ հասցէս անհողճարար վարուելու համար: Արդար կարգ կը լինի աշխարհում: Բայց էդ ժամանակ ո՛չ ես կը լինեմ, ոչ դուք:

ԽԱՉԻՆ ԴԱՇՏԵՆՅ

(«Ռեանչպարմերի կամչք», էջ 461-466)

### ՓԵԹԱՐԱՅ ԻՍՐՈՅԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

1916 թիւն էր: Թուրքերը շարդուած կը հեռանային: Ռուսերը յաղթական կը յառաջանային:

— Ես ու Մանուկ ճիշդ էր. մենք ջարդուածք, մեր գեղակներին եկան օգնութեան, — ըսաւ Իսրոյն եւ քէն ըրաւ թէ՛ ռուսերին եւ թէ՛ անոնց, որոնք ռուսերին կը ծառայէին: Մանուկի, Մուշեղի հետ, ան քաղաքների միութեան պաշտօնեայ գարձաւ:

— Որք հաւաքենք, շիթիլ անենք Հայաստանի համար, — կ'ըսէր եւ խուրջինները լեզուած փոքրիկ մանուկներ կը բերէին օրբանոցներու համար:

Որքեր կը ժողովէին աւերակների եւ քիւրտների մէջէն գրածի կամ գէնքի ուժով:

1917ին, թէեւ յեղափոխութիւն էր, բայց Իսրոյի համար այդ գոռուտիք թախթը փշիլն էր: Ան կրկին նստաւ ձին՝ գէնք ու գրահով: Նախ՝ Մանուկի, յետոյ՝ Մուշեղի օգնականը եղաւ, մասնակցեցաւ բոլոր կռիւններին, Խնուսէն սկսած մինչեւ Ղարաքիլիսէ, անկէ ալ մինչեւ Չանդուզուր:

1918ին Հայաստանի անկախութիւնն էր: Ամէնքը երջանիկ էին: Հայկական խորհրդարան, իշխանութիւն, հայ զօրք: Ժողովուրդը այժմ ուրախութենէն արցունք կը թափէր: Ամէն մէկը իր գործին

կ'երթար, դութանին ու բահին կամ թէ գրիլին ու հետտորութեան: Տխուր էին միայն այս լիոնականները: Անոնք ժողովուած Մանուկի, Մուշեղի եւ այլոց շուրջը, օր մը Իսրոյի հետ միտանն եկան մօտս:

Հարցուցի:

— Իսրո, ջու ըսածն ի՞նչ է:

— Պարոն, մեզ գիւրջայ գտիր: Չես գտնի, գիտես որ մենք կրնանք գտնել գլխացաւանքով: Տաք ու պաղ բաներ դու տեսար մեղի հետ: Մըկա, քանի որ գարթ թական կայ, քանի որ այս երկրում թուրք-թաթար կայ, մեղի համար Հայաստան չկայ: Մենք այս հիւքմաթն ալ պիտի չըճանչնանք, քանի մեր ուխտը գլուխ չէ եկած:

Գացին: Կառավարութիւնը զանոնք աւազակ կը նկատէր, բայց ուժ չունէր զանոնք զսպելու: 500է աւելի հեծեալ ու քանի մը հազար խուժան էին եւ հետեւակ ունէին: Մորեխի նման Հայաստանի բոլոր դաւանները իր ծակ ու ծուկով կը շափէին, թաթար թէ՛ քիւրտ գիւղերը կը դատարկէին եւ զաղթականութեան կուտային, թուրքէն սովորած դասերը թուրքին զլիւռն կը փորձէին եւ ձեռք բերած գոյքը, ուսելիքը սովաններին կը բաշխէին:

Որկնքով շինդունուած այս արդարու-

